




ԶՄԻԱԾԻՆ





ԽՐ

ՏԱՐԻ



ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

ՅԻՆԱՐԱՐ

1985



ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈՋ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ
ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ
(1985 թ. հունվարի 6)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավատացյալ պավակներ Մեր,

Անցնում են տարիներ, դարեր, սերունդներ մահախուճապ հաջորդում են իրար, մարդկային կյանքը մշտապես պեկոծ, հարաջարժ թափալվում է ժամանակի հոսանքով, դեպքեր հարափոփոխ տողանցում են պատմության հորիզոնի վրա, մարդու որոնող ու ստեղծարար միտքը անվերջ թռիչք է առնում դեպի կատարները խիպախ իրագործումների, ու այդ ամենի վերև տիրաբար շողում է լույսը Քրիստոսի, որպես հավերժական ճառագայթում սիրո, արդարության և խաղաղության ոգու, հոգևոր իմաստ ու բարոյական նպատակ հաղորդելով մարդու կյանքին և պատմությանը:

Մեզ՝ քրիստոնյաներիս համար, Աստուծո Որդին, ոչ միայն կատարումն է օրինաց և մարգարեից, այլ նաև գրավականը մարդկանց միջև համերաշխության և բարի կամեցողության, մարդկային կյանքի ներդաշնակ, արդար ու խաղաղ գոյավիճակի:

Ահա թե ինչու ամեն տարի, երբ ավետվում է մեզ բոլորիս, աշխարհին համայն, ծնունդը Աստվածորդու, մենք հուսացյալ սրտերով մի անգամ ևս հիշում ենք այս ճշմարտությունները ուժգին կերպով և ցնծությամբ դիմավորում

մեծ ավետիսը փրկարար ու խաղաղարար՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւնս, ի մարդիկ հաճութիւնս»:

Ամեն Սուրբ Ծննդան ավետիս հոգեկան վերածնունդ է ամեն մի հավատացալի համար, երբ նա դիմավորում է այն հոգեպէս վերանորոգվելու տենչանքով, թողափած իր մարդկային տկարություններն ու անկատարությունները:

Ամեն Սուրբ Ծննդան ավետիս մի հզոր վահան է և զենք հաղթության ընդդէմ չարիքի ու մեղքի:

Ամեն Սուրբ Ծննդան ավետիս գերագույն գրավական է գալիք Հարության, մահվան խափանումով:

Արդ, սիրելի հավատավոր ժողովուրդ, որ ի Հայաստան և որ ի սփյուռք աշխարհի, աղոթքով ու երգով հոգևոր բաց արեք դռները ձեր սրտերի և քաղցրությամբ ընդունեցեք մեծ ավետիսը Քրիստոսի հրաշք Ծննդան:

Քրիստոսի Սուրբ Ծննդան ավետիսը պետք չէ մեզ գտնի անպատրաստ վիճակում: Պարտինք, այո՛, պատրաստ լինել, իմաստուն կոյսերի նման մեր հույսի վառ ճրագներով, հաշվեհարդար կատարելու մեր անցած կյանքի արարքների՝ մեր ընտանեկան կյանքում, մեր համայնական ազգային կյանքում, մեր աշխատանքի վայրում: Անսուտ անկեղծությամբ կշռադատենք մեր ձեռաց գործերը, մեր հայացքը ուղղած դեպի մեր հոգու խորքերը՝ դառնալով մենք մեր անաչառ դատավորը, որպեսզի կարող լինենք ցրվելու մեր գիտակցության մեջ կուտակված անստուգությունները և ջիթությունները, որպեսզի կարող լինենք ձերբազատվելու մեր թերություններից և վատառողջ մղումներից, որպեսզի կարող լինենք տարանջատել մեր կյանքում էականը երկրորդականից, մնայունը անցողականից, որպեսզի կարող լինենք մեր առօրյա սին ու խաբուսիկ խճողումներից դուրս լույս աշխարհ բերել, վեր հանել կյանքի մեծ ճշմարտությունները, ազնիվ իդեալները, մարդուն մարդկային դարձնող իդեալները մարդկության: Չի Քրիստոս պատգամում է մեզ ամենքիս՝ «Արդ, եղբրուք դուք կատարեալք որպէս Հայրն ձեր երկնատր կատարեալ է» (Մատթ. Ե 48), այնքան կատարյալ, որ «լուսատրեւցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէսզի տեսցեն զգործս ձեր բարիս» (Մատթ. Ե 16):

Սիրելի հավատացալներ, ավետարանական այս պատգամների լույսի ներքև հաշվեհարդարը կատարեցեք ձեր անցյալի կյանքի և թեթևացած խղճով դիմավորեցեք ավետիսը Սուրբ Ծննդան որպէս վերածնված էակներ, որպէս «լուսոյ որդիներ», միշտ պատրաստ նվիրվելու բարի ու արդար գործերի կենսագործման ձեր նոր կյանքի ճանապարհին, ձեր անհատական թե՛ ձեր ընկերային կյանքում:

Մեր Մայր Եկեղեցու ու ազգի զավակների համար, բարի ու արդար գործ է նաև մեր նվիրական աղոթքը՝ վասն խաղաղության 1915 թվի Մեծ Եղեռնին զոհված հոգիների, համազգային Եղեռն, որի յոթանասունամյակը մասնավոր հանդիսավորությամբ պիտի ոգեկոչվի այս տարի ապրիլի 24-ին, թե՛ մեր Մայր Հայրենիքում և թե՛ ամբողջ հայ սփյուռքի տարածքի վրա, համահայկական միասնությամբ:

Մեր նահատակաց սուրբ հիշատակի ոգեկոչումը՝ թե՛ սուգի օր է, թե՛ աղոթքի և ուխտի, և թե՛ ազգային միասնության ամրապնդումի, այն պայծառ գիտակցությամբ, որ հայ ժողովուրդը մահվամբ մահը կոխելով, վերջին տասնամյակներին վերածնունդի ու ծաղկումի մի նոր դարաշրջան կերտեց իր մայր հողի վրա, Արարատի փեշերին, կյանք և լույս և հույս բաշխելով նաև աշխարհի ճանապարհների վրա ցրված իր պանդուխտ զավակներին:

Մեր Եկեղեցին ու մեր ժողովուրդը համայն, ու հատկապես հայաստանցի-

ները, Մեծ Եղեռնի յոթանասուներորդ տարեկիցը ոգեկոչելու են խաղաղության ու ապահովության պայմաններում՝ ինքնահաստատ ապգային գիտակցությամբ, հայրենաշեն նոր նվաճումներով, ստեղծարար աշխատանքի նոր լույսերով, նոր երգերով ու նաև նոր հույսերով դեպի առավել պայծառ ու արդար մեր ապագան:

Մեր ապգի մեծ ողբերգությունը ոգեկոչելիս, հեռո՛ւ մեզանից թշնամանքի ոգին կամ մտածումը ծայրահեղ արարքների: Մեր միակ հոգեկան մղումն է՝ աղոթել մեր երկու միլիոն զոհերի հոգիների համար ու արդարություն հայցել, և մաղթել նաև, որ նման ողբերգություններ չկրկնվեն երբեք ոչ մի ապգության կյանքում: Մոռացության տալ անցյալի ողբերգությունները՝ պիտի նշանակեր տկարացնել, մթազնել մարդկության հիշողությունը, պիտի նշանակեր եղծել պատմությունը, պիտի նշանակեր խափանել ճշմարտությունը ու խեղդամահ անել արդարության ձայնը, պիտի նշանակեր ճանապարհի հարթել ապագա նոր աղետների ու ցեղասպան ոճիրների:


Անցյալի ողբերգությունների անաչառ դատաստանը, պատմության տխուր դեպքերի ճշմարտության բացահայտումը, արդարության ձայնի բարձր ու ապատ ջեփորումը,—ահա՛ ամուր հիմքերը մի նոր աշխարհի կառուցման, ուր անխտիր բոլոր ազգերի զավակները պիտի հասնեն այն փրկարար գիտակցության, թե զավակներն են միևնույն Աստծուն, թե քաղաքացիներն են միևնույն մարդկային աշխարհի, միևնույն երկնակամարի տակ և որ բոլորը ունեն միևնույն ճակատագիրը: Մարդու ճակատագիր, ապգությունների ճակատագիր, աշխարհի ճակատագիր, հետ այսու մանավանդ, կապում են մեկ միաձույլ իրողություն, մեկ հրամայական, մեկ ապագա: Այդ գիտակցությամբ միայն, այս աշխարհի մարդիկ պիտի կարողանան միատեղ աղոթել ասելով՝ «Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն Քո, եկեսցէ արքայութիւն Քո, եղիցին կամք Քո որպէս յերկինս և յերկրի»: Այն ժամանակ միայն երկրի վրա պիտի լինի «խաղաղութիւն և հաճութիւն ի մարդիկ», այն ժամանակ միայն մարդիկ, որպես խաղաղարարներ, արժանի պիտի լինեն կոչվելու «որդիք Աստուծոյ»:

Եղբայրացած ապգությունների մեծ ընտանիքում, թող ապատ ու կենսախինդ աճեն և զարգանան մեր վերածնված ժողովուրդն ու մեր ջեն հայրենիքը, հարատև կառուցման ու ծաղկումի ուղիով, միշտ երգ ու լույսով, խաղաղ, երջանիկ:

Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, Սուրբ Ծննդյան մեծ ավետիսով, ողջույն և օրհնություն համայն մեր առաքելական Եկեղեցուն և հավատացյալ ժողովրդյան:

Շնորհավոր Նոր տարի: «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»: Ամեն:





Ե. Տրագյալեան

ԱՄԱՆՈՐՅԱ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

«Նոր տարին, աղբյուրներեն, ակընթաթթ մը՝ ոսկի է, որ կվապե»:

ՍԻԱՄԱՆԹՈՒ

(«ԿԱՂԱՆԴԻ ԻՐԻԿՈՒՆ»)

Եղել է այս ավանդությունը: Եվ ժողովուրդը դարերով հավատացել է այդ ավանդության՝ Նոր տարվա դարձակետային հուսարար դերին:

Հարահոս ժամանակի յուրաքանչյուր մասնատում իմաստավորվում է մարդու ընկալումով: Երբեմն այդ երևույթը կարող է վերաճել ժամանակը կանգնեցնելու տենչի: Ըստ էության մարդու ձգտումը նույնն է. մասնատել ժամանակը կամ կանգնեցնել այն՝ ունի միևնույն իմաստը. շունչ ու դադար առնել՝ գնահատելու կյանքն ու կյանքից սպասումը: Եվ որովհետև ժամանակը կանգնեցնել տրվում է միայն գերագույն հոգեկան կառույց ունեցողներին, ապա ողջ մարդկության համար ժամանակի մասնատումը գալիս է փոխարինելու ժամանակի անշարժացման: Բոլորս հարընթաց վիճակի մեջ ենք՝ վապորդ մարկիկի նման, որի գոյության իմաստն ու նպատակն է՝ հնարավոր արագությամբ հասնել հատել բնագիծը: Բայց մարդը սոսկ վապորդ չէ, և իր հարընթացությունը հաճախ առավել քան իմաստավորվում է այն դադարով, երբ նա ետադարձ հայացքով հակակշռում է անցած ուղին և աչքերը սևեռում հասանելիք հորիզոնին:

Յուրաքանչյուրիս կյանքում ահա այդ դադարի պահն է Նոր տարին, համընդհանուր դադար՝ ինքնավերլուծության և առավել ևս

ինքնանորոգման համար: Եվ այստեղ է, որ Սիամանթոյի խոսքը՝ ժողովրդական ավանդության արձագանքը, պատգամի ուժ է ստանում: **Ոսկին** հույսի այն շիթն է, որ Նոր տարիով **ակնթաթթ մը** թափանցում է անհույսի սիրտը՝ երաշխիք դառնալու, որ Նոր տարին իր հետ նոր բարիք պիտի բերի և, որեմն, վշտի ամոքում, տառապանքի մեղմացում, վերքի բուժում և հոգու ամրություն: Ուժեղ հոգիների համար հույսի այդ շիթը դառնում է նոր ոգևորություն, հավատքի ամրապնդում, հաղթանակի հասնելու վճռակամություն: Նույնիսկ չարը բարի է դառնում **ակնթաթթ մը**, և թերևս հաջորդ պահին այդ չարը սեփական հոգու մերկությունը ծածկի բարու շղարջով, վեհի նկրտումով, որպեսզի, ինչպես ասաց Վեհափառ Հայրապետը Ս. Ծննդյան իր քարոզում «Կարող լինենք մեր առօրյա սին ու խաբուսիկ խճողումներից դուրս լույս աշխարհ բերել, վեր հանել կյանքի մեծ ճշմարտությունները, ականիվ իդեալները»:


Իսկ հավաքականության համար, ազգի ու ժողովրդի համար այդ հույսի շիթը մի ակընթաթթ երապանք է դառնում վաղվա օրվա նկատմամբ՝ ինքնահաստատման, պայծառ գալիքի, նորանոր հոգեմտավոր կառուցումների, նաև հավերժական գոյության:

Ամանորյա դադարի արժեք ունի նաև հիշողությունը՝ անհատի, հավաքականության ու ազգի: Եվ եթե 1985 թվականը մեր ժողովրդի տխրադեպ՝ 1915-ի յոթանասունամյա եղեռնական հիշողության ակնթարթ է, ապա մաղթենք ու հավատանք, որ նույն 1985 թվականին համայն հայ ժողովրդի կենսադբյուրից ոսկի պիտի հոսի, և մեր ժողովուրդը ամուր պիտի կանգնի դեպի համապարփակ երազանքների իրագործում տանող ճանապարհի վրա, «այն պայծառ գիտակցությամբ, որ հայ ժողովուրդը մահվամբ մահը կոխելով, վերջին տասնամյակներին վերածննդի ու ծաղկումի մի նոր դարաշրջ-

ջան կերտեց իր մայր հողի վրա, Արարատի փեջերին, կյանք և լույս և հույս բաշխելով նաև աշխարհի ճանապարհների վրա ցրված իր պանդուխտ պավակներին», ընդգծեց Վեհափառ Հայրապետը իր ոգեշունչ քարոզում: Թող օրավուր ծաղկեն և բարգավաճեն Հայոց Հայրենիքն ու Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ իր բազմադարյան ավանդություններով ու նվիրականությամբ, որպես ժայռակուտ սյուներ հայ ժողովրդի պայծառ գալիքի:

«Մեն մի տարի իր առաջին արևին հետ՝ իր բարիքը կբերե» (Սիամանթո):





ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Վեհափառ Հայրապետի նախագահությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդը 1985 թվականի հունվարի 11-ի իր նիստում, քննության ամենելով Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի նոր խմբագրի նշանակման հարցը, որոշեց սույն թվականի հունվարի մեկից հիշյալ ամսագրի պատասխանատու խմբագիր նշանակել բանասիրական գիտությունների թեկնածու, հոգևոր ճեմարանի դասախոս պրն. ԵՐՎԱՆԴ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ:



Քույր Եկեղեցիներ



ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ
ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ
ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հռոմեական Կաթողիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ (Հռոմ),
Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԵՄԵՏՐԻՈՍԻՆ (Ստամբուլ),
Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԻՄԵՆԻՆ (Մոսկվա),
Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի Հունաց Ուղղափառ Եկեղեցու
Պատրիարք, Նորին Սրբություն ՆԻԿՈՂԱՅՈՍ Զ-ԻՆ (Ալեքսանդրիա),
Երուսաղեմի Հունաց Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԻՈԴՈՐՈՍԻՆ (Երուսաղեմ),
Ղաթի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԸՆՈՒԴԱ Գ-ԻՆ (Կահիրե),
Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲԲԱ ԹԵՔԼԵ ՀԱՅՄԱՆՈԹԻՆ (Ադիս Աբեբա),
Հնդկաստանի և Արևելքի Մալաբար Եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն,
ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ Ա-ԻՆ (Բոթալամ),
Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն
ԻԼԻԱ Բ-ԻՆ (Թբիլիսի),

Ռումին Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԺՈՒՍՏԻՆԻՆ (Բուխարեստ),
Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ՄԱՔՍԻՄԻՆ (Սոֆիա),
Անտիոքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱՔԶԱ Ա ԻՎԱՍԻՆ (Դամասկոս),
Անտիոքի և համայն Արևելքի Հույն Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին
Սրբություն ՄԱՔՍԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄԻՆ (Դամասկոս),
Անտիոքի Ասորի Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՅԵՔ Բ-ԻՆ (Բեյրութ),
Անտիոքի և համայն Արևելքի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք,
Նորին Սրբություն ԻԳՆԱՏԻՈՍ Դ-ԻՆ (Դամասկոս),
Քենթրբերիի Արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և
միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՌՈԲԵՐՏ ՈՒՆՍԻՆ (Լոնդոն),
Աթենքի և համայն Հելլադայի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ՍԵՐԱՖԻՄԻՆ (Աթենք),
Սերբիայի և համայն Հարավսլավիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԳԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),
Վարշավայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին
Գերաշնորհություն ՎԱՍԻԼԻՆ (Վարշավա),
Պրագայի և համայն Զեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին
Գերաշնորհություն ԴՈՐՈՖԵՅԻՆ (Պրագա),
Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ԽՐԻՍՏՈՍՏՈՍԻՆ (Նիկոպիա),
Անտիոքի Մարոնիտ Պատրիարք, Նորին Ամենապատվություն
ԱՆՏՈՒԱՆ ՊԻԵՐ ԽՈՐԵՇԻՆ (Կերկե),
Մարսելի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ
ՌՈԺԵ ԷԶԵԳԱՐԱՅԻՆ (Մարսել),
Վիեննայի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ
ՖՐԱՆՑ ՔՅՈՆՆԻԳԻՆ (Վիեննա),
Քրիստոնեական Միության Քարտուղարության նախագահ, Նորին
Ամենապատվություն կարդինալ
Ժ. Գ. Մ. ՎԻԼԼԵԲՐԱՆԴՍԻՆ (Վատիկան),
Փարիսի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
ԺԱՆ ՄԱՐԻ ԼՅՈՒՍԻԺԵՆ (Փարիս),
Լիոնի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ
ԱԼԲԵՐ ԴԵԿՈՒՐՏՐԵՆ (Լիոն),
Լատվիական ՍՍՀ Ավետարանական-Լուսեռական Եկեղեցու Արքեպիսկոպոս,
Նորին Գերազանցություն ՅԱՆԻՍ ՄԱՏՈՒԼԻՍԻՆ (Ռիգա),
Էստոնական ՍՍՀ Ավետարանական-Լուսեռական Եկեղեցու Արքեպիսկոպոս,
Նորին Գերազանցություն ԷԴԳԱՐ ԽԱՐՔԻՆ (Տալլին),
Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ
ԻԳՆԱՏԻՈՍ ՄԱՆՉԻՆԻՆ (Երուսաղեմ),
Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի նախագահ,
Նորին Սրբապետություն ԿԱՐՈԼԻ ՏՈԹԻՆ (Պրագա),
Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար
դոկտ. ԷՄԻԼԻՈ ԿԱՍՏՐՈՅԻՆ (Ժնև),
Մխիթարյան ուխտին (Վենետիկ),

Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապաժառ Հայր

ԳՐԻԳՈՐԻՍ վարդապետ ՄԱՆՅԱՆԻՆ (Վիեննա),

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»:

Աստուծո ռդորմությամբ երջանկությունը ունենք նաև այս տարվա լուսաբացին Սուրբ Էջմիածնից Ձեզ և ձեր պատմական Եկեղեցուն բերելու ավետիսը Քրիստոսի հրաշալի Ծննդյան, Մեր սրտից բխած ամենաբարի մաղթանքներով, որ երկնային շնորհները առատապես բաշխվեն ձեր բոլոր հոգևոր սպասավորներին և համայն ձեր հավատացյալ ժողովրդին, ի շինություն և ի լուսավորումն նրանց հոգևոր կյանքի:

Մեծ ավետիսը հրաշք Ծննդյան, թող լինի նաև երկնային պատգամ և կոչ փրկարար՝ վասն աշխարհի խաղաղության, վասն հաճության ի մարդիկ և վասն խաղաղ գոյակցության ապագությունների ու պետությունների:

Ձի բարին Աստված այնքան սիրեց մարդկանց, որ իր միածին Որդին առաքեց աշխարհ, հաստատելու համար թագավորությունը սիրո և խաղաղության:

Սուրբ Ծննդյան ավետիսով ընդունեցեք նաև Մեր եղբայրական սիրո հարգալից ողջույնը և մաղթանքը, որ միշտ քաջառողջ և Սուրբ Հոգու եռանդով լի, դեռևս երկար տարիներ լույս և հույս ներշնչեք ձեր Եկեղեցուն ու համայն աշխարհին, որ մեր օրերին կանգնած է կործանարար վտանգների առջև:

Փառք և օրհնություն՝ սրբարար Ծննդյան Տեառն մերո Հիսուսի Քրիստոսի. ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ


Ա. Էջմիածին

*
* *

Ի պատասխան Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Ամանորի և Փրկչի հրաշափառ Սուրբ Ծննդյան շնորհավորական գրությունների, ստացվել են քույր Եկեղեցիների հոգևոր պետերի և կրոնական այլ համայնքների ու կապակերպությունների ղեկավարների կողմից այդ առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական սիրո, եղբայրության ու համագործակցության ոգին քույր Եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների և կապակերպությունների միջև:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ
ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ
ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ
ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»:

Աստուծո ռդորմությամբ երջանկությունը ունենք նաև այս տարվա լուսաբացին Սուրբ Էջմիածնից Ձեզ և ձեր եկեղեցիներին բերելու ավետիսը Քրիստոսի հրաշալի Ծննդյան Մեր սրտից բխած ամենաբարի մաղթանքներով:

Սուրբ Ծննդյան կենարար շնորհները թող առատապես բաշխվեն ձեր հոգևոր սպասավորներին և համայն հավատացյալ ժողովրդին, ի շինություն և ի լուսավորումն նրանց հոգևոր ու համայնքային կյանքի:

Մեծ ավետիսը հրաշք Ծննդյան թող լինի նաև երկնային պատգամ և կոչ փրկարար՝ վասն աշխարհի խաղաղության, վասն հաճության ի մարդիկ և վասն խաղաղ գոյակցության ապգությունների ու պետությունների:

Ձի բարին Աստված այնքան սիրեց մարդկանց, որ իր միածին Որդին առաքեց աշխարհ, հաստատելու համար թագավորությունը սիրո և խաղաղության:

Սուրբ Ծննդյան ավետիսով, ընդունեցեք Մեր սիրո ռդջույնը և մաղթանքը, որ տակավին արևշատ բազում տարիներ շարունակեք Ձեր հոգևոր առաքելությունը մեր Մայր Եկեղեցու անդաստանի մեջ՝ միշտ Սուրբ Հոգով ներշնչված:

Փառք և օրհնություն՝ սրբարար Ծննդյան Տեառն մերո Հիսուսի Քրիստոսի. ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից պագսմունքներով պեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ապգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց պանպան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ
ԲԱՐՁՐԱՍՏԻԾԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ
ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ ՆՈՐ ՏԱՐՎԱ ԱՌԹԻՎ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՀԱՐԳԱՐԺԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԲԿԵՆ ՍԱՐԿԻՍՈՎԻՆ

Երևան

Հանուն Հայ Եկեղեցու և հավատացյալ մեր ժողովրդի, ուրախ սրտով ջնորհավորում ենք Ձեր Նոր տարին և բերում Մեր բարի մաղթանքները Ձեր արևջատության ու Ձեր հայրենանվեր ծրագրերի լիակատար կենսագործման համար:

Մենք սրտեռանդ աղոթում ենք, որ աշխարհում ավելի ու ավելի ամրապնդվի խաղաղությունը և ջինարար գործակցությունը բոլոր պետությունների միջև՝ հերջանկություն համայն մարդկության, հերջանկություն նաև մեր վերածնված ժողովրդի ու ծաղկյալ մայր հայրենիքի եղբայրական հանրապետությունների մեծ ընտանիքում:

Հնորիավոր Նոր տարի:

ՎԱՋԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՀԱՐԳԱՐԺԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Երևան

Նոր տարվա լուսաբացին Սուրբ Էջմիածնից Ձեզ ենք բերում Մեր ջերմագին մաղթանքը, որ միշտ քաջամոռջ ու եռանդաշատ շարունակեք Ձեր հայրենաշեն առաքելությունը Ձեզ հատուկ իմաստությամբ ու նվիրումով:

Մեր մայր երկրի ու ժողովրդի համար նոր տարին թող լինի հարատև վերելքի ու ծաղկման տարի աշխարհի խաղաղության պայմաներում:

Շնորհավոր Նոր տարի:

ՎԱԶԳԵՆ Ա

**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Ս. Էջմիածին

**ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՄԵԾԱՀԱՐԳ ՆԱԽԱԳԱՀ
ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ԽԱՐԶԵՎԻՆ**

Մոսկվա

Հանուն Հայ Առաքելական Եկեղեցու Մեր ամբողջ հոգով մի անգամ ևս ջերմորեն աղոթում ենք, որ նոր տարին մարդկային աշխարհին բերի խաղաղություն և ջինարար գործակցություն բոլոր մեծ ու փոքր ժողովուրդների միջև ու նաև մշտապես վերելք և ծաղկում սովետական եղբայր ապգությունների մեծ ընտանիքին, հերջանկություն նաև հայ ժողովրդի պավակների, որ ի Հայաստան և որ ի սփյուռք աշխարհի:

Այս ուրախ առթիվ մաղթում ենք Ձեզ լիակատար քաջամոռջություն և իրազործում Ձեր բոլոր հայրենանվեր ծրագրերի:

Շնորհավոր Նոր տարի:

ՎԱԶԳԵՆ Ա

**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Ս. Էջմիածին

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՐԳԱՐԺԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՍՐԱԹՅԱՆԻՆ**

Երևան

Ուրախ սրտով ջնորհավորում ենք Ձեզ մեր Մայր Եկեղեցու անունով և մաղթում, որ նոր տարին բերի Ձեզ լիակատար առողջություն ու Ձեր բոլոր հայրենանվեր ցանկությունների իրականացում:

Մեր աղոթքն է նաև, որպեսզի նոր տարին լինի խաղաղ գոյակցության տարի աշխարհի բոլոր մեծ ու փոքր պետությունների միջև, որ տևական աղոթքն է մեր եկեղեցիների և սուրբ սպասումը բոլոր ազնիվ մարդկանց ու համայն մարդկության:

Շնորհավոր Նոր տարի:

ՎԱԶԳԵՆ Ա

**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Ս. Էջմիածին

**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ**

Ս. Էջմիածին

Ընդունեցեք իմ շնորհակալությունը Նոր տարվա առթիվ Ձեր շնորհավորանքի և բարի ցանկությունների համար: Իմ կողմից ես ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ Նոր տարվա առթիվ:

Թող 1985 թվականը մեր հայրենիքի համար լինի հետագա ծաղկման, բարգավաճման ու երջանկության տարի:

Թող հաղթանակի բանականությունը և 1985 թվականը լինի կայուն խաղաղության տարի: Ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն և մեծ հաջողություններ խաղաղության, ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդման համար Ձեր ազնիվ գործունեության մեջ:

ԲԱԲԿԵՆ ՍԱՐԿԻՍՈՎ

ՀՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Երևան

**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ**

Ս. Էջմիածին

Ընդունեցեք իմ ջերմագին շնորհավորանքները Նոր՝ 1985 տարվա առթիվ և ամենայն բարի մաղթանքներ՝ քաջառողջություն, բարօրություն և նորանոր հաջողություններ Ձեր հայրենասիրական, խաղաղասիրական գործունեության:

Թող նոր տարին լինի մեր սովետական հայրենիքի հետագա բարգավաճման և խաղաղության տարի:

Հարգանքներով՝

ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Երևան

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Սրտանց շնորհավորում եմ Ձեզ Նոր տարվա առթիվ: Ցանկանում եմ քաջառողջություն, մեծ հաջողություններ Ձեր խաղաղասիրական գործունեության մեջ:

Անկեղծ հարգանքներով՝

ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ԽԱՐԶԵՎ

ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Մոսկվա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Նոր՝ 1985 թվականի առթիվ ընդունեցեք մեր ջերմագին շնորհավորանքները քաջառողջության, երջանկության լավագույն մաղթանքները: Ցանկանում ենք Ձեզ նորանոր հաջողություններ Ձեր հայրենասիրական գործունեությունում: Թող նոր տարին լինի խաղաղության, սովետական հայրենիքի բարգավաճման, ժողովուրդների բարեկամության տարի:


ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՍՐԱԹՅԱՆ

ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ, ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Երևան






ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ

Նորին Սրբություն Ս. Տ. Վապգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը Նոր տարվա առթիվ այցելություն տվեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ տիար Ֆ. Սարգսյանին հունվարի 14-ին, առավոտյան ժամը 10-ին:

Վեհափառ Հայրապետի և մեծահարգ նախագահի միջև տեղի ունեցավ ջերմ պրույց՝ ամանորյա փոխադարձ բարեմաղթություններով:

Ընդունելությանը ներկա էին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի գործերի կառավարիչ տիար Հրաչիկ Վարդանյանը և ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալներ տիար Անդրանիկ Հասրաթյանը և տիար Ռաֆիկ Զարգարյանը:





ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Զմռան մշուշաքողն է իջել Արարատյան աշխարհին և ջուրջբոլոր վարդարել արծաթյա եղյամով: Արարիչն Աստված վարդարել է ամեն ինչ՝ Իր Որդու և մարդկության Փրկչի ծննդյան տոնը ջբեղության մեջ տոնելու համար:

Լույս է ճառագում Միածնաէջ տաճարի Իջման ս. սեղանից, լույսեր, որոնք բռնկվել են Աստվածորդու հրաշափառ Աջից և լուսավորում են մինչև այսօր՝ ջերմացնելով, հույսով ու մխիթարությամբ լցնելով հավատացյալների հոգիները: Մարդիկ խումբ-խումբ առաջնորդվում են Մայր եկեղեցի՝ իրենց աղոթքները միացնելու օրվա խորհուրդին:

Հունվարի 5-ին, շաբաթ.—Ճրագալույց Ծննդեան և Աստուածայայտութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Երեկոյան ժամը 17-ին տեղի են ունենում «ձաջու» և «Երեկոյան» ժամերգությունները: Սաղմոսերգու դպիրների երգեցողության հետ հնչում են տաճարի զանգերը: Զանգակների դողանջների ներքո եկեղեցական թափորը Վեհափառ Հայրապետին Վեհարանից առաջնորդում է դեպի Մայր տաճար:

Այնուհետև ընթերցվում են «Ծննդոց» գրքից որոշ հատվածներ, և Ավագ խորանից դպիրներն ընթերցում են Դանիելի մարգարեության «Երից մանկանց» նվիրված հատվածը:

Բացվում է վարագույրը, և դպրաց դասը ի լուր ամենքի ավետում է Փրկչի հրաշափառ ծննդյան ավետիսը. «Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Օրվա պատարագիչն է Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոպապայանը:

Հոգեպարար արարողությունը խաղաղության և փրկության ավետումն էր հանդիսանում մարդկության:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Հունվարի 6-ին, կիրակի.—Տօն Ծննդեան և Աստուածայայտութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Առավոտյան ժամերգությունից հետո Մայր տաճարում, ժամը 11-ին, սկսվում է հանդիսավոր պատարագը:

«Հրաշափառ» շարականի երգեցողության ներքո Վեհափառ Հայրապետը մտնում է եկեղեցի՝ եպիսկոպոսների, վարդապետների, քահանաների և սարկավազների ողնկցությամբ:

Թափորը հանդիսավորությամբ բարձրանում է Ավագ խորան, որտեղից Ս. Ծննդյան պատարագ է մատուցում Նորին Սրբություն Ամենայն Հայոց Հայրապետը: Ս. պատարագի ընթացքում ս. սեղանին և Վեհափառ Հայրապետին սպասարկում են Վրաստանի Հայոց թեմի առաջնորդ Ս. Գևորգ եպս. Սեբաղարյանը, Ս. Հայկապոն վարդապետ Նաշարյանը, Ս. Շնորհք արքեպ. Բաղդասարյանը և սարկավագաց դասը:

Սփյուռքից և մայր հայրենիքի տարբեր վայրերից Ս. Էջմիածին ուխտի են եկել բազմաթիվ հավատացյալներ:

Ս. պատարագին ներկա են ՀՍՍՀ Միևնաբերության խորհրդին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ տիար Ա. Հասրաթյանը, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամները և հյուրաբար Մայր Աթոռում գտնվող Ֆրանսիացի հայագետ գիտնականներ տեր և տիկին Ժան-Միշել և Նիկոլ Թիերինները:

Նորից հնչում է ծննդյան մեծ ավետիսը. «Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»: Եվ հոգու խաղաղությամբ ու բերկրանքով լի աչքերով Վեհափառ Հայրապետը ս. սեղանից ժողովրդին է փոխանցում կենսաբեր այդ ավետիսը և մաղթում ամենքին, այնքան ցանկալի, երկնային խաղաղությունը:

«Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի

ոգեշունչ և իմաստալից քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը (տես էջ 3):

Հավարտ ս. պատարագի, պատարագիչ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է Զրօրհնէքի հանդիսավոր արարողությունը: «Ով պարմանալի» տաղի երգեցողությունից հետո մեռնականից կաթիլ-կաթիլ սրբալույս մեռնն ընկնում է ջրի մէջ: Տաղերգուն ձայնակցում է երգեցողությանը ավելի հաստատելով օրվա խորհուրդը. «Այսօր արևն արդարութեան, երևեցաւ ի մէջ մարդկան»: Եվ կարծես այդ պահին աշխարհի Փրկիչը կանգնած Հորդանան գետում ստանում է երկնային մկրտությունը ձեռամբ Հովհաննես Մկրտչի:

«Խորհուրդ մեծ եւ սքանչելի, որ յայսմ արուր յայտնեցաւ,

Հովիւքն երգեն ընդ հրեշտակս տան առե-տիս աշխարհի»:

Ոսկեդարյան այս շարականը երգելով եկեղեցական թափորն առաջնորդվում է Վեհարան:

Վեհարանում Հայոց Հայրապետը սիրո և գոհության իր օրհնություններն է տալիս Մայր Աթոռի միաբանությանը, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամներին և Մայրավանքի պաշտոնեականները:

Վերջում տեղի է ունենում հյուրասիրություն, ուր փոխանակվում են Նոր տարվա և Մուրբ Ծննդյան մաղթանքներ: Հյուրասիրությանը ներկա են գտնվում պաշտոնական անձինք և հյուրաբար Մայր Աթոռում գտնվող Ֆրանսիացի հայագետ գիտնականներ տեր և տիկին Ժան-Միշել և Նիկոլ Թիերինները:





ԱՄԱՆՈՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Անհունության գիրքը սուվեց 1984 թվականը:

Սովետական Հայաստանի ժողովուրդը՝ հպարտ իր աշխատանքային նորանոր սլոգանագործություններով ու նվաճումներով, ինքնավստահ թևակոխեց նոր տարին:

Մարդիկ, ամեն անգամ, երբ հրաժեշտ են տալիս ընթացիկ տարվան ու ողջունում նորը, սովորություն ունեն գեթ մի պահ խորհրդածել անցնող ժամանակի և կյանքի մասին, հանրագումարի են բերում իրենց երապանքներն ու հույսերը, ոգևորվում կյանքում ձեռք բերած հաջողություններից և տխրում կրած հուսախաբություններից:

Նոր տարի:

Երկրագնդի բոլոր անկյուններում, բոլոր ժողովուրդները հավաքված Ամանորի ավանդական սեղանների շուրջ, նոր երապանքներով և լավատեսորեն են դիմավորում նոր տարին:

Եվ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությունը հավաքված Մայրավանքի սեղանատանը՝ Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ նույն հոգևոր տրամադրությամբ ու ուրախությամբ դիմավորում են նոր՝ 1985 տարին:

Միաբանության հետ Նոր տարվա լիառատ սեղանների շուրջ նստած են Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայրավանքի պաշտոնեությունը, հոգևոր ձեմարանի դասախոսական կապը և ուսանողությունը:

Սկսվում է Նոր տարվա ուրախ երեկոն: Տեղական աղոթքից հետո, Նորին Սրբություն Վեհափառ Հայրապետը օրհնում է

բարիքներով լեցուն տոնական սեղանը: Այնուհետև երեկոյի բացման և առաջին շնորհավորական խոսքով հանդես է գալիս հոգևոր ձեմարանի քարտուղար Տ. Հուսիկ քին. Լապարյանը: Տ. Հուսիկ քահանան իր խոսքի սկզբում ամանորյա խորհրդածություններ անելուց հետո նշում է, որ անցնող 1984 թվականը հոգևոր ձեմարանի համար եղել է գոհացուցիչ աշխատանքների տարի և այդ է պատճառը, որ «հոգևոր ձեմարանի տեսչությունը և դասախոսական կապը, ինչպես նաև ուսանողությունը մեծ հույսերով և նոր ավյունով են սպասում գալիք տարվան»: Շարունակելով իր խոսքը, տեղի հայրը տեսչության անունից շնորհակալական խոսք է ասում Հայոց Հայրապետին և նշում, «որ Վեհափառ Հայրապետի հոգատարության շնորհիվ հուրախություն ձեմարանի տեսչության և ուսանողության, ավարտվեցին հոգեվոր ձեմարանի ընդարձակման աշխատանքները: Ինչ խոսք, դա ավելի կնպաստի արդյունավետ դարձնելու ուսուցման աշխատանքները»:

Խոսքի վերջում Տ. Հուսիկ քահանան ասաց. «Վեհափառ Տեղ, հոգևոր ձեմարանի գործունեության 40 տարիների մեծագույն մասը՝ 28 տարին, ձեմարանը գտնվել է Չերդ Սրբության ուղադրության կենտրոնում: Եվ Չերդ Սրբության առաջարկություններն ու խորհուրդները ձեմարանի բարօրության համար միշտ եղել և մնում են տեսչության գործունեության ամենակարևոր ուղենիշը: Չերդ Սրբության նվիրվածությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, հայոց հայրենիքին և համայն

հայ ժողովրդին լավագույն օրինակն է թե՛ տեսչության և թե՛ ուսանողության համար:

Այս ուրախալի պահին, Վեհափառ Տեր, թույլ տվե՛ք հանուն հոգևոր ձեմարանի տեսչության, դասախոսական կապի և ուսանողության շնորհավորել Ձեր Նոր տարին:

Տեր հայրը առաջարկում է բաժակ բարձրացնել Նորին Սրբության կյանքի առողջության, արևշատության համար:

Հնչում է Հայրապետական մաղթերգը:

Փոքր դադարից հետո սկսվում է երեկոյի գեղարվեստական մասը: Հայ ժողովրդի անմահ բանաստեղծ Պարույր Սևակի «Նոր տարի» գեղեցիկ բանաստեղծության արտասանությամբ ելույթ է ունենում Գ լսարանի ուսանող Գևորգ Աջապահյանը: Որից հետո ձեմարանի սաների կատարմամբ հնչում է «Կենաց երգը»:

Այս անգամ միաբանության անունից Նոր տարվա շնորհավորական խոսք է ասում Մայր Աթոռում ուխտավորաբար գտնվող Տ. Աբել արքեպիսկոպոս Օղտոյանը: Հայր սուրբը իր խոսքն սկսում է ժամանակի մասին գեղեցիկ խորհրդածությամբ՝ մեջ բերելով տարբեր ժամանակաշրջանների մտածողների սահմանումները ժամանակի մասին: Վերջում հայր սուրբը միաբանության անունից շնորհավորում է Վեհափառ Հայրապետի Նոր տարին և ցանկանում Նրան քաջառողջություն ու նորանոր հաջողություններ իր եկեղեցաշեն և ազգանվեր գործունեության մեջ: Հայր Աբելի շնորհավորական խոսքը իր լրումին է հասցնում Տ. Ասողիկ արքեպիսկոպոսականը իր նոր գրած «Հայր մեր» բանաստեղծության արտասանությամբ: Այնուհետև (ձեմարանի սաների կատարմամբ հնչում է «Սանտա Լուչիա» սրտառու և հոգեզմայլ երգը, որից հետո Վ. Թեքեյանի «Աղոթք վաղվա սեմին առջև» բանաստեղծության արտասանությամբ հանդես է գալիս Գ լսարանի ուսանող Վազգեն Բերբերյանը:

Հոգևոր ձեմարանի դասախոսական կապի անունից Նոր տարվա շնորհավորանքի խոսք է ասում ձեմարանի հոգեբանության և տրամաբանության դասախոս Երվանդ Գրիգորյանը: Նա դասախոսական կապի անունից շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին նշում է. «Տարեմուտի երեկոն ժամանակի մասին խոհեք և ապրումներ է ծնում: Ճանապարհում ենք 1984 թվականը և սպասում նոր տարվան: Իրականում ժամանակալին այս ստորաբաժանումը պայմանական է և ամեն մի մարդու համար ունի մի խորհուրդ ու խոր նշանակություն: Ամեն ինչ իր ծնունդով իր մեջ պարունակում է իր ընթացքը և հետագա վախճանը: Մարդն էլ՝ հավանաբար ժամանակի մեջ, ինչպես ժամանակի ամեն մի պահ, ամեն մի միավոր՝

անկրկնելի է յուրովի, և եթե նա ոչ մի հատկանիշով չի իմաստավորվում, ապա իր իսկ անկրկնելիությամբ իմաստավոր է և բովանդակալից: Թերևս հենց դրանով էլ մարդը շատ սիրելի է և արժեքավոր:

Իմ մեծագույն ցանկությունն է, որ կարողանա՞ք այս սահմանափակ տարիները իմաստավորել ինքնակատարելագործումով, ինչպես նաև ազգանվեր և հայրենանվեր գործերով:

Թույլ տվե՛ք ևս մի անգամ իմ պաշտոնակիցների անունից շնորհակալություն հայտնել Ձեզ, Վեհափառ Տեր, շնորհավորել Ձեր Նոր տարին, մաղթել քաջառողջություն, երկար տարիների կյանք և հաջողություն 1985 թվականի բոլոր նախաձեռնություններում»:

Հայրենի բանաստեղծ Վաչագան Հովհաննիսյանի «Նոր տարվա ջեմին» ոգեշունչ բանաստեղծության գեղեցիկ կատարումով ելույթ է ունենում Գ լսարանի ուսանող Ռաֆիկ Խախանյանը: Արտասանությունից հետո սեղանատունը լցվում է ծափահարությամբ և շնորհավորանքներով՝ ուղղված երեկոյի ներկա հարգարժան գրողին:

Ի դիմաց հոգևոր ձեմարանի ուսանողության, շնորհավորական իր խոսքն է կարդում Ե լսարանի ուսանող Սամվել սրկ. Կճոյանը: Բարեջնորի սարկավազը խոսքի սկզբում խորհրդածություն է անում կյանքի և մարդու բարոյական հատկանիշների մասին՝ նշելով, «որ կյանքի տևական արժեքը մարդու բարոյական բնության մեջ է, հոգու ազնվացումն ու սրբացումն է, որը հնարավորություն է տալիս մարդուն լրջորեն անդրադառնալու իր կատարած գործերին»: Վերջացնելով իր խոսքը Սամվել սարկավազը խոսում է. «Մենք ձեմարանցիներս, որպես մի կաթիլ յուղ Սուրբ Լուսավորչի կանթեղի մեջ, որ դարեր շարունակ լուսավորել է մեր նախնիների փոթորկալի ճանապարհները, պետք է անենք ամեն բան, որպեսզի Լուսավորչի կանթեղի լույսը էլ ավելի պայծառ լուսավորի Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին»:

Այնուհետև Գ լսարանի ուսանող Գևորգ Գյուլգյուլյանը արտասանում է Դանիել Վարուժանի «Անդաստան» բանաստեղծությունը: Իսկ կադանդեքերի ընթերցումը ավելի է շիկացնում երեկոյի ուրախ մթնոլորտը: Այդ հաճելի պահին բացվում են սեղանատան դռները, ու ներս է մտնում Ձմեռ պապը՝ նվերներով լեցուն պարկը շալակին: Նա հեռուներից է գալիս, գալիս է շնորհավորելու մեր բազմադարյան Եկեղեցու Նոր տարին, նոր հաջողություններ մաղթելու վերածնված հայ ժողովրդին և նրա հոգևոր սպասավորներին: Ձմեռ պապը սկսում է Նոր տարվա նվերների վիճակահանությունը:

Նոր տարվա երեկոն մոտենում է ավարտին: Տ. Ներսես եպս. Պոպապայանը հրավիրում է Վեհափառ Հայրապետին տալու օրհնության իր խոսքը:

«Աստուծո նախախնամությամբ երկրագունդը մի անգամ ևս արևի շուրջ մի շրջան կատարեց: Մի տարի ևս անցավ և մենք կանգնած ենք նոր տարվա շեմին: Այս պահը բոլորի համար ուրախության օր է: Բայց երբեմն ոմանք շեղվում են այս ընդհանուր կանոնից: Դրանցից մեկը ես եմ: Վաղուց ի վեր, ես Նոր տարվա այս պահին անհասկանալի և անբացատրելի տխրության պագում եմ ունենում: Եվ ինձ թվում է, թե այսօր, այս գիշեր, ոչ թե պետք է ուրախանամ և խոսեմ, այլ պետք է երապեմ: Այսպիսի հոգեկան վիճակների մեջ գտնվում եմ ամբողջ օրվա ընթացքին: Սակայն երբ ձեր մեջ եմ գալիս, տրամադրությունս մի քիչ փոխում եմ ու իմ այդ տրամադրությունը խառնվում է ուրախության պագմունքների հետ և մեծ հաճույք եմ պգում, երբ գտնվում եմ այսպիսի շրջանակի մեջ՝ ապրելով ոգևորության պահեր:

Այսօր լսեցի գեղեցիկ խոսքեր և բարի մարդանքներ ուղղված ինձ, որի համար շնորհակալ եմ: Լսեցինք հուպիչ բանաստեղծություններ ու երգեր: Ահավասիկ ժամերը/սահում են և շուտով պիտի բաժանվենք հին տարուց ու պիտի հանդիպենք առաջիկա տարվա առաջին օրին:

Վերջին օրերին, ընթերցումների ժամանակ հանդիպեցի մի դատողության, որի հեղինակը սուրբգրական ոգով ներշնչված մի անձնավորություն է: Նա ասում է, Աստված մարդը ստեղծել է պարզ, հասարակ և միամիտ, բայց մարդիկ իրենց բարդացրել են՝ բազում հոգեկան վիճակներով, կացություններով, իրենց միջև փոխհարաբերություններով, որոնք հեռու էին Աստուծո ստեղծարար առաջին մտքից: Հետաքրքիր մտածում է և համապատասխանում է իրականությանը: Իրոք մեր բոլոր այն դժվարությունները, որոնց հանդիպում ենք անհատական, հասարակական և նույնիսկ եկեղեցական կյանքում, անշուշտ շեղումներ են աստվածային սկզբնական մտածումից: Եվ այսօր, երբ մի քանի ժամ հետո պիտի դիմավորենք՝ նոր տարին, ցանկանք, որ աշխարհի բոլոր մարդիկ ճանապարհներ փնտրեն անդրադառնալու այդ

ճշմարտությանը և ճանապարհներ փնտրեն, մասամբ գոնե, վերադառնալու Աստուծո ստեղծարար առաջին մտքին և թոթափեն իրենց վրայից բոլոր տեսակի բարդությունները:

Մենք՝ իբրև Եկեղեցու ծառայողներ, առաջին հերթին պետք է անդրադառնանք այս ճշմարտությանը: Հիսուս մի քանի անգամ անդրադառնում է այս ճշմարտությանը, օրինակ երբ երեխաների համար ասում է, որ սրանց է պատկանում երկնքի արքայությունը. պարզ, հասարակ և միամիտ հոգիներ:

Ահավասիկ իմ մարդանքն այս հավաքություն. լինենք հավատավոր հոգիներ այս ավետարանական ճշմարտություններին, լինենք լավատես դեպի մարդը, լինենք լավատես նաև դեպի մեր ժողովուրդը և մեր Եկեղեցին: Եվ մաղթենք, որ աշխարհի վերածնված նոր հոգեկան մթնոլորտում մեր Եկեղեցին և մեր հավատացյալ ժողովուրդը կարողանան շարունակել իրենց կյանքն այս արևի տակ, խաղաղ և ստեղծարար՝ հետապնդելով այն բոլոր ազնիվ իդեալների իրականացումը, որոնք պատմության ընթացքին միշտ հատուկ եղած են մեր ժողովուրդին: Վկա է պատմությունը, որ մեր ժողովուրդը երբեք չարիք չի հասցրել որևէ ուրիշ ժողովուրդի: Ինքն է կրել ամեն տառապանք և նույնիսկ նահատակություն: Ահա թե ինչու իրավունք ունենք սպասելու ճակատագրից, որ մեր ապագա կյանքը լինի արևոտ, լուսավոր և շինարար՝ մեր արդար իղձերի իրականացումով:

Ընդհավորում եմ բոլորիդ Նոր տարին և հայցում եմ բոլորիդ Աստուծո օրհնությունը:

«Ողջ լերուք պորացեալ սուրբ հոգւով և յաւետ օրհնեալ ի Տեառնէ և ի մէնջ. ամէն»:

Ամանորի ուրախ երեկոն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով:

Հաջորդ օրը, հունվարի 1-ին, ս. պատարագից հետո, Մայր Աթոռի միաբանությունը և հոգևոր ճեմարանի ուսանողությունը Վեհարանում այցելում են Վեհափառ Հայրապետին և աջահամբույրով շնորհավորում Նորին Սրբության Նոր տարին և մաղթում երկար ու երջանիկ տարիներ:

ՎԱՐԴԱՆ ՔՀՆ. ՄԿՐՏՁԱՆՆ



ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՈՆԸ ԵՎ ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՋԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Նախասարկաւագ և առաջին մարտիրոս՝
որ ի Քրիստոսէ պատկեցար և յերկնաճնմ
յԱռաքաստին պայծառացեալ բերկրեցար
Աղաչեա ՎԱՍՏՈՒԱԾ շնորհել մեզ զկեանս
անվախճան:

(ՇԱՐԱԿԱՆ)

Ամեն տարի Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին մեծ ջուշով ու հանդիսավորությամբ է տոնում Ս. Ստեփանոս Նախավկայի տոնը: Ս. Ստեփանոսի կերպարը ողջ քրիստոնյաների համար դարձել է գերագույն մարդասերի, ջերմեռանդ հավատացյալի և անմնացորդ նվիրյալի կերպար:

Ս. Ստեփանոսի տոնը դասվում է ավագ տոների շարքին: Եթե Քրիստոսի հրաշափառ ծնունդը տարվա սկզբնավորումն է, տարվա բարեբախտ բանալին, ապա Ս. Ստեփանոսի տոնը տարվա եզրափակումն է, ամբողջացումը:

Տոնին ավելի շքեղություն է հաղորդում, արդեն ավանդություն դարձած, հոգևոր ճեմարանի վերջին լսարանի ուսանողներին սարկավագ ձեռնադրելու հոգեպարար արարողությունը, մի արարողություն, որով հիմք է դրվում ապագա հոգևորականի ծառայատեր կյանքին:

Դեկտեմբերի 25-ին, երեքշաբթի.—Տոն Սրբոյն Ստեփաննոսի նախավկային և առաջին մարտիրոսին:

Մայր տաճարի Իջման սուրբ սեղանը տոնական լուսավորության մեջ է: Տոնական հանդերձանքի մեջ է նաև Մայր տաճարի հյուսիսային կողմում գտնվող Ս. Ստեփանոսի խորանը:

Մայր Աթոռի բոլոր սարկավագները տոնական շապիկներով մասնակցում են աշակոյան ժամերգությանը: Դարավոր կամարների տակ դպիրները ոգեկոչում են «Քրիստոսի բարի նահատակ»-ի, «Քաղցրիկ տատրակ Ստեփաննոս»-ի անմահ հիշատակը:

«Փառք ի բարձունս»-ի ժամանակ բոլոր սարկավագները թագերով, բուրվառներով, տապանակներով ու մոմերով ատյանում կանգնած խնկարկում են հոգևորականներին, հավատացյալ ժողովրդին և փառաբանում երկնային Տիրոջը:

Ժամերգությունից հետո, ժամը 10,30-ին, Մայր տաճարի վանգակները բոլորին հրավիրում են եկեղեցի՝ մասնակցելու Ս. Ստեփանոսի տոնին նվիրված ս. պատարագին: Տաճարը լիքն է հավատացյալներով: Ժամօրինոցը հանդիսավոր ձայնով ավետում է սուրբ և անմահ պատարագի սկիզբը: Օրվա պատարագիցն է հոգեջնորհ Ս. Շնորհք աբեղա Բաղդասարյանը:

Սուրբ Գրական ընթերցումներից առաջ

չորրորդ լսարանի ուսանողներին շնորհել էր ուրար կրելու պատվավոր իրավունքը:

Մոտենում է ձեռնադրության խորհրդավոր պահը: Հնչում է «Աստուածային և երկնաւոր շնորհս...» շարականը: Նորընծա սարկավագները ծնրադիր, ձեռքերը վեր բարձրացրած հրաժարվում են աշխարհիկ կյանքից:

Ձեռնադրող սրբական հայրը ձեռնադրության աղոթքները կարդալով ձեռքը դնում



Մի պահ ձեռնադրության արարողությունից

հոգևոր ձեմարանի վերջին լսարանի յոթ ուսանողներ, առաջնորդությամբ խարտավիլակ Ս. Թորգոմ աբեղա Խարապյանի, ծնրադիր առաջնորդվում են դեպի Ս. Ստեփանոս Նախավկայի խորանը:

Նորընծաներին իրենց կիսասարկավագության աստիճանն ստացել էին դեկտեմբերի 23-ին՝ ձեռնաձև Մայր տաճարի լուսարարապետ Ս. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի: Նույն օրը սրբական հայրը դպրության չորս աստիճաններ էր շնորհել հոգևոր ձեմարանի երրորդ լսարանի ուսանողներին: Իսկ

է նորընծաների գլուխներին: Հուլիս է պահը, որովհետև սրբական հոր միջոցով Սուրբ Հոգին իր շնորհներն է բաշխում երիտասարդ հոգիներին, որպեսզի նրանք հետ այսու երջանիկ հնարավորությունը ունենան ս. պատարագի ընթացքում սպասավորելու ս. սեղանին և պատարագից քահանային: Հուլիս է լիքն է բոլորը, առավել ևս նորընծաները, որովհետև, երբ սրբական հայրը սարկավագական ուրարները նրանց ուսերին է դնում, իրենք «երկիտլի և հաւատով» զգում են, որ իրենք հոգով և մարմնով ընկալում են Քրիս-

տոսի «քաղցր լուծը»: Ճիշտ է, ծանր է «լուծը» Բրիստոսի, բայց նրանք գիտակցում են, որ «քաղցր է, քի յախտեան է ողորմութիւն նորա»:

Ավարտելով ձեռնադրությունը Ս. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը իր շնորհավորանքներն ու մաղթանքներն է տալիս նորընծաներին, հորդորում է նրանց լինել Ս. Ստեփանոսի նման ծառայասեր և վերջում ի մասնավորի շեշտում. «Սիրելի նորընծա սարկավազներ, դուք այսօրվանից դառնում եք լիիրավ անդամը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցվո: Թող ձեր գալիքը կյանքը լինի բեղմնավոր և արդյունաշատ: Ձեր նվիրվածությունը և անդուլ աշխատանքները թող լինեն մեկ կաթիլ յուղ Ս. Լուսավորչի անմար կանթեղին, որ դարեր շարունակ լուսավորում է մեր Եկեղեցին ու շերմացնում հայության հոգին: Կրկին անգամ շնորհավորում եմ ձեզ այս ուրախ առիթով»:

Հավարտ ս. պատարագի Ս. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը Վեհափառ Հայրապետին է ներկայացնում Մայր Աթոռի ավագ և նորընծա սարկավազներին: Սույն ընդունելության ներկա էին ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ս. Էջմիածնի միաբան Ս. Աբել արեղա Օղյուզյանը, Ս. Շնորհք արեղա Բաղդասարյանն ու Ս. Ասողիկ արեղա Արիստակեսյանը:

Վեհափառ Հայրապետը շնորհավորում է բոլոր սարկավազներին Ս. Ստեփանոսի տոնի առթիվ, մաղթում հաջողություններ, բացատրում է Ս. Ստեփանոս Նախավկայի մարտիրոսության լարժեքը՝ ժամանակակիցների հավատքի ամրապնդման համար: Իսկ նորընծա սարկավազներին հորդորում է լինել նվիրյալ, հավատավոր և աշխատասեր սպասավորներ Հայ Եկեղեցու և ժողովրդի: Ժամը 14.30-ին, վանքի սեղանատանը, ի պատիվ Մայր Աթոռի սարկավազների տրվում է ճաշկերույթ: Ճաշկերույթին ներկա են լինում միաբանությունը և հոգևոր ձեմարանի ուսանողները:

Նորընծա սարկավազներին շնորհավորական խոսք է ասում Ս. Աբել արեղա Օղյուզյանը:

Սարկավազների անունից շնորհակալական խոսքով հանդես է գալիս Սարգիս սրկ. Մելքոնյանը՝ խոստանալով անթերի նվիրումով ծառայել Հայ Եկեղեցուն և բարեխղճությամբ կատարել իրենց վրա դրված պարտականությունները:

Ճաշն անցնում է ուրախ և ջերմ մթնոլորտում:

Սարգիս սրկ. Մելքոնյան

Ծնվել է 1961 թ. դեկտեմբերի 6-ին Սիրիայի Քամիշլի քաղաքում: Սովորել է Լիբանանի Ջիբելի «Թռչնոց բույն» գիշերօթիկ դպրոցում, որտեղից տեղափոխվել է Պուրճ-Համուտի Արամյան վարժարան:

Այնուհետև տեղափոխվել է Սիրիա և սովորել է Քամիշլիի Եփրատ Ազգային վարժարանում: 1977 թ. ընդունվել է Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիո դպրեվանք, իսկ 1980 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ձեմարան:

Սամվել սրկ. Դանիելյան

Ծնվել է 1961 թ. նոյեմբերի 12-ին Երևան քաղաքում: Նախնական կրթությունն ստացել է Երևանի Շիրվանկաղեի անվան հմր. 21 միջնակարգ դպրոցում: 1979 թ. ավարտել է դպրոցը և ընդունվել Երևանի հմր. 9 պրոֆ-տեխնիկական ուսումնարան: 1980 թ. ավարտել է ուսումնարանը և նույն տարում ընդունվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ձեմարան:

Հայկ սրկ. Զուլյան

Ծնվել է 1959 թ. մարտի 24-ին Թուրքիայի Մալաթիա քաղաքում: Նախնական կրթությունն ստացել է Կ. Պոլսի Ներսեսյան վարժարանում: 1969 թ. ընտանիքով հայրենադարձվել են Հայաստան և բնակություն հաստատել Լենինական քաղաքում: Սովորել է Յուլիոս Ֆուչիկի անվան հմր. 26 ութամյա գիշերօթիկ դպրոցում: 1974 թ. ընդունվել է Լենինականի երկաթուղային տեխնիկում: Երկու տարի սովորելուց հետո, 1978 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ձեմարան: 1979 թ. պորակոչվել է Սովետական բանակ և պորագրվելուց հետո շարունակել ուսումը հոգևոր ձեմարանում:

Միսակ սրկ. Սարիբեկյան

Ծնվել է 1960 թ. մայիսի 11-ին ՀՍՀՄ Էջմիածնի շրջանի Ներքին Ջելվա գյուղում: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի Նելսոն Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցում: 1978 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ձեմարան: Մեկ

տարի սովորելուց հետո պորակոչվել է Սովետական բանակ և պորացրվելուց հետո շարունակել է ուսումը հոգևոր ճեմարանում:

Ռոբերտ սրկ. Աղամյան

Ծնվել է 1963 թ. սեպտեմբերի 20-ին Իրանի Աբադան քաղաքում: 1970 թ. ընտանիքով հայրենադարձվել են հայրենիք և բնակություն հաստատել Էջմիածին քաղաքում: 1980 թ. ավարտել է Էջմիածնի հմր. 6 միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

Մարգար սրկ. Տերտերյան

Ծնվել է 1962 թ. մայիսի 12-ին ՀՍՍՀ Էջմիածին քաղաքում: Ավարտել է Էջմիածնի Երվանդ Օտյանի անվան հմր. 7 միջնակարգ

դպրոցը: 1980 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:


Սամվել սրկ. Կճոյան

Ծնվել է 1957 թ. սեպտեմբերի 18-ին Երեվան քաղաքում: 1976 թ. ավարտել է Երեվանի հմր. 32 միջնակարգ դպրոցը: 1977—1979 թթ. ծառայել է Սովետական բանակում: 1981 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

*
* *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է նորընծա սարկավազներին և ցանկանում, որ նրանք միշտ եռանդով ու նվիրվածությամբ իրենց ուժերը ի սպաս դնեն՝ ի բարօրություն Հայ Եկեղեցու և ժողովրդի, որ նրանք դառնան «բարի մշակներ» և «բարի սերմնացաններ»:





ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Հունվարի 1-ին, կիրակի.—Կաղանդ, Տա-
րեմուտ:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում հյուրաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Աբել աբեղա Օղ-լուզյանը:

Արձակման Ավետարանի ընթերցումից հե-տո, Իջման ս. սեղանից քարոզ է խոսում Տ. Թորգոմ յաբեղա խարապյանը՝ «Խաղաղու-թիւն ամենեցուն» բնաբանով:

Հայր սուրբն իր քարոզի ընթացքում անդ-րադառնում է խաղաղության կարևորությա-նը՝ ի մտի ունենալով արդի քաղաքական լարված իրավիճակը: Նա շեշտում է, որ երկ-րագնդում խաղաղության կայունությունը մեծ նշանակություն ունի մանավանդ հայ ժողո-վըրդի համար՝ հիշեցնելով հայ ժողովրդի քսաներորդ դարասկզբի դառը ճակատագի-րը: Եվ վերջում քարոզիչ հայր սուրբը մաղ-թում է. «Խաղաղություն ամենքին, խաղա-ղություն ամենուր, խաղաղություն ամեն ժամ»:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայ-րապետի նախագահությամբ կատարվում է Հայրապետական մաղթանք:

*
* *

**Հունվարի 7-ին, երկուշաբթի.—Յիշատակ
մեռելոց:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Գրի-գոր քին. Տերտերյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգիստ՝ «վասն համօրէն ննջեցելոց»:

*
* *

**Հունվարի 9-ին, չորեքշաբթի.—Այսօր Վե-
հարանի ընդունելությունների դահլիճում տե-
ղի ունեցավ միաբանական առաջին հավա-
քույթը: Հավաքույթն սկսվեց Տերունական
աղոթքով:**

Հետաքրքիր և բովանդակալից պեկուցու-մով հանդես եկավ Տ. Հուսիկ քին. Լապար-յանը, որն ունկնդիրներին ներկայացրեց «Հովհաննես Թումանյանի կրոնական թեմա-ներով գրված բանաստեղծությունները»:

Տեր հայրը, վեր հանելով Հ. Թումանյանի գրական ժառանգության հատկանիշներն ու գեղարվեստական մեթոդները, իր խոսքը մասնավորեց կրոնական թեմաներով գրված բանաստեղծությունների մասին, որտեղ ի հայտ են գալիս նրա պգացումներն ու սերը դեպի եկեղեցին: Տեր հայրը նշում է նաև, որ Հ. Թումանյանը շատ լավ ծանոթ է եղել Աստվածաշնչին, որովհետև ծնվել և մեծացել է քահանայի ընտանիքում: Այդ բանաստեղ-ծությունները տեր հայրը բաժանեց երկու մասի. ա. Հին կտակարանի թեմաներով, և բ. Նոր կտակարանի թեմաներով գրված բա-նաստեղծություններ: Տեր հայրը համառո-տակի անդրադարձավ նաև այդ բանաստեղ-ծությունների գրական և գեղարվեստական արժանիքներին:

Վերջում տեղի ունեցավ կարծիքների աշխույժ փոխանակություն:

*
* *

Հունվարի 10-ին, հինգշաբթի.—Այսօր, Հայ Եկեղեցին մոտիկից ճանաչելու համար, Մայր Աթոռ Ս. Էջմիածին են ժամանում Լեւինգրադի հոգևոր ակադեմիայի ասպիրանտներ Ս. Ավգուստին վրդ. Ջորավկովը (Բուդապեշտի Պրավոսլավ Եկեղեցի), Տեր Բիրց քին. Մեպիմիրը և Կիրկոս սրկ. Կինետեբերը (Եթովպական Եկեղեցի)՝ առաջնորդությամբ Լեւինգրադի հոգևոր ակադեմիայի դասախոս Ս. Ինոկենտի արեղա Պավլովի (Ռուս Պրավոսլավ Եկեղեցի):

Հյուրերին «Ձվարթնոց» օդանավակայանում դիմավորում և բարի գալուստ են մաղթում Մայր Աթոռի միաբաններ Ստեփան և Գուրգեն սարկավագները:

Հաջորդ օրը Վեհափառ Հայրապետը ընդունում է հյուրերին և տալիս նրանց իր օրհնություններն ու մաղթանքները:

Քույր Եկեղեցիների ուխտավորները հունվարի 10—15-ը լինում են պատմական Վաղարշապատի վանքերում, այցելում Հայաստանի պատմամշակութային հուշարձաններ, լինում Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում և Ծիծեռնակաբերդում՝ իրենց հարգանքը մատուցում Մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

*
* *

Նույն օրը Մայր Աթոռ է ժամանում Ուրուգվայի հայ համայնքի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Ս. Հակոբ վրդ. Գըլընձյանը:

*
* *

Հունվարի 13-ին, կիրակի.—Տօն անուանակոչության Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Ասողիկ արեղա Արիստակեսյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ է խոսում «Եւ կոչեաց անուն նորա Յիսուս» բնաբանով:

Խոսելով Անվանակոչության մասին, պատարագից հայր սուրբը վեր է հանում մեր Տիրոջ երկրային կյանքի փրկագործական կարևոր դերը: Նա շեշտում է, որ փրկագործությունը կազմում է քրիստոնեության հիմնական գաղափարը: Երկնառաք Փրկիչը երկրի վրա հանդես եկավ որպես Փրկիչ և

որպես օծյալ «թագավոր»՝ թագավոր՝ նոր աշխարհի և իշխան՝ նոր խաղաղության:

Ս. պատարագին ներկա էին նաև լեւինգրադցի հյուրերը:

*
* *

Հունվարի 14-ին, երկուշաբթի.—Տօն Սընդեան Ս. Յովհաննու Կարապետին:

Այսօր Մայր Աթոռի մկրտարանի Ս. Հովհաննես Մկրտչի անունը կրող մատուռի ս. սեղանին ս. պատարագ է մատուցում մկրտարանի տեսուչ Ս. Արտակ քին. Սիմոնյանը:

*
* *

Հունվարի 15-ին, երեքշաբթի.—Այսօր, Ս. Էջմիածնի պատմական հուշարձաններին ծանոթանալու համար, Մայր Աթոռ այցելեց հյուրաբար Հայաստանում գտնվող Արտասահմանյան հայրենակիցների հետ մշակութային կապի «Ռոդինա» ընկերության նախագահության նախագահ պրն. Ա. Պ. Շիտիկովը՝ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ պրն. Վ. Համապասայանի ուղեկցությամբ:

Հյուրերին Վեհարանում ընդունեց Վեհափառ Հայրապետը:

Հանդիպումն անցավ բարեկամական մթնոլորտում:

Այա հյուրերն այցելեցին «Ալեք և Մարի Մանուկյան գանձատուն»:

*
* *


Հունվարի 16-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանի ընդունելությունների դահլիճում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

Հավաքույթի սկզբում քննարկվում է Ս. Ասողիկ արեղա Արիստակեսյանի հունվարի 13-ին Մայր տաճարում խոսած քարոզը:

Այնուհետև Մայր Աթոռի դիվանապետ Ս. Ներսես եպս. Պոպապայանը ունկնդիրներին է ներկայացնում 1984 թ. դեկտեմբերի 10-ին Չեխոսլովակիայի Կարլովի Վարի քաղաքում կայացած Արևմյան և Արևելյան քրիստոնեական Եկեղեցիների ներկայացուցիչների վեցերորդ ժողովը (տես էջ 37):

Այնուհետև հավաքույթի ներկաներին իր համայնքի կրոնական և ազգային կյանքն է ներկայացնում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ուրուգվայի հայ համայնքի առաջնորդական տեղապահ Ս. Հակոբ վրդ. Գըլընձյանը:





ՎԱՉԱԳԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆՈՐ ՏԱՐՎԱ ՇԵՄԻՆ

Ամեն մարդ այսօր թող ջենմ աղոթի՛,
Մեղա՛ գա խոնարհ՝ ինքն իր սրտի մեջ,
Հոգու հա՛ց թող տա մեկին անոթի
Եվ նեցո՛ւկ դառնա թշվառներին խեղձ...

Յուրաքանչյու՛րս թող հոգու խորքում
Հավատքի խոկումն ունենա խորունկ,
Թող, որ ունենա խղճի՛ նորոգում,
Եվ մաքուր սրտի՛, կարոտի՛ արցունք...

Մեպնից ամեն մեկն այսօր թող պղջա՛
Արած և չարած իր մեղքը չնչին,
Թող ապաշխարի՛, անկեղծ շշնջա՛
Իր և աշխարհի հոգու ականջին...

Բարի լույսի պես, ամեն մարդ այսօր
Թող շո՛ղքն իր հոգու ապա՛տ արձակի.
Բարի լույսի պես, ամեն մարդ այսօր
Թող արեգակի նման ճառագի՛...

Ու ամենի՛ց շատ թող բարին բացվի
Իմ թափառական, անտո՛ւն հայորդո՛ւն,
Ու ամենից շատ թող լույսը բացվի՛
Ամենադժբախտ աշխարհի մարդո՛ւն...


Սրտա՛նց կուպեի՛ նոր տարվա ջեմի՛ն,
Արար աշխարհի ու մարդկանց սրտո՛ւմ,
Անգամ թշնամո՛ւ սրտի մեջ մթին,
Բարի լո՛յս քամել ու բարի երդո՛ւմ...

Հնա՛ր լիներ ինձ՝ հովերի թևով,
Ծովից-ծո՛ւլ անցնել՝ աշխարհից-աշխա՛րհ,
Մտնել տնե-տո՛ւն և իմ ձեռքերով
Բարի՛ն բաշխեի մարդկանց հավասար...

Հարուստ լինեի՛ բաշխեի բո՛ւտ-բո՛ւտ,
Խառնեի՛ հոգի՛ս մարդկանց հոգո՛ւ մեջ,
Արեգակի պես՝ շռա՛յլ, ոսկեհո՛ւռ
Լույսո՛ւլ լցնեի հոգիները խեղձ...

Բարի լույսի՛ պես, բարի լույսի՛ պես...





**«ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԹՂԹԱԿՑԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ
ՀԱՅ ԺԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ ԺԱՆ-ՄԻՇԵԼ ԵՎ ՆԻԿՈԼ ԹԻԵՐԻ
ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ՀԵՏ**

1984 թվականի դեկտեմբերի 23-ից մինչև 1985 թվականի հունվարի 6-ը ՀՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի և Մայր Աթոռի հրավերով Հայաստանում էին գտնվում ֆրանսիացի անվանի գիտնականներ ԹիեՐԻ ամուսինները: Մասնագիտությամբ բժիշկներ են, սակայն երկար տարիներ ժրջան հետևողականությամբ զբաղվում են հայկական ճարտարապետությամբ: Կատարել են բազմաթիվ գիտարշավներ նաև դեպի Արևմտյան Հայաստան՝ երբեմն վտանգելով իրենց կյանքը:

Մեր խմբագրության աշխատակիցը հարցազրույց ունեցավ նրանց հետ: Ստորև տալիս ենք հարցազրույցը ամբողջությամբ:

ՀԱՐՑ.—Հարգելի տեր և տիկին ԹիեՐիներ, նախ խնդրում եմ մի քանի կենսագրական տեղեկություններ Ձեր մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ.—**Պրն. Ժան-Միշել ԹիեՐի.**—Ծնվել եմ 1916 թվականի օգոստոսի 13-ին Բանիեր դը Լյուշոնում (Ֆրանսիա): Ստացել եմ ընդհանուր միջնակարգ և բժշկական բարձրագույն կրթություն: Գրաբար սովորել եմ Փարիզի Կաթոլիկ ինստիտուտում: Անդամ եմ Ասիական Ընկերության, Հայագիտական Հետազոտությունների Միջազգային Ընկերակցության և Արևելյան Քրիստոնեական Արվեստի Ուսումնասիրության և Փաստագրման Կենտրոնի: Հայ մշակույթի պատմության դասախոս եմ Արևելյան Լեզուների և Մշակույթների Ազգային Ինստիտուտում: Աշխատակցում եմ «Revue des Etudes Armeniennes», «Բազմավեպ», «Հանդես ամսօրեայ», «Բյուզանդիոն» և այլ պարբերականների:

Տկն. Նիկոլ ԹիեՐի.—Ծնվել եմ 1925 թվականի հոկտեմբերի 26-ին Կոլմարում (Ֆրանսիա) և ունեմ բժշկական բարձրագույն կրթություն: Գրականության և պատմության դոկտոր եմ: Արևելյան քրիստոնեական (Հայաստան, Վրաստան, Մերձավոր Արևելք) պատկերագրություն եմ դասավանդում Սորբոնի Բարձրագույն Ուսմանց Դպրոցի կրոնական գիտությունների բաժնում: Անդամ եմ Ֆրանսիայի Հին դրամների, Անտիկվարների և Ասիական Ընկե-

րությունների, Հայագիտական Հետազոտությունների Միջազգային Ընկերակցության, Արևելյան Քրիստոնեական Արվեստի Ուսումնասիրության և Փաստագրման Կենտրոնի: Թղթակցում եմ բավաթիվ մասնագիտացված պարբերականների:

ՀԱՐՑ.—Ինչպե՞ս սկսեց Ձեր ծանոթությունը հայկական ճարտարապետությանը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Շատ վաղուց եմ հետաքրքրվել Բյուզանդիայի պատմությամբ և արվեստով: Շուրջ 30 տարի է, ինչ ես գտա, որ անխուսափելի անհրաժեշտություն է ճանաչել արևելյան քրիստոնեական մյուս մշակույթները՝ վրացական, սիրիական, դպտի և մանավանդ հայկական: Այդ շրջանին հայկական մշակույթը քիչ ծանոթ էր Արևմուտքում, և ես, կամքիցս անկախ, դարձա հայ արվեստի մասնագետ:

ՀԱՐՑ.—Ի՞նչ հրատարակություններ ունեք հայկական ճարտարապետության մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Ես երկու աշխատություն եմ գրել Հռոմոսի վանքի և Կարսի Կաթողիկեի մասին: Հեղինակակից եմ հետևյալ կոլեկտիվ աշխատություններին. 1. Հայոց պատմություն (Ճ. Տետեյանի նախաձեռնությամբ կազմված) և 2. Անիի մասին մենագրություն: Բավաթիվ հոդվածներ եմ տպել «Revue des Etudes Armeniennes» (Փարիզ), «Բավաթվաթ» (Վենետիկ), «Հանդես ամսօրեայ» (Վիեննա) պարբերականների մեջ Վասպուրականի, Կարսի և Մուշի շրջանների հուշարձանների մասին և այլն:

ՀԱՐՑ.—Ի՞նչն էք համարում Ձեր անձնական նվաճումը հայկական ճարտարապետության ուսումնասիրության մեջ:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Մենք Արևելյան Թուրքիայում հայտնաբերել ենք շուրջ 60 հայկական եկեղեցիներ, որոնց մասին նկարագրություններ հրատարակեցինք համապատասխան հատակագծերով ու լուսանկարներով: Իմ աշխատանքները նպատակ ունեն մանավանդ որոշել հուշարձանների ժամանակը, դրանք ենթարկել տիպաբանական դասակարգման և պարզել հայ արվեստի առնչությունները այլ արվեստների հետ:

ՀԱՐՑ.—Հայկական ճարտարապետության ո՞ր հատկանիշն էք համարում ամենակարևորը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Հայկական արվեստը հիմնականում ներկայանում է ճարտարապետությամբ, որը հատկանշվում է արտաքին ձևերի պարզությամբ (ի հակադրություն ներքին կառուցվածքի բարդության), տիպերի հարստությամբ և բավազանությամբ, որտեղ, սակայն, գերիշխում է գմբեթավոր տիպը: Կառուցման տեխնիկայի տեսակետից բետոնի կիրառումը երկշերտ տուֆի միջև, եթե հատուկ չէ միայն հայկական ճարտարապետությանը, ապա գոնե հետևողականորեն է կիրառվել:

ՀԱՐՑ.—Շատ առիթներ էք ունեցել լինելու Սովետական Հայաստանում, որտեղ, մանավանդ վերջին տարիներին, պատմական հուշարձանների վերականգնման հսկայական աշխատանքներ են կատարվում: Ինչպե՞ս էք գնահատում կատարվածը:

ՊԱՏԱՍԽԱՆ.—Հուշարձանների վերականգնման խնդրի լուծումը շատ դժվար է, որովհետև այն պահանջում է ոչ միայն հսկայական ծախսեր, այլև ճարտարապետության և կրոնի խոր իմացություն: Կատարված բավաթիվ վերակառուցումներում զգացվում է հատկացումների և կրոնագիտական կարեվոր տվյալների որոշ պակաս: Այժմ զգալի բարելավում ենք տեսնում այդ ուղղությամբ, թեև նկատելի է աշխատանքների որոշ դանդաղեցումներ:

ՀԱՐՑ.—Սովետական Հայաստան Ձեր այցելությունների ժամանակ ապ-

շուշտ առիթ ունեցաք դիտելու նաև Հայաստանի նոր կառույցները: Շարունակվո՞ւմ են, արդյոք, հայկական ճարտարապետության ավանդույթները: Ի՞նչ առաջընթաց էք նկատում հայ ճարտարապետական մտքի զարգացման մեջ:

ՊՍՍՍՍՍՆ.—Հայաստանը տալիս է արժեքավոր ճարտարապետներ և ունի հրաշալի շինանյութ (տուֆ): Դժբախտաբար եթե այդ բնագավառում առկա են անուրանալի հաջողություններ, մյուս կողմից, սակայն, առաջնային անհրաժեշտություն է դարձել (ինչպես արևմտյան երկրներում, այնպես էլ Հայաստանում) նախապատվություն տալ նվազ ծախսալից բնակելի շենքերի կառուցմանը: Իր պատմության ընթացքում Հայաստանը բազմիցս անկման ջրջաններ է ունեցել, որոնց հաջորդել են վերածննդի ժամանակներ: Հիմք ունենք հուսալու, որ Ի դարի վերջը վերածննդի այդպիսի մի շրջան կլինի:

ՀԱՐՅ.—Ինչպե՞ս էք գնահատում հայ եկեղեցական պատմական հուշարձանների վերականգնման աշխատանքները, որոնք կատարվել են և շարունակում են կատարվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նախաձեռնությամբ:

ՊՍՍՍՍՍՆ.—Այն, ինչ մենք նկատեցինք Մայր Աթոռի կողմից վերջին տարիներին իրագործվող վերակառուցումներում, աշխատանքի բարձր որակն է: Այս փաստը հաստատում է մեր այն գաղափարը, որ կրոնական հուշարձանների վերականգնման մեջ մեծ դեր կարող է խաղալ եկեղեցին՝ անաղարտ պահելու համար այն ոգին, որով կառուցվել են այդ հուշարձանները:

ՀԱՐՅ.—Ի՞նչ է Ձեր կարծիքը հայ միջնադարյան նկարչական ինքնուրույն դպրոցի գոյության մասին. որմանկարները հնարավորություն տալի՞ս են նման եկրակացության:

ՊՍՍՍՍՍՆ.—Որմանկարչությունը ընդհանրապես նվազ զարգացած է եղել Հայաստանում՝ որպես հակադրություն հունական պատկերապաշտության: Ուստի այնտեղ չէ, որ պետք է փնտրել արվեստի ինքնուրույնություն: Է դարում որմանկարչության թեմաներն ու ոճը ընդհանրական են վաղ քրիստոնեական արվեստի հետ: Իսկ ԺԳ դարում հայկական որմանկարչությունը կապվում է հունական որմանկարչական դպրոցի հետ՝ Վրաստանի ապդեցությամբ, որն այդ ժամանակաշրջանում հանդիսանում էր գերիշխող պետական ուժ: Հայկական նկարչական արվեստի ինքնուրույնությունը ըստ էության ի հայտ է գալիս հայ մանրանկարչության մեջ՝ Տարոնի, Կիլիկիայի և, ավելի ուշ, Վասպուրականի հռչակավոր դպրոցների շնորհիվ:

ՀԱՐՅ.—Ի՞նչ կապի մեջ էք հայկական արվեստի մյուս արտահայտությունների հետ (գրականություն, երաժշտություն, նկարչություն և այլն):

ՊՍՍՍՍՍՆ.—Հայ գրականությունից ևս ծանոթ եմ միայն հին մատենագրական երկերին, որոնք ինձ մատչելի դարձան գրաբարի ուսումնասիրման շնորհիվ: Մյուս կողմից՝ լինելով արվեստի պատմաբան և ոչ ճարտարապետ, շատ եմ հետաքրքրվում հայ նկարչությամբ և քանդակագործությամբ: Ինչ վերաբերում է հայկական երաժշտությանը, ես այն գնահատում եմ սոսկ որպես պարզ սիրող:





ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԼՈՒՐԵՐ ԱՄՆ-Ի ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻՑ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՕԳԼԸՆՏԻ Ս. ՎԱՐԴԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

1984 թվականի հոկտեմբերի 13—14-ը, շաբաթ և կիրակի, հիշատակելի օրեր եղան ԱՄՆ-ի արևմտյան թեմի և հատկապես Օգլոնտի Ս. Վարդան եկեղեցու համար, որտեղ թեմի բարեխնամ առաջնորդ գերաջնորդի Ս. Վաչե արքեպ. Հովսեփյանը, համաձայն Հայաստանյայց եկեղեցու կանոնի և ծեսի, քահանա ձեռնադրեց Ս. Վարդան եկեղեցու երկարամյա սարկավագ՝ բարեջնորդ Ռիչլորտ Սարաֆյանին:

Հոգեպարար արարողությանը մասնակցեցին Հյուսիսային Կալիֆոռնիայի հոգևոր հայրերը՝ գերջ. Ս. Արիս եպս. Շիրվանյանը՝ Սան Ֆրանցիսկոյի Ս. Հովհաննես եկեղեցու հոգևոր հովիվ, արժ. Ս. Վազգեն քին. Մովսեսյանը՝ Սանթա Կլարա հովտի Ս. Անդրեաս եկեղեցու հոգևոր հովիվ, իսկ Կենտրոնական Կալիֆոռնիայից՝ արժ. Ս. Շահե ավ. քին. Ալթունյանը, հոգևոր հովիվ Ս. Պողոս եկեղեցու (Ֆրեզնո), արժ. Ս. Գևորգ քին. Առաքելյանը, հոգևոր հովիվ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու (Ֆաուլդեր), արժ. Ս.

Վարդան քին. Գասպարյանը, հոգևոր հովիվ Ս. Աստվածածին եկեղեցու (Եդեն), և արժ. Ս. Տաթև քին. Թաթուլյանը, հոգևոր հովիվ Ս. Սահակ—Մեսրոպ եկեղեցու (Րիտլի):

Քահանայական կոչման կարգը տեղի ունեցավ հոկտեմբերի 13-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամը 19-ին: Արարողության ընթացքում գերջ. Ս. Արիս եպս. Շիրվանյանը թեկնածուին ներկայացրեց ձեռնադրիչ առաջնորդ սրբապան հորը:

Հոկտեմբերի 14-ին, կիրակի օրը, ս. պատարագ մատուցեց սրբապան հայրը: Սուրբ Գրոց ընթերցումից առաջ սկսվեց ձեռնադրության կարգը՝ ըստ Ձեռնադրության Մաշտոցի: Ձեռնադրող սրբապան հայրը, թեկնածուի հավատքն ու ուղղափառ դավանությունը հաստատելուց հետո, ձեռնադրեց նրան: Իսկ «Ողջոյն»-ից առաջ ընծայվալ քահանայական պգեստով կանգնեց ս. խորանի վրա, և առաջնորդ սրբապան հայրը, «Առաքելոյ աղաւնոյ» շարականի երգեցողությունից հետո, սրբալույս մեռնով օծեց թեկնածուի ճակատը, աջ և ձախ ափերը՝ կոչելով նրան Ս. Մեսրոպ քահանա: Ապա նոր-

ընծա քահանան իր անդրանիկ օրհնությունը տվեց ժողովրդին:

Ս. պատարագի երգեցողությունը և Ձեռնադրության ջարականները կատարեցին Օգլընտի Ս. Վարդան, Սան Ֆրանցիսկոյի Ս. Հովհաննես և Սանթա Կլարա հովտի Ս. Անդրեաս Հայաստանյայց եկեղեցիների միացյալ դպրաց դասերը:

Հավարտ ս. պատարագի հավատացյալները մոտենալով համբուրեցին նորածն քահանայի աջը:

Սարաֆյանը իր խորին շնորհակալությունը հայտնեց առաջնորդ սրբապան հորը, թեմական խորհրդին, եկեղեցու ծխական խորհրդին և ողջ համայնքին՝ իրենց ցուցաբերած քաջալերության և արտահայտած ազնիվ զգացումների համար:

Արժանապատիվ Ս. Մեսրոպ քին. Սարաֆյանը ծնվել է 1933 թվականին Ֆրեզնոյում (Կալիֆոռնիա): 1951—1954 թվականներին նա հաճախում է Կալիֆոռնիայի համալսարան Պլոբլի քաղաքում և ստանում «Պսա-



Մի պահ ձեռնադրության արայողությունից

Օրվա հոգեպնայլ արարողություններից հետո, եկեղեցու սրահում տեղի ունեցավ պաշտոնական ճաշկերույթ՝ ի պատիվ նորընծա քահանայի: Ընդ 500 ճաշկերույթի մասնակիցներ իրենց ներկայությամբ պատվեցին եկեղեցու նոր հոգևոր հովվին:

Հայտագրին իրենց խոսքով մաս կապեցին առաջնորդ սրբապան հայրը, գերջ. Ս. Արիս եպս. Շիրվանյանը, Ս. Վարդան եկեղեցու ատենապետ Անդրանիկ Անթառամյանը, թեմական խորհրդի փոխատենապետ Մայք Մատաճյանը և Սուրեն Թումաճյանը: Բոլորն էլ, իրենց հոգեկան երջանկությունը հայտնելուց հետո, շնորհավորեցին նորընծա քահանային և հաջողություն մաղթեցին իր հովվական ծառայության մեջ:

Գեղարվեստական բաժինը կատարեց միացյալ երգչախումբը՝ ղեկավարությամբ Էդուարդ Կոտոջյանի:

Հայտագրի ավարտին արժ. Ս. Մեսրոպ

կավոր Արվեստից» վկայական՝ եվրոպական պատմության մեջ: 1955-ին ընդունվում է Անթիլիասի Դպրեվանք, որտեղ վարճացնում է իր հայոց լեզվի և կրոնական գիտելիքները: Նույն տարվա հուլիսին փոխադրվում է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանք, որտեղ երկու տարի հետևում է կրոնագիտական և աստվածաբանական դասընթացներին և 1957-ին ձեռնադրվում սարկավագ:

1957-ին Ս. Մեսրոպ քահանան վերադառնում է Միացյալ Նահանգներ և հոգևոր երկու վարժարաններում կատարելագործում իր աստվածաբանական գիտելիքները՝ ստանալով բարձր վկայական:

Անցնող 25 տարիների ընթացքում Ս. Մեսրոպ քահանան Օգլընտի Ս. Վարդան եկեղեցում ծառայում է որպես սարկավագ, Կիրակնօրյա վարժարանում՝ որպես ուսուցիչ և վերակացու: Իսկ Արևմտյան թեմից ներս իր բաժինն է բերում թեմական խորհրդի

կողմից կապմակերպված հավաքներին, որոնց ընթացքում նա բանախոսում է կրոնական պանապան թեմաների շուրջ։

Աստուծո կամքով նորընծա քահանան իր անդրանիկ ս. պատարագը մատուցեց Օգլյնտի Ս. Վարդան եկեղեցում, 1984 թվականի նոյեմբերի 3-ին, շաբաթ օրը։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ձայնակցում է շնորհավորանքներին՝ մաղթելով, որ արժանապատիվ Ս. Մեսրոպ քահանա Սարաֆյանը ունենա արդյունավոր ծառայություն Հայաստանյայց եկեղեցում և մասնավորապես Արևմտյան թեմում։

ՆՈՐ ՏԱՐՎԱ ԵՎ Ս. ԾՆՆԴՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՇԻՐԱԿԻ ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Աստվածորդու Ս. Ծննդյան տոնի առիթով հանդիսավոր ս. պատարագ տեղի ունեցավ Լեւինականի առաջնորդանիստ Ս. Աստվածածին «Յոթվերք» եկեղեցում, ուր պատարագեց և Նոր տարվա ու Ս. Ծննդյան խորհուրդը վեր հանող քարոզ խոսեց Շիրակի թեմի առաջնորդ գերաշնորհ Ս. Նարեկ եպս. Շաքարյանը։ Նա ի թիվս այլ մտորումների ասաց.

«Մարդիկ դարձյալ փայփայում են երպաներ և հույսեր, ապրում սպասումներով և ձգտումներով։ Անցել է հին տարին, որպեսզի պարզևի նորը՝ նոր ծրագիրներով, ի խըն-

դիր լուսավոր գալիքի։ Երկիրը շարունակում է իր պտույտը, և մարդը պետք է ջանա ըմբռնել կյանքի խորհուրդը և ժամանակի իմաստությունը։ Քրիստոնյաներիս համար ողենիջ պետք է լինի Քրիստոսի Ս. Ծնունդը, որպեսզի վերածնվենք հոգեպես, ապրենք ոգեկան կյանքով՝ աստվածահաճո և մարդահաճո, լի հավատքով դեպի մեր գործը։ Սրտաբուխ աղոթքով դիմելով Բեթղեհեմում ծնված Աստվածորդուն, ասենք. «Նորոգող հնությանց, նորոգեա և զիս, նորոգ պարզաբեա, Ամեն»։

ՈՂԶՈՒՆԵԼԻ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

1984 թվականի փետրվարի սկզբներին, որպես հոգևոր հովիվ, Մոնտեվիդեո մեկնեց Մայր Աթոռի միաբան Ս. Հակոբ վարդապետ Գլընձյանը։

Հայր սուրբը Արևմտյան Գերմանիայում իր հովվական ծառայության մեջ ընդհանրապես աչքի էր ընկել որպես անձնորդ և նվիրյալ հոգևորական։

Մոնտեվիդեոյում պաշտոնավարելու առաջին իսկ օրից հայր սուրբը լծվեց չափազանց շնորհակալ մի գործի։ Բացի հովվական իր ծառայությունից, նա ծավալեց հայրենասիրական բեղուն գործունեություն։ Հայր սուրբը Մոնտեվիդեոյի հայկական վարժարանում հաստատեց նաև հայկական դասընթացներ՝ քրիստոնեական կրոնի և եկեղեցու պատմության ծրագրով, որպեսզի սփյուռքի մատաղ սերունդը գաղափար կազմի ինչպես քրիստոնեական կրոնի մասին ընդհանրապես, այնպես էլ Հայ եկեղեցու մասին մասնավորապես։

Հայր սուրբը 1984 թվականի հոկտեմբերի 3-ից, լուրաքանչյուր չորեքշաբթի օր, Մոնտեվիդեոյի Հայ Մշակութային Սրահում, ի լրագումն մերը նշված դասընթացների, կապակերպում է կրոնական և եկեղեցական

թեմաներով դասախոսություններ։

Առայսօր դասախոսություններ են կարդացվել հետևյալ թեմաներով.

- ա) «Ի՞նչ է կրոնը և որոնք են աշխարհի գլխավոր կրոնները».
- բ) «Երեք գլխավոր միաստվածյան կրոնները».
- գ) «Հայոց հեթանոսական կրոնը».
- դ) «Ի՞նչ է եկեղեցին».
- ե) «Հայ եկեղեցիներու մնացորդները Վանա լիճին շրջակայքը մեր օրերում», դիպուկությամբ ընթերցվելով.
- զ) «Չրադաշտականությունը և Չարադուստրան».
- է) «Ընդհանուր ակնարկ եկեղեցվո խորհուրդներու մասին».
- ը) «Քրիստոնեության մուտքը Հայաստան».
- թ) «Հայ եկեղեցվո ծագումը (Սկիզբն մինչև Քաղկեդոնի ժողովը)».

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ողջունելի է համարում Ս. Հակոբ վարդապետ Գլընձյանի սույն ազգանվեր գործունեությունը և մաղթում նրան է՛լ ավելի եռանդ՝ իր այս շնորհակալ աշխատանքի ընթացքը արգասաբեր դարձնելու համար։



ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԺՈՂՈՎ ԿԱՐԼՈՎԻ ՎԱՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ

1984 թվականի դեկտեմբերի 10—13-ը Չեխոսլովակիայի Կարլովի Վարի քաղաքում տեղի ունեցավ «Կարլովի Վարի 6» ժողովը, որին մասնակցում էին Արևելյան Եվրոպայի, ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի Եկեղեցիների ավելի քան 60 պատգամավորներ: Ժողովը թվով վեցերորդն էր (առաջինը տեղի է ունեցել 1962 թ.): Այս տարիների ընթացքում ժողովները փոխնիփոխ գումարվել են ԱՄՆ-ում և Չեխոսլովակիայում: Այս ժողովին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կողմից մասնակցում էր Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես եպս. Պոպապայանը: Ահա թե սրբապան հայրը ինչ ասաց մեր թղթակցին այդ ժողովի մասին:

«Ժողովը ղեկավարում էին ԱՄՆ-ի ներկայացուցիչ դոկ. Էյվրի Բոստը և հունգարացի եպիսկոպոս դոկ. Կարլի Տոթը:

Ժողովականները ժողովի ընթացքում ունկընդդեգին ժողովի օրակարգին առնչվող երկու շատ կարևոր Վեկուցումներ: Ժողովի օրակարգի գլխավոր թեման էր. «Եկեղեցիների դերը Արևելքի և Արևմուտքի միջև խաղաղության և արդարության հաստատման գործում»: Այս թեմայի շուրջ ելույթներ ունեցան դոկ. Կարլի Տոթը (Արևելյան կողմի ներկայացուցիչ) և դոկ. Վիլյամ Թոմսոնը (Արևմտյան կողմի ներկայացուցիչ): Երկու կողմերի ելույթները լսելուց հետո պատգամա-

վորները բաժանվեցին երկու խառը (Արևելյան և Արևմտյան կողմերի ներկայացուցիչներ) խմբերի՝ քննելու համար խնդրո առարկա թեման և ուղիներ որոնելու Եկեղեցիների միջոցով համերաշխության հասնելու համար:

Բոլոր պատգամավորները, որպես Քրիստոնյաներ, իրենց պարտավորված պետք է պահն ծառայելու և իրենց նպաստը բերելու՝ աշխարհում խաղաղության ապնիվ գաղափարի հաստատման գործին:

Ժողովականները, նկատի ունենալով այսօրվա մարդկությանն սպառնացող վտանգները, ինչպես նաև երկնքում և երկրի վրա սպառապինության մրցավազքի օրավոր աճը, և մի անգամ ևս համոզվելով երկրագնդին սպառնացող լարված և կործանարար վիճակի գոյության մեջ, եկան այն եզրակացության, որ Աստուծո պարգևը՝ կյանքը, Աստուծո ստեղծագործությունը, վտանգվում է հետևյալ պատճառներով.

1. Արևելքի և Արևմուտքի միջև գոյություն ունեցող անհասկացողությունը:

2. Մի շարք երկրների ապահով վիճակի հաստատումը այլ երկրներին կոհաբերելու հաշվին:

3. Տիեզերքը սպառապինելու և աստղային պատերազմ հրահրելու մարդկանց ցնորքը:

4. Միջուկային զենքի տեխնիկայի և տեխնոլոգիայի վարճացումը ոչ խաղաղ նպատակների համար:

5. Ջենքի արտադրության աճը, վաճառքը և տեղադրումը: Այս ամենի համար տրամադրված գումարներով կարելի է աշխարհում վերացնել սովն ու աղքատությունը:

6. Մարդուն տրված ուժը ի վնաս ուրիշներին օգտագործելու միտումը:

7. Պատերազմն անտեսելու մարդկային անմտությունը:

8. Երևակայական թշնամիներ ստեղծելու ոգին:

Որպես Եկեղեցիների ներկայացուցիչներ ժողովականները զգում են խաղաղության ամրապնդման գործում իրենց ունեցած հնարավորությունների սահմանափակվածությունը: Եվ այսօրվա տազնապալի և լարված իրավիճակում մարդկությունն իր հույսը դնում է միայն Հիսուս Քրիստոսի վրա:

Կրկին անգամ լսվում է Ավետարանի խաղաղության և արդարության պատգամը: Բավմիցս խոսվում է տարբեր գաղափարախոսությունների և սիստեմների մեջ ապրող մարդկանց սերտացման և նրանց միջև բարեկամական երկխոսություն հաստատելու մասին:

Ժողովը որոշումում է ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի արտաքին գործերի մինիստրների՝ Շուլցի և Գրոմիկոյի միջև տեղի ունենալիք խորհրդրակցությունը և այդ առթիվ մասնավոր նամակներ հղում ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի նա-

խագահներ Ջեռնենկոյին և Ռեյգանին, ինչպես նաև Ստոկհոլմի «Չինաթափության և վստահության խորհրդածողով»-ին՝ մաղթելով նրանց հաջող շարունակություն—քաղաքական փոխըմբռման բնագավառում:

Վերջում ժողովականները բաժանվեցին իրարից հետևյալ ելրակացություն-որոշումով.

1. Արևմուտքի և Արևելքի Եկեղեցիների միջև ստեղծել փոխբարեկամական համայնքներ:

2. Էլբայի ափին, երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի բանակների հանդիպման վայրում, կատարել քրիստոնեական տոնախմբություն:

3. Դաստիարակել երիտասարդությանը խաղաղության ոգով:

4. Քաջալերել էկումենիկ ծրագրերի կատարումը ժողովուրդների միջև խաղաղությունը ամրապնդելու նպատակով:

5. Ջանալ լուծում գտնել աշխարհում գոյություն ունեցող սովյալների հարցին:

6. Աշխատանքներ տանել ամբողջ աշխարհում միջուկային զենքի կանխարգելման գործում:

7. Աստուծո պատգամի համաձայն շարունակել և ուժեղացնել պայքարը ի խնդիր խաղաղության:

Ժողովն իր աշխատանքները փակում է ապագայի լավատեսության ծրագրերով, և առաջարկվում է, որ բոլոր Եկեղեցիները տևապես պայքարեն հանուն աշխարհի կայուն խաղաղության»:



Ա. ՀԱՆՆԱԶԱՐՅԱՆ
(Պարսկաստան)

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԴԱՆԱՎԿԱՅԻ ՎԱՆՔԸ

Ս. Ստեփանոս Նախավկայի վանքը գտնվում է պատմական Հայաստանի Փայտա-կարանին սահմանամերձ Գողթան գավառում, այսօր Իրանի Ատրպատական նահանգի հյուսիսային մասում, Ջուլֆա քաղաքից շուրջ 20 կմ արևմուտք և սահման կապմող Արաքս գետից մոտ 3 կմ հարավ, մի մեկուսացած լեռնոտ վայրում:

Վանքը կառուցված է Մաղարթա լեռան ստորոտի բարձրադիր մի վայրում, որտեղից բացվում է դեպի Արաքս գետը իջնող կանաչ ձորակը: Արաքսի մյուս ափին բարձրանում են Գողթան գավառի ժայռոտ լեռները:

Ջուլֆայից դեպի վանք տանող ճանապարհի ձախ կողմում է գտնվում կիսավեր մի մատուռ, շրջապատված գետին ընկած մի քանի խաչքարերով: Արաքսի հյուսիսային ափին է գտնվում հին Ջուղայի, այսինքն Շահ Աբբասի 1604 թվականին կործանած քաղաքի գերեզմանատունը, իր հարյուրավոր մարդահասակ խաչքարերով: Հին Ջուղայի գերեզմանատունը համարվում է ուշ միջնադարի հայ քարագործության գլուխգործոց:

Ս. Ստեփանոս վանքից մոտ 4 կմ դեպի արևմուտք, այնտեղ, ուր Վարդանանց պատերազմում հայտնի դարձած Տղմուտ գետը թափվում է Արաքս, գտնվում է հայկական Դարաշամբ գյուղը, այսօր ավերված վիճակում:

Գյուղի բնակչությունը, առաջին համաշխարհային պատերազմի վերջին տարիներին, օսմանյան բանակի Ատրպատական մոսուլու վտանգի տակ, լքել է գյուղը: 1921 թվականին բնակչության մի մասը կրկին վերա-

դարձել է իր հայրենի գյուղ, բայց երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, 1940-ին, կրկին լքել է գյուղը: Այսօր Դարաշամբ գյուղի տարածուն ավերակների մեջ կանգուն է մնացել միայն ԺԷ—ԺԸ դարերին պատկանող եկեղեցին, որտեղ առկա գեղեցիկ խաչքարերը ավելի հին շրջանի վկաներն են: Այս եկեղեցին, որ տարիներ շարունակ անմխիթար վիճակի մեջ էր գտնվում, այժմ նորոգության վերջին շրջանն է անցկացնում:

Ս. Ստեփանոս Նախավկա վանքի կառուցումը կապվում է Քրիստոսի աշակերտ Բարդուղիմեոս առաքյալի* հետ, որը, ըստ ավանդության, այս սրբավայրը հիմնել է քրիստոնեական կրոնի առաջին նահատակ Ստեփանոսի հետ: Նույն ավանդությունն ասում է, որ մոլեռանդ հրեաները նրան քարկոծելու ժամանակ բացվում է երկինքը, և նա երկնքում տեսնում է Քրիստոսին, խաչվելուց հետո, առաջին անգամ, իր Հոր մոտ նստած: Դրա համար կոչվում է Ստեփանոս Նախավկա, այսինքն առաջին վկան, որ Քրիստոսի խաչվելուց և համբառնալուց հետո նրան տեսնում է երկնքում:

Ս. Ստեփանոս Նախավկայի վանքը, ընդհանուր գծերով, բաղկացած է Մայր եկեղեցուց, որի հարավում է գտնվում վանգավատունը, իսկ հյուսիսում հետազայում ավելաց-

* Ավանդության համաձայն Բարդուղիմեոս առաքյալը քրիստոնեություն է քարոզել Նախիջևանի և Գողթանի շրջաններում, ապա անցել է Վասպուրական (Աղբակի շրջան), որտեղ և նահատակվել է: Իր նահատակության վայրում կառուցվել է Ս. Բարդուղիմեոսի վանքը (Ա. Հ.):

ված է Ս. Պողոս-Պետրոս փոքրիկ եկեղեցին. կան շրջափակում գտնվող մի քանի սենյակներ: Վանքի մյուս մասում են գտնվում խոցերն ու դասարանները, վանահոր սրահը, նաև տնտեսական բաժինը, ինչպես խոհանոցն ու հացթխարանը, ճաշարանն ու հարակից սենյակները:

րագրում է 1173-ին Մաղարթա—Ս. Ստեփանոս վանքին նվիրված ծաղկապարդ մի գիրք: 1270 թվականին Վարդան Բարձրաբերդցու գրքում հանդիպում ենք վանքի ու շրջապատի աշխարհագրական դիրքի նկարագրությանը: Ավելի ուշ, այսինքն 1332 թվականին, պատմական մի հիշատակու-



Ս. Ստեփանոս Նախավկայի վանքի ընդհանուր տեսքը

Հայկական պատմական հիշատակություններից տեղեկանում ենք, որ Մաղարթա վանքը (թիկունքի սարի անունով) գոյություն է ունեցել դեռևս է դարում, բայց ավելի ճշգրիտ տեղեկությունները վկայում են, որ վանքը վերանորոգվել է Բագրատունյաց Աշոտ Երրորդ թագավորի (953—977 թթ.) աջակցությամբ, տասներորդ դարում: Աշոտ Երրորդ Բագրատունու կամ Աշոտ Ողորմածի դուստր Հռիփսիմեի կտակում հիշվում է, որ վանքապատկան երեք եկեղեցիները խարխուլ վիճակ ունեին, որոնցից Մայր եկեղեցին հիմնովին նորոգում է իր հայրը:

Ժ դարի վերջից մինչև ԺԲ դարի կեսերը Ս. Ստեփանոս վանքի մասին հիշատակություններ չենք գտնում:

Հաջորդ հիշատակությունը գտնում ենք պատմիչ Օրբելյանի գրքում, որտեղ նա նկա-

թյունից տեղեկանում ենք, որ վանքում վանականների կողմից մշակությանն աշխատանք է կատարվում, ձեռագիր գրքեր են գրվում և կամ հին ձեռագրեր կրկին նորոգվում:

Այնուհետև բազմիցս վանքը հիշվում է իր դպրոցով, որտեղ երիտասարդ պատանիները կրթվում, դաստիարակվում էին հոգևոր ասպարեպի համար: Դարաշամբ գյուղը, որ վանքին ամենից մոտիկ է եղել և միջնադարում շուրջ 600—800 տուն բնակչություն ունեցել, ամենից շատ է օգտվել վանքի դպրոցից:

Սելջուկներից հետո 1221-ին մոնղոլներն են ներխուժում Հայաստան, իրենց հերթին կասեցնելով տնտեսական ու մշակութային զարգացումը: Այս շրջանից պահպանվել են վանքին վերաբերող մի շարք գրություններ,

ինչպես 1330-ին վանքապատկան հողերի կապակցությամբ Իլխան Աբու Սաիդի ֆերմանները:

Համաձայն հայր Ղ. Ալիշանի վկայության, 1427-ին Ս. Ստեփանոս վանքի եկեղեցին երեք խորաններ է ունեցել, իսկ հայր Ալիսյանն ասում է, որ վանքը 1440-ին շին ու գործոն էր:

Ս. Ստեփանոս վանքը, ինչպես և վանքապատկան գյուղերը, սելջուկների և մոնղոլների արշավանքների ժամանակ, բազմաթիվ անգամներ ավերվել ու թալանվել են, բայց անձնվեր կրոնավորների և ժողովրդի անխոնջ ջանքերով կրկին վերանորոգվել է վանքն ու շարունակել իր կրոնական-հոգեվոր աշխատանքը:

1589-ին Մարտիրոս վարդապետը վերակառուցման աշխատանքներ է տանում վանքում, սակայն հիմնովին վերանորոգման է ենթարկվում այն Հակոբ Ջուղայեցի վարդապետի օրոք:

1653 թվականին Հակոբ Ջուղայեցին որպես վանահայր գալիս է Ս. Ստեփանոսի վանք ու, անցնելով գործի, հիմնովին վերաշինում սրբավայրի խարխված եկեղեցին:

Հակոբ Ջուղայեցին 1655 թվականին, կաթողիկոս դառնալուց հետո, Էջմիածնից հեռանում է վանքի կառուցման աշխատանքներին, որոնք ավարտվում են 1662 թվականին, գրեթե տասը տարի տքնաջան աշխատանքից հետո: Եկեղեցու այս վիճակը պահպանվել է ավելի քան երեք հարյուր տարի, մինչև մեր օրերը: Այս ժամանակից սկսած ավելի հաճախ ենք հանդիպում վանքին վերաբերող հիշատակությունների:

1706-ից 1714 թվականը վերանորոգվում են վանականների խուցերը և 1759 թվականին Հակոբ կաթողիկոս Շամախեցու կարգադրությամբ վանահայր Միքայելը նորոգում է երկրաշարժից վնասված եկեղեցու տանիքը, վանքի խուցերն ու պարիսպը:

1826 թվականին նորից վերանորոգման է ենթարկվում եկեղեցին, և իր ներսի պատերի ու առաստաղի վրա ավելանում են որմնանկարներ, որոնք մասամբ պահպանվել են մինչև այսօր:

Վանահայր Սարգսի միջոցով լաքված այս աշխատանքների մասին են վկայում եկեղեցու դրսի երկու որմնաքանդակ հիշատակությունները:

Իրան-Օսմանյան և Իրան-Ռուս երկարատև պատերազմների միջոցին ավերվում ու թալանվում է վանքը, բայց կորույթի վանականների ջանքերով և ժողովրդի օգնությամբ վերաշինվում է նորից: Այս վիճակը տևում է մինչև ԺԹ դարի սկիզբը, երբ Թուրքմենչայի դաշնագրով 1828 թվականին Արաքս գետը ճանաչվում է որպես Իրանա-Ռուսական սահման:

Վանքը կորցնում է Արաքսի մյուս ափին գտնվող Նախիջևանի և Գողթանի հարուստ թեմերը: Այս դաշնագրի համաձայն շուրջ 40—50 հազար հայեր Ատրպատականի հայկական գյուղերից գաղթում են Արևելյան Հայաստան ու Հյուսիսային Կովկաս:

Ջրկվելով վանքի օգտին գանձվող տասնորդից և ուխտավորների նվերներից, տընտեսապես խեղճանալով, վանքի համայնքը, որն ավելի քան 10—15 վանականներ ուներ, փակվում է դպրոցը և վանքի գրադարանի ձեռագրերը, կաթողիկոսի կարգադրությամբ, փոխադրում Էջմիածին: 1840-ի երկրաշարժից վնասված վանգակատունն ու գմբեթը նորոգվում են նախ 1854-ին, ապա 1865—66-ին:

Ստեղծված վիճակի թելադրանքով Ս. Թադեի վանքի, ինչպես նաև Ս. Ստեփանոս Նախավկա վանքի թեմերը միացվելով, կազմվում է Ատրպատականի հայոց թեմակալ առաջնորդությունը՝ կենտրոն ունենալով Թավրիզը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, հատկապես հայ-թուրքական ընդհարումների ժամանակ, 1917—1921 թվականներին, թալանվում է վանքը և այրվում գրադարանում եղած գրքերը:

Վերջին տասնամյակներում երկու դարաշառքիներ՝ Ղապարը և Սարգիսը, իրենց ընտանիքներով, որպես պահապան, ապրել են վանքում:

Այսօր վանքում ապրում են ծերունի Սարգիսն ու մի քանի երիտասարդներ:



ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԳԱՆՁԵՐՆ ՈՒ ՏԱՂԵՐԸ

Հայ եկեղեցու և մշակույթի մեծ երախտավոր Ներսես Շնորհալին (ծնվ.՝ 1101 կամ 1102 թ., վախճ.՝ 1173 թ.), որն ստեղծագործել է ավելի քան հիսուն տարի՝ 1120—1173 թթ., թողել է մատենագրական չափազանց հարուստ ու բազմաժանր ժառանգություն: Հեղինակի գրական վաստակը, որ ներկայանում է և՛ արձակով, և՛ իբրև չափածո, աչքի է ընկնում իր լայն ընդգրկումներով, բերած նորույթներով, գրական հնարանքներով, վարպետ շարադրանքով և բարձր արվեստով: Այդ հարուստ ժառանգությունը, որ գրեթե ամբողջությամբ պահպանվել է, ըստ արժանվույն գնահատվել է ինչպես իր ժամանակ, այնպես էլ հետագայում: Հեղինակի ստեղծագործություններից շատերն ունեցել են մինչև իսկ մի քանի հրատարակություն. շատ գործեր լույս են տեսել նաև օտար լեզուներով: Հայ մատենագրության մեջ Ներսես Շնորհալին իր արձակ գրություններով զբաղեցնում է ուրույն ու կարևոր տեղ, բայց, անշուշտ, նա շատ ավելի մեծ է որպես բանաստեղծ. նրա չափածոն, որն աչքի է ընկնում իր պատկառելի քանակով և նյութի բազմապնդությամբ, ներկայանում է իբրև մեծածավալ քերթված, ներբող, խրատ, առակ-հանելուկ, շարական, գանձ, տաղ, և այլն: Սրանցից, տվյալ դեպքում, մեկ հետաքրքրողը հեղինակի գանձարանային ստեղծագործություններն են, որոնք ընդգրկում են **գանձ** (կամ **քարոզ**), **տաղ**, **փոխ** (կամ **հորդորակ**) և **մեղեդի** անուններով հայտնի հոգևոր երգեր: Նշված բանաստեղծությունների առանձին նմուշներ տարբեր ժամանակներում և զանազան առիթներով լույս են տեսել պարբերականներում

կամ գրքերում, իսկ Ներսես Շնորհալու չափածո գործերի 1830 թ. Վենետիկում հրատարակված «Բանք չափա» հատորում դրանք ի մի են բերվել **Տաղք** և **Գանձք** խորագրերի տակ՝ ներկայացնելով 59 տաղային միավոր և 2 գանձ¹:

Խնդրո առարկա ստեղծագործությունները, որպես կանոն, հանդես են գալիս եկեղեցական հատուկ մատյաններում հայտնի՝ «Գանձարան» անունով: Այդ ժողովածուները, որոնք պահպանվել են մի քանի հարյուրի հասնող ընդօրինակություններով և միջնադարում միայն կիրառում են ունեցել, մինչև վերջերս առանձին հետապտության նյութ չէին դարձել. ըստ այդմ, դրանցում տեղ գրած բանաստեղծությունները եթե գրավել են մասնագետների ուշադրությունը, ապա սուկ իբրև առանձին ուսանավորներ, ժողովածուի օրինաչափություններից անկախ ու մեկուսի: Այդ է պատճառը, որ Ներսես Շնորհալու կյանքին ու ստեղծագործությանը նվիրված Հ. Ղ. Ալիշանի, Մ. Աբեղյանի և այլոց ըստ ամենայնի ընդգրկում աշխատությունները, ինչպես նաև բնագրերի առկա հրատարակությունները, բանաստեղծի գանձերի ու տաղերի և դրանց փոխառնությունների մասին մեկ ամբողջական ու ճշգրիտ պատկերացում չեն տալիս: Գանձարանների մեր կատարած հետապտությունը ի հայտ բերեց ոչ միայն Ներսես Շնորհալու գրչին պատկանող

¹ Ներսես Շնորհալի, Բանք չափա, Վենետիկ, 1830, էջ 365—491: Հատորը նույնությամբ վերահրատարակվել է 1928 թ., ընդ որում, փոփոխված են միայն էջերը: Մենք օգտագործել ենք առաջին հրատարակությունը:

և առ այսօր բանասիրությանն անհայտ տաղային նոր միավորներ, այլև յուրատեսակ հոգևոր այդ երգերի՝ իբրև գանձարանային ստեղծագործությունների մի շարք առանձնահատկություններ, որով հնարավոր դարձավ ճիշտ գնահատել Ներսես Շնորհալու գանձարանային ժառանգությունը. բացահայտվեց հեղինակի ինչպես նորահայտ, այնպես էլ հրատարակված տաղերը հատկանշող հիմնական օրինաչափությունը, այն է՝ տաղի ու փոխի (կամ հորդորակի)՝ իբրև համակարգային ամբողջության ձուլվ միասնությունը: Տաղային միավորների այդպիսի հարաբերությունն առանձնապես ցայտուն է դրսևորված հիշյալ բանաստեղծությունների հնագույն ընդօրինակություններում, ընդ որում, վերջիններս աչքի են ընկնում նաև բնագրային առումով իրենց առավել անաղարտությամբ: Ահա թե ինչու, Մաշտոցի անվան Մատենադարանի՝ հանձնարարությամբ, ձեռնամուխ եղանք նոր ու գիտական հրատարակությամբ ներկայացնելու Ներսես Շնորհալու գանձերի ու տաղերի քննական բնագրերը: Սույն հոդվածով կփորձենք ամփոփ ձևով շարադրել մեր կատարած աշխատանքի արդյունքները և տալ Ներսես Շնորհալու գանձերի ու տաղերի գանձարանային ճիշտ պատկերը:

*
* *

Ներսես Շնորհալու գանձերի ու տաղերի տպագիր հիմնական աղբյուրը, ինչպես ասվեց, Վենետիկում հրատարակված «Բանք չափա» հատորն է: Բայց հիշյալ բանաստեղծությունների բնագրային ու կառուցվածքային առանձնահատկությունների լրացահայտման առումով անգնահատելի են ձեռագիր Գանձարանների վաղագույն՝ ԺԳ—ԺԴ դդ. ընդօրինակությունները: Դրանցից կարևոր են, հատկապես, Մաշտոցի անվան Մատենադարանի № 3503 (1394 թ.) Տաղարանն ու № 7785 (ԺԴ դ.) Գանձարանը, ինչպես նաև Փարիզի Ազգային գրադարանի № 79 (1241 թ.) Տաղարանն ու № 80 (1380 թ.) Գանձարանը³: Նշված գրչագրերում է, որ Ներսես Շնորհալու տաղային միավորները պահպանվել են առավելագույն քանակով ու անաղարտությամբ: Այդ ձեռագրերը մեզ

համար ծառայել են իբրև խիստ արժանահավատ ու վստահելի սկզբնաղբյուրներ, քանի որ չնայած իրենց ունեցած համեմատելի ընդհանրություններին, աչքի են ընկնում այնպիսի տարբերություններով, որոնք բացառում են միմյանցից ընդօրինակված լինելու հնարավորությունը: Հիմնականում այս ձեռագրերի օգնությամբ կարողացել ենք կապել Ներսես Շնորհալու գանձերի ու տաղային միավորների առավել ճշտված ու ամբողջական համակարգը⁴:

«Բանք չափա»-ում Ներսես Շնորհալու անունով ներկայացված է երկու գանձ.

1. Գանձ սրբոյ Վարդավառին (ծայրակապ՝ «Ներսէսի երգ») — ներգործական պօրուխն...⁵

2. Գանձ Փոխման Աստուածածինի (ծայրակապ՝ «Ներսէսի երգ») — Նորահրաշ տօնիա...⁶

Ձեռագրերից մեզ հայտնի է դարձել ևս մի գանձ, որ աղբյուրների մի մասում պահպանվել է Ներսես Շնորհալու անունով: Գանձը՝ նվիրված Հրեշտակապետաց տոնին, ունի հետևյալ խորագիրն ու սկզբնատողը.

Քարոյ սրբոց հրեշտակապետացն, արարեալ տեառն Ներսէսի Հայոց կաթողիկոսի կայեցոյս—Աստուած անեղ...⁷

Ի տարբերություն նախորդ երկուսի այստեղ տների սկզբնատառերը հոդում են ոչ թե հեղինակի անունը, այլ «Անմահից քարոյ» բառակապակցությունը, որն, անշուշտ, նկատի ունի բովանդակությունը: Խորագրային վերագրումը, նաև բանաստեղծության ընդհանուր կառուցվածքն ու ոճը բավարար հիմք են տալիս, որպեսզի այս միավորը դասենք Ներսես Շնորհալու գանձերի շարքը: Հետաքրքրական է նկատել, որ Մատենադարանի № 7785 և Փարիզի № 80 ձեռագրերում, որոնցում տաղային միավորները

⁴ Անշուշտ, քննական բնագրերի համար օգտագործել ենք շատ ավելի գրչագրեր՝ շուրջ չորս տասնյակ, բայց ելակետային նշանակություն են ունեցել վերոհիշյալները ու հատկապես № 3503 Տաղարանն ու № 7785 Գանձարանը, որոնք ամփոփում են հեղինակի տպագիր ու անտիպ մեզ հայտնի տաղային բոլոր միավորները (բացառությամբ մեկ-երկուսի):

⁵ Ներսես Շնորհալի, Բանք չափա, Վենետիկ, 1830, էջ 474—484:

⁶ Սույն տեղում, էջ 485—491:

⁷ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № № 7785 (թերթ 481ա) 4068 (թերթ 171բ), Փարիզի Ազգ. գրադարան, ձեռ. № № 79 (թերթ 229ա), 80 (թերթ 283բ), Անթիլիասի Կաթողիկոսարան, ձեռ. № 98 (թերթ 213բ), Երուսաղեմի Պատրիարքարան, ձեռ. № 231 (թերթ 252ա), Տյուբինգենի համալսարանի գրադարան, ձեռ. № Ma XIII 61 (թերթ 121ա):

² Ներսես Շնորհալու նորահայտ տաղերի մասին տե՛ս նաև՝ Ներսես Շնորհալի (Հոդվածների ժողովածու), Երևան, 1977, էջ 139—156:

³ Նշված ձեռագրերի, և առհասարակ Գանձարանների ու գանձարանային միավորների մասին մանրամասն տեղեկությունների համար տե՛ս Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, Երևան, 1981, էջ 21—54:

ներկայանում են համապատասխան գանձերի կից, Այլակերպության, Աստվածածնի Վերափոխման, ինչպես նաև Հոգևորականության տոներին նվիրված Ներսես Շնորհալու վերոհիշյալ գանձերին առընթեր հանդես են գալիս այդ տոներին հատկացված հեղինակի տաղային միավորները կապմելով գանձ + տաղ + փոխ լատինարանային տիպ համակարգ:

Ներսես Շնորհալու կյանքին ու ստեղծագործությանը նվիրված իր գրքում Հ. Ղ. Ալիշանն ակնարկում է մի այլ գանձի մասին, որը հատկացված է Մյուռնոփոնությանը (Սոր օրհնություն ընդ հայցումաց... սկզբը-նատողով), ներկայանում է Ներսես Շնորհալու անունով և տների սկզբնատառերով հոդվում է «Ներսեսի երգ»⁸: Այս գանձը, որպես կանոն, Գանձարաններում տեղ չի գտել ու հանդիպում է սուս Հայր Մաշտոցներում: Վերջիններս, ի տարբերություն սովորական Մաշտոցների, բովանդակում են եպիսկոպոսի և կաթողիկոսի ձեռնադրության պահանջները՝ մի արարողություն, որը իրականություն էր կատարել միայն հոգևոր բարձրագույն դասի ներկայացուցիչը՝ կաթողիկոսը (նրա չգոյության դեպքում՝ եպիսկոպոսները): Կիրառության այս սեղմ շրջանակով էլ պիտի բացատրել հիշյալ ժողովածուների չափազանց փոքր թիվը և տպագիր հրատարակությունների բացակայությունը: Հայր Մաշտոցներում մյուռնոփոնության կանոնը բերված է կաթողիկոսի ձեռնադրության կանոնի կից. դա միանգամայն հասկանալի է, քանի որ այդ ծեսը եղել է կաթողիկոսի մենաշնորհը: Կանոնն ամբողջությամբ, ներառյալ Ներսես Շնորհալու գանձը, պատգործական նկատառումներով առանձնացվել է Մաշտոց ժողովածուներից ու հրատարակվել 1876 թ., Էջմիածնում⁹: Մյուռնոփոնության ծիսակատարության մասնակիցների համար նախատեսված այդ գրքույկը ունեցել է խիստ սահմանափակ տպաքանակ և օգտագործման չափազանց նեղ ոլորտ. այդ է պատճառն, անշուշտ, որ բանասիրական լայն շրջանակներին չանձը մատչելի չի եղել:

Խնդրո առարկա գանձը, որ ներկայանում է իբրև Տեառն Ներսեսի քարոզ, հիշյալ կանոնում հաջորդում է մի շարք սաղմոսների, ընթերցվածների ու աղոթքների, ի թիվս դրանց նաև մի մեղեդու՝ Հայր ամենակալ, որ առաքելներ... սկզբնատողով: Տպագրում սույն մեղեդու և համապատասխան գանձի մասին հիշատակություն կա նաև կանոնի վերջում,

որ նշված է, թե արարողության ավարտին «երգեն դպիրք ամացորդս մեղեդույ սրբոյ մեռոնի»՝ «Հայր ամենակալ...», և ամացորդս քարոսի տեառն Ներսեսի» (էջ 36): Մյուռնոփոնությանը նվիրված մեղեդու ու գանձի այս առնչությունը ստեղծում է համակարգային մի պատկեր, որը հիշեցնում է Գանձարանի գանձ-տաղ-փոխ-մեղեդի համակարգը: Այն իրողությունը, որ բոլոր աղբյուրներում մեղեդին անհեղինակ է ու միշտ ներկայանում է Ներսես Շնորհալու գանձից անբաժան (դրանք միմյանցից անջատված են մի քանի սաղմոսներով ու ընթերցվածներով), ինքնըստինքյան ենթադրել է տալիս, որ հիշյալ երկու միավորները կարող էին հորինված լինել միաժամանակ և միևնույն հեղինակի կողմից:

Քանի որ Ներսես Շնորհալու խնդրո առարկա գանձը Գանձարաններում երբևէ չի հանդիպում, բնականաբար պիտի մտածել, որ այն հորինվել է իբրև ոչ գանձարանային ստեղծագործություն: Գանձեր ու տաղեր հաճախ են հանդիպում Մաշտոցներում, բայց դրանք մեծ մասամբ կապվում են համեմատաբար ուշ շրջանի հետ և գերազանցապես թաղման ծեսին վերաբերող ողբանման ստեղծագործություններ են: Ներսես Շնորհալու անունով պահպանված այս գանձը առայժմ մեզ հայտնի ենազույն նմուշն է, որը գրված է գանձարանային սկզբունքներով և ունի ծիսական կիրառություն: Ներսես Շնորհալուց հետո ու թերևս նրան հետևելով, նման փորձ է կատարել Մխիթար Այրիվանեցին, որի այդ բնույթի բանաստեղծությունները, սակայն, դուրս չեն եկել Գանձարանների շրջանակից և պահպանվել են խիստ սակավ ընդօրինակություններով¹⁰: Ինչ վերաբերում է մյուռնոփոնությանը հատկացված Ներսես Շնորհալու գանձին, ապա վերջինիս լայն կիրառությանն ու առ այսօր օգտագործվելուն, անկասկած, նպաստել է նաև տվյալ կանոնի նշանակությունն ու կարևորությունը: Հայտնի է, որ ինքը՝ Ներսես Շնորհալին կարգավորել է եկեղեցական շատ կանոններ ու զբաղվել ծիսական արարողությունների հետ կապված պանական հարցերով: 1165 թ. Մամեստիայում գրած Դավանության իր թղթում, որն ուղղված է Մանվել կայսեր փեսա դուքս Ալեքսին, հեղինակն ի թիվս մի քանի այլ ծեսերի ու սովորությունների անդրադառնում է նաև մյու-

⁸ Հ. Ղ. Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 449, 454:

⁹ Կանոն օրհնութեան սրբալոյս մեռոնին, Վաղարշապատ, 1876, էջ 37—44:

¹⁰ Նշված ստեղծագործությունների մասին տե՛ս Գ. Հովսեփյան, Մխիթար Այրիվանեցի, նորագիտ արձանագրություն և երկեր, Երուսաղեմ, 1931, էջ 6—8: Նաև՝ Է. Հարությունյան, Մխիթար Այրիվանեցու «Գանձարանը», «Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 3, էջ 110—111:

ոռնօրինությանը: Հ. Ղ. Ալիշանի կարծիքով հենց հիշյալ գանձի առկայությունը վկայում է այն մասին, որ Ներսես Շնորհալին «Մյուռնօրիններից բովանդակ կանոնն ալ ինքն նորեն կարգավորեր և ճոխացուցեր է, հավասար ուրիշ եկեղեցական հանդիսից և տոնից. այսպես բարեկարգելով այն կաթողիկոսաց սեփական արարողությունն ալ՝ փոխանակ մեղադրանացն օտարաց՝ Զիթենվոյ, յուղով չըլլալուն համար»¹¹:

Այսպիսով, Ներսես Շնորհալու անունով առաջմմ մեկ հայտնի են չորս գանձեր: Դրանց քնությունը ցույց է տալիս, որ հեղինակն իր այդ բանաստեղծությունները հորինել է Գրիգոր Նարեկացու համանուն ստեղծագործությունների հետևողությամբ ու նմանությամբ: Բոլորն էլ անհանգ են ու գրված, ապառ տաղաչափությամբ: Նկատելի է նաև ծայրակապային նմանություն¹²: Գանձ ու տաղ համակարգային պատկերը, որ ի հայտ է գալիս Գրիգոր Նարեկացու այդ բնույթի երկերում, Ներսես Շնորհալու գանձերի այս փոքրիկ փնջում, բնականաբար, ակնառու է: Դրա փոխարեն գանձարանային օրինաչափությունների ցայտուն դրսևորումը մենք տեսնում ենք հեղինակի տաղերում, որոնց և կանոնադառնանք այժմ:

Տպագիր աղբյուրներում տեղ գտած Ներսես Շնորհալու տաղերը, ամբողջությամբ վերցրած, հասնում են ավելի քան վեց տասնյակի: Սակայն, հեղինակի տաղային ժառանգությունն այդքանով չի սահմանափակվում: Հնագույն գրչագրերում մեկ հանդիպել են Ներսես Շնորհալուն պատկանող շուրջ չորս տասնյակ միավորներ, որոնք մինչև այժմ մնացել են անհայտ ու անտիպ: Այսպիսով ստացվում է տաղերի բավական պատկառելի մի քանակ: Այդ բանաստեղծությունների գանձարանային պատկերը առավել ակնբախ է վաղագույն ընդօրինակություններում: Պարզվում է, որ հեղինակն իր տաղերը հորինել է տաղ ու փոխ պույգերով: Տվյալ տոնին հատկացված տաղն ու համապատասխան փոխը հանդես են եկել մեկ ընդհանուր խորագրով. վերջինս դրվել է տաղից առաջ, իսկ փոխը առանձին խորագիր չի ունեցել, այլ՝ Փոխէ, Փոխ կամ Փ նշումը՝ գրված կարմիր թանաքով, երբեմն էլ փոխարինված լոկ պայմանական գծանշանով: Գանձարան ժողովածուների նյութերի ցանկում փոխերը չեն ընդգրկվել:

¹¹ Հ. Ղ. Ալիշան, նշված աշխ., էջ 449:

¹² Աներկբայելի է Գրիգոր Նարեկացու գանձարանային ստեղծագործությունների և ընդհանրապես նրա արվեստի թողած ազդեցությունը Ներսես Շնորհալու համաբնույթ բանաստեղծությունների վրա: Այդ հարցին կանոնադառնանք առանձին:

նշանակում է, դրանք դիտվել են ոչ թե անշատաբար, այլ իբրև տաղերի օրգանական մասը: Այդ ամբողջության մասին են վկայում նաև տաղ ու փոխ պույգերի իմաստային ծայրակապերը, որոնք միասին կապում են ավարտուն նախադասություն: Ժամանակի ընթացքում Ներսես Շնորհալու տաղային պույգերը տրոհվել են, տաղերն ու փոխերը միմյանցից անջատվել ու օգտագործվել առանձին կամ ուրիշ հեղինակների հաճապատասխան երգերի՝ վերակցումներով: Դրա հետևանքով ստեղծվել են պանապան խճողումներ, որտեղ կորել է և՛ երբեմնի ամբողջությունը, և՛ իսկական հեղինակը: Հիմա ավելի է մեծացել, երբ բանաստեղծությունները կրճատվելով պրկվել են ծայրակապով կամ խորագրով արտահայտված տվյալներից:

Ասվածից պիտի հետևենք, որ Ներսես Շնորհալու տաղերի քնությունն առաջին հերթին ենթադրում է դրանց տաղ ու փոխ պույգերի նախնական ամբողջականության վերականգնումը: Տաղերի տպագրված օրինակներում այդ հարաբերությունը երբեմն պահպանված է, բայց հրատարակիչները հաճախ չեն գիտակցել տաղի ու փոխի միասնականությունը իբրև ձույլ ամբողջություն:

Ներսես Շնորհալու տաղերի վաղագույն հրատարակության մեջ՝ «Բանք չափառ» ժողովածուում ի մի են բերված 58 տաղային միավորներ¹³: Գրքում դրանց ընդհանուր թիվը 59 է, բայց նորոգող հնութեան... սկզբվածքով միավորը մենք նկատի չենք ունենում, որովհետև այն սովորաբար ներկայանում է հեղինակի Աշխարհ ամենայն... արտագանձարանային երգին կից ու, մեր կարծիքով, սխալմամբ է ընդգրկված նրա տաղերի շարքում: Բացի այդ, Յարեառ փառաց թագաւորն... միավորը, իրականում, ոչ թե առանձին բանաստեղծություն է, այլ կից գտնվող Նոյնագոյ ընդ Հօր... տաղի մասը: Ինչ վերաբերում է Հանձարեղ շնորհալիդ... և Շնորհօք Սըրբոյ Հոգւոյն... տաղերին, ապա դրանք, մեր կարծիքով, Ներսես Շնորհալունը չեն¹⁴: Հետևապես, ժողովածուն ի-

¹³ Ներսես Շնորհալի, Բանք չափառ, էջ 365—491:

¹⁴ Հանձարեղ շնորհալիդ... տաղը՝ նվիրված Հոփսիմե կույսին, տների սկզբնատառերով հոդում է «Հոփսիմե», իսկ յուրաքանչյուր տան երկրորդ տողի սկզբնատառերով՝ «Յօհաննէս»: Դժվար է ասել հիշյալ Հովհաննէսը տվյալ բանաստեղծության հեղինակն է, թե՛ պատմիրատուն. համեմայն դեպս, այդ անվան առկայությունը տարակուսելի է դարձնում Ներսես Շնորհալու հեղինակային իրավունքը:

Շնորհօք Սըրբոյ Հոգւոյն... միավորը թերի է, ունի «Ը—Ջ» ծայրակապը, փոխ է ու կից Անեղ Որդին... տողին, որն իր հերթին ունի այբուբենի տառերը հո-

րականում ընդգրկում է հեղինակի գրչին պատկանող 55 տաղային միավոր: Ստորև բերում ենք դրանց ցանկը՝ այբբենական հաջորդականությամբ.

1. Այսօր աւետեաց Գաբրիէլի...
2. Այսօր Գաբրիէլ...
3. Այսօր մայր Սիոն...
4. Անարատ տաճար...
5. Անեղ Որդին...
6. Անմարմնոցն հրեղինաց...
7. Առաջին լոյս երբեակ...
8. Առաւօտ լուսոյ արնելեան...
9. Առաքեալք Աստուածորդոյն...
10. Աստանօր տեսիլ...
11. Աստուածային խորոցն...
12. Արեգակն արդար ըզիւր...
13. Բանի աւետաւոր...
14. Բարբառ աւետեաց...
15. Բարունակ բերող...
16. Եկայք զտարճացեալ...
17. Երգ նոր աւետեաց...
18. Երջանիկ հոգիահրաշ...
19. Ի գաւազանէն...
20. Ի խաչին տընկեալ...
21. Ծարաւեցաւ...
22. Կանայքն արտասուօք...
23. Կեանքն ընդ Հօր...
24. Կենաց փայտ...
25. Հանել ընդ նոսին...
26. Հօր կամաւ կշեալ...
27. Մայր Աստուծոյ Մարիամ...
28. Ներպարունակեալ իննեակ...
29. Ներպարունակեալ խորհուրդ...
30. Նըստեալ կանայքն...
31. Նոյնագոյ ընդ Հօր...
32. Նոյն ինքն անդրանիկըն...
33. Նորահրաշ ծնընդեան...
34. Նորահրաշ տեսիլ...
35. Նորահրաշ տօնիւս...
36. Նոր աւետեաց լուր...
37. Նոր դրախտին եկեղեցւոյ...
38. Նոր դրախտի քո, Տէ՛ր...
39. Նոր Եդեմ բանաւոր...
40. Նոր երկինք յերկրի...
41. Նոր և առաջին լոյս...
42. Նոր թագաւորին...
43. Նոր իմն աւետեաց...

դող ծայրակապ («Ա—Ն») և նույնպէս թերի է: Կարծում ենք, խնդրոյ առարկա փոխը, որը նախկինում անշուշտ եղել է ամբողջական, անկախ է կից գըտնըվող տաղից, որից տարբերվում է և՛ իր տաղաչափությամբ, և՛ ծայրակապային առանձնահատկությամբ. մանավանդ որ այլ աղբյուրներից հայտնի է Անեղ Որդին... տաղի նաև ամբողջական օրինակը՝ «Ա—Բ» ծայրակապով:

44. Նոր իմն է հընչին...
45. Նոր լոյս յարփենտոյն...
46. Նոր ծաղիկ բըղխէ...
47. Նոր ծաղիկ պայծառ...
48. Նոր ձայն աւետեաց...
49. Նորոյ գինտոյն...
50. Նոր տօնիւս...
51. Որդիքն Որոտման...
52. Սրովբէից ձայնիւ...
53. Տէր փառաց այսօր...
54. Տէր փառաց անձառ...
55. Տիրական տօնիւս...

«Բանք չափաւ»-ում Ներսէս Շնորհալու տաղային միավորները զետեղված են **Տեառն Ներսէսի տաղք** ընդհանուր խորագրի տակ և դասավորված ըստ եկեղեցական տոների հաջորդականության: Վերնագրերը, սովորաբար, համապատասխան տոների անվանումն են: Այսպէս, օրինակ. **Աւետեաց, Ծաղկապարդին, Ի Փոխումն Կուսին** և այլն: Մի շարք տաղեր խորագրված են՝ **Ի նոյն**. դա այն դեպքերում է, երբ տվյալ միավորը հատկացված է նախորդի համար արդեն մատնանշված տոնին: Օգտագործված է նաև **Յորդորակ** բառը. սրանք փոխերն են, որոնք հաջորդում են տոնի անվանումը նշող կամ **Ի նոյն** խորագիրը ունեցող միավորներին և այդպէս են կոչվում ուշ շրջանի ձեռագրերում: Խորագրային այս ձևերն, անշուշտ, ստեղծվել են հրատարակիչների կողմից: Թէ ի՞նչ ընդօրինակություններ են օգտագործվել հիշյալ հրատարակչության համար և ինչպիսի՞ք են եղել բնագրային խորագրերը՝ չգիտենք: Միավորները ներկայացված են առանձին-առանձին, իբրև ինքնուրույն բանաստեղծություններ. այսուհանդերձ, **Յորդորակ** կոչվածները լինելով համապատասխան տաղերի կից, ապացուցում են վերջիններիս հետ իրենց ունեցած երբեմնի կապը: Ըստ այդմ, ժողովածուում որպէս զուգորդ ներկայանում են հետևյալ միավորները.

1. Այսօր աւետեաց Գաբրիէլի...
 2. Նոր իմն աւետեաց...
 3. Նոր ձայն աւետեաց...
 4. Նըստեալ կանայքն...
 5. Տէր փառաց այսօր...
 6. Ներպարունակեալ խորհուրդ...
 7. Այսօր Գաբրիէլ...
 8. Նոր դրախտին եկեղեցւոյ...
 9. Առաջին լոյս երբեակ...
 10. Առաքեալք Աստուածորդոյն...
 11. Այսօր մայր Սիոն...
 12. Արեգակն արդար ըզիւր...
 13. Որդիքն Որոտման...
 14. Ի խաչին տընկեալ...
- Յորդորակ.** Նոր ծաղիկ բըղխէ...

Յորդորակ. Հօր կանառ իջեալ...
 Յորդորակ. կանաչքն արտասուօք...
 Յորդորակ. Կեանքն ընդ Հօր...
 Յորդորակ. Աստանօր տեսիլ...
 Յորդորակ. Հանել ընդ նոսին...
 Յորդորակ. Անարատ տաճար...
 Յորդորակ. Կենաց փայտ...
 Յորդորակ. Նոր տօնիս...
 Յորդորակ. Եկաք զտարճացեալ...
 Յորդորակ. Նոր դրախտի քո, Տէ՛ր...
 Յորդորակ. Բանիւ աւետաւոր...
 Յորդորակ. Նոր լոյս յարփենլոյն...
 Յորդորակ. Ի գաւազանէն...¹⁵

Հետաքրքրական է նկատել, որ սրանք, բացառությամբ մի քանիսի, տաղի ու փոխի նույնպիսի հարաբերությամբ են ներկայանում նաև հնագույն ընդօրինակություններում:

Ներսես Շնորհալու տաղերի մյուս կորևոր հրատարակությունը կապվում է Նորայր Եպիսկոպոս Պողարյանի անվան հետ: «Սիոն» ամսագրի 1949 թ. 1—9-րդ համարներում նա պարբերաբար լույս է ընծայել Երուսաղեմի հավաքածուի № 231 և № 1193 ձեռագրերում իրեն հանդիպած մի շարք տաղեր, որոնց մի մասը 1830 թ. վենետիկյան հատողի համապատասխան թերի օրինակների լրացումներն են, իսկ մի քանիսը՝ այդ հատորում առհասարակ բացակայող նմուշներ: Ահա այդ միավորների ցանկը.

ա) Լրացումներ

1. Անեղ Որդին...
2. Նոր դրախտին եկեղեցւոյ...
3. Նոր Եղեմ բանաւոր...¹⁶
4. Նոր ծաղիկ պայծառ...
5. Նոր ձայն աւետեաց...
6. Սրովբէից ձայնիւ...

բ) Նորահայտներ

1. Այսօր ընդ ծագելն արևուն...
 2. Այսօր լոյս ծագեաց...
 3. Բարձրացիր դշխոյ...
 4. Գովեմք այսաւր պիայրըն բարո...
 5. Գրիգորիոս, առաքինի հըսկող...
 6. Յնծան այսօր երկինք...
- Փ. Աստուածաւեր և սուրբ... (տաղի մասն է)
 Փ. Լրան պաւտեաց... (տաղի մասն է)

¹⁵ Գրքում տաղ ու փոխ-պոյգերով են ներկայանում նաև **Անեղ Որդին...** (Յորդորակ՝ Շնորհօք Սըրբոյ Հոգւոյն...) և **Նայեազոյ ընդ Հօր...** (Յորդորակ՝ Յարեաւ փառաց թագաւորն...) միավորները:

¹⁶ Տաղի ամբողջական օրինակը նախապես հրատարակված է եղել, բայց Ն. Եպս. Պողարյանը, ըստ երևույթին, չի իմացել (տե՛ս «Սիոն», 1867, № 1, էջ 14):

Ցանկում տեղ գտած **Յնծան այսօր երկինք...** տաղը Ն. Եպս. Պողարյանից առաջ լույս է ընծայել Ա. Չոպանյանը: Այդ առաջին հրատարակությունը կատարված է վենետիկյան հավաքածուի № 475 ձեռագրի հիման վրա, ուր բանաստեղծությունն անհեղինակ է. հրատարակչին հայտնի է, սակայն, տաղի էջմիածնի Մատենադարանում պահվող մի օրինակ՝ **Տեառն Ներսէսի առացեալ խորագրային նշումով**, որն ըստ Ա. Չոպանյանի նկատի ունի Ներսես Շնորհալուն¹⁷: **Գրիգորիոս, առաքինի հըսկող...** և **Բարձրացիր դշխոյ...** միավորները, որոնք կապվում են տաղ ու փոխ-պոյգ, Ն. Եպս. Պողարյանը հրատարակել է առանց հեղինակային վերագրման: Այդ երկու բանաստեղծությունները, նաև ցանկում տեղ գտած մյուս միավորները, հնագույն աղբյուրներում պահպանված են Ներսես Շնորհալու անունով, ուստի հեղինակային պատկանելությունը կասկած չի հարուցում:

Տաղ ու փոխ-պոյգի ուշագրավ պատկեր են ներկայացնում **Նոր երկինք յերկրի...** և **Իմանալի սերովբէ...** միավորները: «Բանք չափաւ»-ում տաղը թերի է, առկա են սկիզբը և ավարտը («Ներսէս...ի» ծայրակապով): Հին գրչագրերում պահպանված է բանաստեղծության նաև միջին մասը, որով տաղն ամբողջանում է և հողում «Ներսէսի գովեստ Աստուածածնի»: Փոխը ևս ձեռագրերում հաճախ հանդիպում է հատվածաբար, սկսած **Մայր կենդանեացըն հոգւոց...** տողից, «Մեծին Թորոսի ե» ծայրակապով, որի պատճառով, թյուրիմացաբար, Թորոսը համարվել է բանաստեղծության հեղինակը¹⁸: 1947 թ. Ն. վրդ. Ակիւնյանը լույս է ընծայել **Իմանալի սերովբէ...** միավորն ամբողջությամբ «Ի խնդրո մեծին Թորոսի ե» ծայրակապով¹⁹: Այսպիսով, տաղի ու փոխի ծայրակապաւորն շղթան կապվում է՝ «Ներսէսի գովեստ Աստ-

¹⁷ Ա. Չոպանյան, Հայ Էջեր, Փարիզ, 1912, էջ 49—50: Ա. Չոպանյանի ակնարկած էջմիածնի Մատենադարանի № 47 ձեռագիրը. Գևորգյան ցուցակի թվահամարն է, որը համապատասխանում է Մաշտոցի անվան Մատենադարանի № 2672 ձեռագրին:

¹⁸ Ա. վրդ. Տեկանց, Հայերգ, Թիֆլիս, 1882, էջ 7:

¹⁹ Ն. վրդ. Ակիւնյան, Ս. Ներսէս Շնորհալույ Գովեստ ի ս. Աստուածածնին ի խնդրոյ մեծին Թորոսի, «Հանդես ամսօրեայ», 1947, № 1, էջ 46—49: Հիշյալ փոխը, ավելի ուշ, կրկին ամբողջությամբ լույս է տեսել համապատասխան տաղից անջատ և իբրև նորահայտ ու անտիպ բանաստեղծություն. ընդ որում, վերջին երկու տողերը (սկ. Դու ջուշան ծաղիկ...) մեկ այլ բանաստեղծության սկիզբ են ու սխալմամբ են կցվել հիշյալ տաղին (տե՛ս Ա. վրդ. Բերբերյան, Ս. Ներսես Շնորհալու՝ անտիպ տաղերը, «Էջմիածին», 1967, № 4, էջ 30):

վածածնի ի խնդրո մեծին Թորոսի ե» նախադասությունը, որտեղ հիշվող Թորոսը, ինչպես իրավացիորեն նկատել է տալիս Ն. վրդ. Ակինյանը, պիտի լինի Կիլիկիայի իշխան Լևոնի որդի Թորոսը: Հայտնի է, որ Լամբրոնի տեր Օշին իշխանի և Թորոսի միջև ծագած գծությունը հարթելու նպատակով Ներսես Շնորհալին անձամբ ուղևորվել է նրանց մոտ. անհավանական չէ, որ տվյալ բանաստեղծությունը գրված լինի Թորոս Բ իշխանի խնդրանքով, որը կոչվել է Մեծն Թորոս և հայտնի է եղել նաև իր բարեպաշտությամբ ու իբրև «շինող եկեղեցեաց և վանորեից»²⁰:

Ներսես Շնորհալու տաղերի նմուշներ հրատարակվել են նաև «Բազմավեպ»-ի էջերում: Դրանք են.

1. Առաւօտին շաւտելի...²¹

2. Կայր մայր Տեառն...²²

3. Միակն ի միոյն...²³

Սրանցից առաջինը ներկայացված է իբրև անհեղինակ տաղ: Մյուս երկուսի խորագրերում առկա է Ներսես կաթողիկոսի անունը: Հնագույն աղբյուրներում բոլորն էլ պահպանված են Ներսես Շնորհալու անունով:

Ա. վրդ. Տևկանցը ևս հրատարակել է Ներսես Շնորհալու տաղերի մի փունջ՝ 13 միավոր: Դրանք, սակայն, տպագրությամբ հայտնի միավորներ են, որոնք քանակական որևէ փոփոխություն չեն առաջացնում²⁴: Ուշագրավ է Անեղ Որդին... միավորը, որը նման չէ ո՛չ 1830 թ. հրատարակությանը, ո՛չ «Սիոն»-ում տպագրվածին: Այս տարբերակը մեկ հանդիպել է հնագույն գրչագրերում:

Ներսես Շնորհալու տաղերի որոշ նմուշներ լույս են տեսել նաև թարգմանաբար: Ազաթանգեղոսի 1843 թ. իտալերեն հրատարակության վերջում, Հավելված բաժնում, Լուիջի Կարրերի թարգմանությամբ բերված են երեք տաղեր Ներսես Շնորհալու անունով.

1. Երջանիկ հոգիահրաշ...²⁵

2. Ի յեյս արևու...²⁶

3. Հանձարեղ շնորհալիդ...²⁷

Սրանցից Ի յեյս արևու... միավորը պատկանում է ոչ թե Ներսես Շնորհալու, այլ նրա

եղբոր՝ Գրիգոր Գ կաթողիկոսի գրչին: Հանձարեղ Շնորհալիդ... տաղը ևս, ինչպես ասվեց, սխալմամբ է վերագրվել Ներսես Շնորհալուն, իսկ Երջանիկ հոգիահրաշ...ը, որը տարբերվում է բանաստեղծության վենետիկյան օրինակից, առավել հարապատ է հնագույն գրչագրերում մեկ հանդիպած տարբերակին:

1899 թ., գերմանացի հայագետ Ֆեթթերը գերմաներեն թարգմանությամբ լույս է ընծայել Ներսես Շնորհալու հետևյալ բանաստեղծությունները²⁸.

1. Անարատ տաճար...

2. Անմարմնոցն հրեղինաց...

3. Առաքեալք Աստուածորդոյն...

4. Աստուածային խորոցն...

5. Բանիւ աւետաւոր...

6 Բարբառ աւետեաց...

7. Երգ նոր աւետեաց...

8. Ծարաւեցաւ...

9. Կեանքն ընդ Հօր...

10. Մայր Աստուծոյ Մարիամ...

11. Յարեաւ փառաց թագաւորն...

12. Նոյնագոյ ընդ Հօր...

13. Նըստեալ կանայքն...

14. Տէր փառաց անձառ...

15. Տիրական տօնիւս...

Ներսես Շնորհալու Անեղ Որդին..., Ծարաւեցաւ... և Արեգակն արդար ըզիտր... տաղերը թարգմանվել են նաև ռուսերեն: Առաջինը լոկ հատվածաբար, իսկ երկրորդն ամբողջությամբ լույս են տեսել 1916 թ.²⁹: Վերջինը, նույնպես հատվածաբար, տպագրվել է 1972 թ.³⁰: Տաղերի առաջին հրատարակությունը հետագայում ունեցել է նաև այլ տպագրություններ: Պիտի նկատել, որ և՛ ռուսերեն, և՛ գերմաներեն հիշյալ թարգմանությունները կատարված են 1830 թ. վենետիկյան հրատարակության հիման վրա:

Այսպիսով, «Բանք չափաւ»-ում տեղ գտած Ներսես Շնորհալու 55 տաղային միավորներին պիտի գումարել «Սիոն»-ում, «Բազմավեպ»-ում և «Հանդէս ամսօրեայ»-ում լույս տեսած 10 տաղերը, որով հեղինակի տպա-

²⁰ Հ. Ղ. Ավիջան, Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 316:

²¹ «Բազմավեպ», Վենետիկ, 1932, էջ 100:

²² Նույն տեղում, 1894, էջ 166—167:

²³ Նույն տեղում, 1889, էջ 269—270:

²⁴ Ա. վրդ. Տևկանց, նշված աշխ., էջ 1—2, 6, 7, 12—16, 17—21, 22—24:

²⁵ Storia di Asatangelo, versione italiana. Venezia, 1843, p. 226—232.

²⁶ Նույն տեղում, էջ 233—235:

²⁷ Նույն տեղում, էջ 223—225:

²⁸ P. Vetter, Nerses Schnorhali's Kirchenlieder. „Theol. Quartal-schrift“. Ravensburg (Tübingen). LXXXI (1899), Heft I, p. 89—111 (տես «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1897, № 1, էջ 27—28):

²⁹ «Поэзия Армении с древнейших времен до наших дней», ред., вступ. очерк и примеч. В. Брюсова, Москва, 1916, стр. 167—169.

³⁰ «Армянская средневековая лирика», вступ. статья, составл. и примеч. Л. М. Мкртчяна. Ленинград, 1972, стр. 202.

գիր տաղերի ու փոխերի ընդհանուր թիվը դառնում է 65:

Ձեռագրերի վաղագույն ընդօրինակություններից մեկ հայտնի են դարձել Ներսես Շնորհալու տպագրված որոշ տաղերի առավել ամբողջական օրինակները կամ տարբերակները, նաև 37 տաղային միավորներ, որոնք մինչև այժմ չեն արժանացել հրատարակության: Բերում ենք այդ տաղերի ցանկը.

ա. Տպագրվածների լրացումներ

1. Ընդ որս և մանկունք... (տպագրում՝ Հանել ընդ նոսին... սկսվածքով)
2. Նոր երկինք յերկրի...

բ. Տպագրվածների տարբերակներ

1. Ծարաեցաւ...
2. Նոր իմն ահաւոր... (տպագրում՝ Աստաւոր տեսիլ... սկսվածքով)

գ. Նորահայտ միավորներ

1. Այսար աւետեաց ձայն...
2. Այսար ըզՏէրդ արարիչ...
3. Այսար, ը՛, լոյս հաստատի...
4. Այսար ի սկզբան...
5. Այսար յարութեան մեզ...
6. Այսար նորահրաշ լոյսն...
7. Այսար ցընծան դասք...
8. Այսար ցընծութիւն...
9. Անձառ Բանին բարձրելոյն...
10. Անձառ է խորհուրդ...
11. Անմահ թագաւորն...
12. Անտո՛ն, սկիզբն երկնաւոր...
13. Աստուծոյ ողորմութեանցն...
14. Արփիական, ը՛, լոյսն...
15. Բարբառոյն յանապատէ...
16. Դուստորը Սիոնի...
17. Էին միայնոյ միածին...
18. Ի լուսոյն արփոյ...
19. Ի յերգս սիրեցեալ...
20. Ի յորբաթու մեծի...
21. Իսկ դու ընդէ՛ր...
22. Լոյսն անեղական...
23. Լոյս փառաց Էին...
24. Ծագումն յարփոյն...
25. Յաւէժ եկեղեցի ցընծա...
26. Նարդոս բուրեալ...
27. Ներհիսեցութեամբ...
28. Նորապարճ խընդութեամբ...
29. Նորահրաշ արեգակ իմանալի...
30. Նորահրաշ արեգակն այսար...
31. Նոր ծաղիկ ցուցաւ...
32. Նոր ծառոյն կենաց...
33. Նոր քերովբէ հողանիւթ...

34. Նոցին համաձայնեալ...

35. Սկըսեալն յանըսկիպն...

36. Տիրուհի սուրբ Կոյս ...

37. Քառանիւթիցցս Աստուած...

Նորահայտ տաղերի այս խումբը Ներսես Շնորհալուն վերագրելու մեր հիմքը այն տվյալներն են, որով առաջնորդվել են մասնագետները մինչև այժմ. այն է՝ հեղինակի անունը հոդող ծայրակապերը, խորագրային նշումները, նաև լեզվաոճական ու տաղաչափական առանձնահատկությունները: Այս բոլորից բացի, հաշվի ենք առել տաղի ու փոխի՝ իբրև հեղինակային միասնական զուգորդի կապը:

Քանի որ նոր հայտնաբերված միավորները տաղ ու փոխ համակարգի շնորհիվ սերտորեն առնչվում են հրատարակված նմուշների հետ, բնականաբար, անհնարին է խոսել նորահայտների մասին տպագրվածներից անջատ ու մեկուսի: Ներսես Շնորհալու տաղային ժառանգության մասին ճիշտ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է հեղինակային պատկանելության, ինչպես նաև այլ հարցեր, քննել լոկ այդ միասնության մեջ:

Առաջին և հիմնական տվյալը, որով բանաստեղծությունը կարող ենք վերագրել Ներսես Շնորհալուն, հեղինակի անվան առկայությունն է ծայրակապում: Նրա տաղերից շատերը իրենց տների կամ տողերի սկզբնատառերով հոդում են «Ներսես կաթողիկոս», «Տր Ներսես», «Ներսես»: Սրանցից առավել արժանահավատն ու վստահելին, իհարկե, առաջին ձևն է: ԺԳ—ԺԴ դդ. ձեռագրերում այդպիսի ծայրակապով հանդես եկող տաղերը ոչ մի տարակույս չեն թողնում, որ իրոք պատկանում են Ներսես Շնորհալուն, քանի որ ո՛չ այդ ժամանակ, ո՛չ էլ դրանից մի քանի դար առաջ, երբ կարելի էր տաղ ու փոխ գրել, Շնորհալուց բացի Ներսես անունով ուրիշ կաթողիկոս չենք ունեցել: Միաժամանակ կասկած չի մնում, որ այդ տաղերը հորինվել են հեղինակի կաթողիկոսության տարիներին, այսինքն՝ 1166—1173 թթ. ընթացքում:

Այսպիսի առանձնահատկությամբ Ներսես Շնորհալու անվան հետ են կապվում հետևյալ 11 միավորները, որոնցից 9-ը հայտնի են տպագրությամբ, իսկ երկուսը նորահայտ են:

1. Նորահրաշ արեգակն այսար... «Ներսեսի երգ»*

2. Փոխ. Կեանքն ընդ Հօր... «Հայոց կաթողիկոսին»

* Աստղանիշով միավորները նորահայտ են:

3. Նոր իմն աւետեաց... «Ներսէսի ե»
4. Փոխ. Հօր կամաւ իջեալ... «Հայոց կաթողիկոսին»
5. Նոր ձայն աւետեաց... «Ներսէսի ե»
6. Փոխ. Կանայքն արտասուօք... «Կաթողիկոսի Հայոց»
7. Նոր դրախտին եկեղեցւոյ... «Ներսիսի ե»
8. Փոխ. Կենաց փայտ... «Կաթողիկոսի Հայոց»
9. Ի խաչին տընկեալ... «Ի Ստեփաննոս»
10. Փոխ. Նոր ծառոյն կենաց... «Նախալըկայն ե»*
11. Փոխ. Ի գաւապանէն... «Ի Ներսիսե կաթողիկոսե»

Քանակապես ավելի շատ են այն տաղերը, որոնք հոդում են պարպապես «Տր Ներսէս» կամ «Ներսէս»: Այս դեպքում առաջ է գալիս որոշ դժվարություն, քանի որ «Ներսէս»-ը կարող էր վերաբերել համանուն մեկ այլ բանաստեղծի, տվյալ դեպքում, Շնորհալուն ժամանակակից Ներսէս եպիսկոպոս Լամբրոնացուն: Պիտի ասել, սակայն, որ այս երկու Ներսէսներին միմյանց հետ շփոթելու վտանգը գրեթե բացառված է: Լամբրոնացին, որի գրական վաստակն ու հասարակական-քաղաքական գործունեությունը անհրաժեշտ չափով արդեն հետապնդված են, իբրև տաղասաց առանձնապես աչքի չի ընկել. նրա տաղերին անդրադարձել են Հ. Ղ. Ալիշանը³¹, Ն. վրդ. Ալիսյանը³², իսկ ավելի ուշ՝ Գր. Հակոբյանը³³ Լամբրոնացուն վերագրելով 12 տաղ: Հնագույն մի գրչագրում մեկ հանդիպել է նրան պատկանող ևս մեկ տաղ իր փոխով³⁴: Այսպիսով, ստացվում է ընդամենը 14 միավոր (տաղեր և փոխեր):

³¹ Հ. Ղ. Ալիշան, Միսուան, Վենետիկ, 1865, էջ 91:

³² Ն. վրդ. Ալիսյան, Ներսէս Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 229—233:

³³ Գր. Հակոբյան, Ներսէս Լամբրոնացի, Երևան, 1971, էջ 172—183:


³⁴ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 3503, թերթ 245ա: Տաղն ունի Այլ տաղ սուրբ Մկրտչին, ի Ներսէս Լամբրոնացոյ խորագիրը և Այսաւր բազմութեան հանդէս... սկզբնատողը, իսկ կից՝ Ուրախ լեր այսաւր... փոխը (թերթ 246ա): Վերջինս իր տաղափությամբ տարբերվում է տաղից, բայց շարադրանքով միանգամայն պատշաճում է նրան:

Սրանց համեմատությունը Շնորհալու տաղերի հետ՝ բացահայտում է էական տարբերություններ: Ամենահիմնական և ուշագրավ տարբերությունն այն է, որ Լամբրոնացու տաղերից ոչ մեկը ծայրակապ չունի³⁵: Պարզ է, ուրեմն, որ «Ներսէս» ծայրակապով տաղերը պատկանում են Ներսէս Շնորհալուն: Երկու հեղինակների տաղերը շփոթեցնող ընդհանրություններ չունեն նաև լեզվաոճական ու տաղաչափական իրենց առանձնահատկություններով: Այնուամենայնիվ մի քանի տաղեր, որոնք ձեռագրերում ներկայանում են մերթ Շնորհալու, մերթ Լամբրոնացու անունով, պահանջում են առավել ուշադիր քննություն հեղինակային ճիշտ վերագրման համար:

«Ներսէս» անունը հոդում են 64 տաղային միավորներ, ընդ որում, մերթ տաղի, մերթ փոխի միջոցով: Երբեմն տաղ ու փոխ զույգի ծայրակապերի շաղկապումով ստացվում է տվյալ զույգի բովանդակությանը համապատասխանող նախադասություն: Այսպես, օրինակ. «Ներսէսի գովեստ Աստվածածնի+Ի խնդրո մեծին Թորոսի ե», «Ներսէս+Ասէ վայս բան», «Ներսէս+Նվագե Հոգւոյն տըվողին իմաստ բանի ընդ ձայնի», «Ներսէս+նըվագե Աստվածածնին երգ», «Ներսէսի ե երգս+Ի սուրբ եկեղեցի», «Ներսէսի նվաստի+Գովեստ մեծին հոմանվանն նմին», «Ներսէսի+Առ Հոփսիսմե կոյսն ե»:

(Շարունակելի)

³⁵ Ն. վրդ. Ալիսյանի ցանկում Ար է աւետեաց... տաղը ներկայացված է իբրև այբուբենի տառերը հոդող ծայրակապ ունեցող («Ա—Բ») միավոր: Իրականում, Ներսէս Լամբրոնացու մյուս տաղերի նման, սա նույնպես զուրկ է ծայրակապից: Բանն այն է, որ Ն. վրդ. Ալիսյանի մատնանշած օրինակում Ներսէս Լամբրոնացու տաղից առկա է լոկ առաջին տունը, որին հաջորդում է բոլորովին ուրիշ մի բանաստեղծություն՝ գրված տարբեր տաղաչափությամբ: Վերջինս՝ Աւետիս քեզ, Մարիամ... սկսվածքով, անհեղինակ մի տաղ է, որն իր սկզբնատառերով հոդում է «Ա—Բ»: Ն. վրդ. Ալիսյանը, ձեռքի տակ չունենալով Ար է աւետեաց... տաղի ամբողջական օրինակը, երկու տարբեր բանաստեղծությունների այդ պատահական զուգորդումը ընկալել է իբրև մեկ միավոր և Ար է աւետեաց... տաղով սկսվող հատվածը կոչել է կցորդ (Ն. վրդ. Ալիսյան, նշված աշխ., էջ 233):



ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏՅԱՆ

ՀԱՅՈՑ ՏՈՄԱՐԻ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայոց Բուն թվական

Հայկական օրացույցի մասին շատ է գրվել սկսած Ե դարից մինչև մեր օրերը: Դեռևս Անանիա Շիրակացու տոմարական հիմնարար աշխատություններից [1, 2] շուրջ երկու դար առաջ հայերեն է թարգմանվում Անդրեաս Բյուզանդացու տոմարը [3]: Արդեն իսկ Ե դարի առաջին կեսին արված այս թարգմանությունը պարունակում է հատվածներ, որոնք, ինչպես ցույց են տվել արդի հետազոտությունները, ոչ թե բնագրից են թարգմանված, այլ շարադրանքի մեջ են մտնող թարգմանչի կողմից (տե՛ս [3], էջ 126—131): Այդ հատվածները կարելի է դիտել որպես մեկ հայտնի հայերեն առաջին ինքնուրույն տոմարական շարադրանքներ: Հիշարժան են հայկական օրացույցի մասին ԺԱ—ԺԵ դարերից մեկ հասած Հովհաննես Կոպեռնի, Հովհաննես Սարկավագի (Իմաստասեր) և Հակոբ Ղրիմեցու առավել հայտնի աշխատությունները: Սկսած անցյալ դարից, հիշյալ (ևսև այլ) հեղինակների տոմարական գրվածքները դառնում են գիտական նոր հետազոտությունների առարկա: Չնայած տարաբնույթ աշխատությունների ու հետազոտությունների առատությանը, այսօր տակավին վիճելի են համարվում հայոց օրացույցի հետ կապված որոշ սկզբունքային հարցեր: Մասնավորապես, հակասական են արդի կարծիքները Զ—ԺԲ դարերում հայոց օգտագործած օրացույցի մասին, թեպետ այդ շրջանից մեկ հասել են ոչ քիչ տոմարական աշխատություններ: Բնական է, որ կարծիք-

ների անհամաձայնությունն ավելի մեծ լինի առավել հին շրջանի մասին, որի վերաբերյալ մեկ հասած տեղեկություններն անհամեմատ ավելի սուղ են ու կցկտուր: Ներկայումս հին շրջանի վերաբերյալ արժարժվող հարցերից ամենավիճելին սկզբնավորման հարցն է. ե՞րբ է սկիզբ առել հայկական բնիկ օրացույցը: Ահա տարբեր հետազոտողների կողմից այդ հարցին տրված պատասխանների հակիրճ ներկայացումը.

ա) Հ. Խ. Սյուրմեյան՝ մ. թ. ա. 747թ.¹ ([4], էջ 17),

բ) Էդ. Դյուրրիե՝ ստույգ ժամանակը չի տալիս, այլ նշում է միայն, որ հնարավոր է հայկական և ասորեստանյան օրացույցների կապը և կամ արեգակնային օրացույցի ներմուծումը Հայաստան կրակի պաշտամունքի հետ մեկտեղ ([5], էջ 4—7),

գ) Հ. Ղ. Ալիշան՝ մ. թ. ա. 249 թ. ([6], էջ 91),

դ) Ֆ. Գինցել՝ մ. թ. ա. 488 թ. ([7], հ. Գ, էջ 314),

ե) Լ. Սեմյոնով՝ մ. թ. ա. 460 թ. ([8], էջ 24),

վ) Էդ. Աղայան՝ մ. թ. ա. 455 թ. ([9], էջ 17):

Ինչպես երևում է այս թվերից, հայկական օրացույցի սկզբնավորման համար ունենք

¹ Նշված տեղում 747-ի փոխարեն գրված է. «743 ամօք յառաջ քան Վերիստոս»: Հաշվի առնելով, որ հեղինակի օգտագործած Քրիստոսի ծննդյան թվականը չորս տարով տարբերվում է Հուլյան թվականից, կստանանք մ. թ. ա. 747թ.:

շուրջ երկու հազար տարվա միջոցում գրանցվող թվականների մի շարք: Որպես այս տեսակ անհամաձայնության պատճառ, կարելի է նշել հիշյալ աշխատություններում օգտագործված տեղեկությունների ոչ բավարար քանակը կամ անստուգաթյունը: Այս «ճշտությունը» չի կարող բավարարել տոմարագիտական արդի հետազոտություններին ներկայացվող պահանջները, ուստի առաջանում է դիտարկվող հարցի նորոշված քննարկման անհրաժեշտություն: Այդ անհրաժեշտությունն առավել ակնհայտ է դառնում, երբ նկատի ենք առնում բազում հին ու նոր տվյալների գոյությունը, որոնք ցարդ իրենց պատշաճ կիրառումը չեն ունեցել այս խնդրում և կարող են օգտագործվել հայկական օրացույցի հետ կապված վիճելի հարցերն առավել ամբողջական քննարկելու համար:

Այս շարքի առաջին հոդվածում [10] տեսանք, որ Հայոց Մեծ թվականը եղել է Հուլյան տոմարի նմանությամբ ստեղծված մի անշարժ օրացույց: Այստեղ կիրառվել է հայկական 365-օրյա ամսակարգը, սակայն տարեմուտը չի կապվել նավասարդի մեկի հետ, որը չորս տարում մեկ օրով շեղվում էր Հուլյան համապատասխան ամսաթվից: Մեծ թվականի տարեմուտը, ամենայն հավանականությամբ, եղել է հունվարի մեկը (ամեն դեպքում դա անպայման եղել է հունվարի մեկից վեցի միջև ընկած մի օր)²: Տարեհաշիվն սկսվել է Հուլյան 553 թվից: Որպես մի ակնառու հանգամանք, որ [10]-ում բերված փաստերից անկախ, մեկ անգամ ևս վկայում է ասվածի օգտին, նշենք հետևյալը: Անանիա Շիրակացու կազմած ՀԼԲ բոլորակում ([2], էջ 263—281) հայոց յոթներյակները³ սյունակում բոլոր 532 տարիների դիմաց էլ դրված է երկու թիվ: Սա, առաջին հայացքից, տարօրինակ է. չէ՞ որ հայոց ամսակարգով առաջնորդվելու դեպքում տարին կարող է ունենալ միայն մեկ յոթներյակ: Պատկերը

պարզվում է, երբ ընդունում ենք, որ Հայոց Մեծ թվականի տարեմուտը նավասարդի մեկը չի եղել: Իրոք, այս դեպքում բնական է, որ տարեմուտից մինչև նավասարդի սկիզբն ընկած միջոցի համար կլինեն մի յոթներյակ, իսկ նավասարդի մեկից մինչև տարեվերջի համար՝ մի այլ յոթներյակ, նախորդից մեկով ավելի (քանի որ 365-ը յոթի բաժանելուց տալիս է մեկ մնացորդ): Թյուրիմացություններից խուսափելու համար նշենք, որ տարեմուտից մինչև դրան հաջորդող նավասարդն ընկած հատվածի համար յոթներյակը պիտի որոշվեր ոչ թե տարեմուտի՝ հունվարի սկզբի շաբաթվա ինչ օր լինելով (դա պարզապես հռոմեական յոթներյակը կլիներ), այլ տարեմուտին նախորդած նավասարդի մեկի օրով: Միայն ա՛յս կերպ որոշված յոթներյակներով հնարավոր կլիներ հաշվարկ անել ըստ հայոց ամսակարգի: Այս դեպքում բնական է սպասել, որ յուրաքանչյուր տարվա երկու յոթներյակներից երկրորդը միաժամանակ լիներ նաև դրան հաջորդող տարվա յոթներյակներից առաջինը (Պատճառն այն է, որ տարեվերջին ամսակարգը չէր ավարտվում, այլ շարունակվում էր հաջորդ տարվա մեջ, մինչև նավասարդի մեկը): Իրոք, հենց այսպիսի պատկեր էլ ներկայացված է հիշյալ ՀԼԲ աղյուսակում: Այսինքն, այդ աղյուսակում յոթներյակների կրկնակի լինելուց ևս հետևում է, որ Հայոց Մեծ թվականի տարեմուտը չի համընկել նավասարդի մեկի հետ: Նկատենք նաև. Մեծ թվականի միմիայն ա՛յն տարին կարող էր մի յոթներյակ ունենալ, որի սկիզբը համընկներ նավասարդի մեկին: Սակայն, ինչպես նշել ենք, բոլոր 532 տարիներն էլ երկու յոթներյակ ունեն: Իսկ այդ տարիների ընթացքում նավասարդի մեկը դեգերել է հուլիսի 11-ից «ետ» մինչև փետրվարի 29-ը (ամեն չորս տարում մի օր շեղվելով Հուլյան օրացույցից): Հետևաբար, Հայոց Մեծ թվականի տարեմուտը գտնե այս ժամանակահատվածի մեջ (փետրվար 29-ից մինչև հուլիս 11-ը) չի եղել:

Հոդվածաշարիս երկրորդ մասում [11] տեսանք, որ մինչև Մեծ թվականի կիրառումը հայոց օգտագործած արեգակնային օրացույցն ունեցել է տարիների հաստատուն տևողություն. այն է՝ 365 օր: Այդ օրացույցով տարեմուտ է դիտվել նավասարդ ամսի մեկը, որ 1460 տարի պարբերությամբ ջրջել է տարվա բոլոր եղանակներով: Սակայն, ի տարբերություն նավասարդ ամսվան, որ փոփոխական էր, հեթանոս հայերն ունեցել են նաև Նավասարդի տոն, որն իր հետ կապված Վարդավառի և այլ տոների հետ մեկտեղ եղել է անշարժ: Սրանք միջոց տոնվել են ամռանը, ընդ որում՝ խիստ որոշակի

² Նկատենք, որ այս դեպքում էական էլ չէ տարեմուտի օրվա ստույգ որոշումը: Տարեմուտը քրիստոնեական տոն չէր և, հետևաբար, չպիտի նշվեր: Իսկ քանի որ Մեծ թվականում կիրառվում էր հայոց ամսակարգը, որի սկիզբը չէր համընկնում տարեմուտին, ապա վերադիրներն ու յոթներյակները պիտի որոշվեին ոչ թե տարեմուտի, այլ ամսակարգի սկզբի՝ նավասարդի մեկի օրով:

³ Ամեն տարվա յոթներյակը տարեմուտի նախորդ օրվան համապատասխանող մի թիվ է, որին մեկ գումարելով ստացվում է տարեմուտի շաբաթվա օրը (1=կիրակի, 2=երկուշաբթի, 3=երեքշաբթի ևն): Յոթներյակի արժեքը փոփոխվում է մեկից մինչև յոթ: Դրանով կարելի է որոշել տարեմուտի, ամսամուտների, հետևաբար, նաև յուրաքանչյուր ամսաթվի շաբաթվա ինչ օր լինելը:

օրերի, անկախ դրանց ամիս-ամսաթվից: Ընդհիվ իր պարզությանն ու հարմարությանը, առանց էական փոփոխությունների ենթարկվելու, այս օրացույցը հարատևում է իր սկզբնավորումից մինչև Մեծ թվականին անցնելը: Իսկ դրանում օգտագործված ամսակարգը համարյա անփոփոխ հասել է մեզ:

Այսպիսով, հայոց հին (կամ բուն) օրացույցի մասին ներկայացվող հետապոտության նպատակն է պարզել երկու հիմնական հարց.

ա) ե՞րբ է սկզբնավորվել հայոց բուն օրացույցը,

բ) ինչպե՞ս և ինչո՞վ են որոշվել անշարժ տոների օրերը:

Հետապոտման եղանակը՝ հակադարձ խնդիր: Այս հարցերի պատասխանը գտնելու առաջին և լավագույն միջոցը կլինի այն, որ մեզ հետաքրքրող նյութի մասին ուղղակի վկայություն գտնվեր հայկական կամ օտար պատմագրական որևէ աղբյուրում, որը ժամանակակից լիներ այդ օրացույցի սկզբնավորմանը և հետագա կիրառմանը: Ցավոք, այդպիսի վկայություն տակավին հայտնի չէ, այսինքն՝ նշված միջոցն այս դեպքում կիրառել չենք կարող: Առաջադրված հարցերի քննարկումը մատչելի է այսպես կոչված «հակադարձ խնդրի» եղանակով: Այն է. ելնելով երևույթի հետևանքից՝ վերականգնել դրա պատճառը: Սա թույլ է տալիս անմիջականորեն, ելնելով երևույթի դիտվող պատկերից, վերականգնել նրա սկզբնական վիճակի իրական պատկերը, առանց դիմելու նախնական մտացածին (հաճախ վերացական) պատկերացումների (ենթադրությունների): Քաջ հայտնի են սրա փայլուն կիրառման օրինակները մաթեմատիկայում, աստղագիտության մեջ և բնագիտության այլ ճյուղերում [12]: Հակադարձ մոտեցման կարևոր առանձնահատկությունն է այն, որ թույլ է տալիս ուղղակի տվյալների սակավությամբ պայմանավորված (հաճախ հանդիպող) անորոշություններն ու լուծման ոչ միարժեքությունը հաղթահարել կողմնակի, անուղղակի (առաջին հայացքից խնդրի հետ չաղերսվող) կամ այլ բնույթի ընդհանուր տեղեկության օգտագործմամբ [13, 14]: Մեր ուսումնասիրության մեջ այս եղանակն արդարացվում է նրանով, որ մշակույթի պանական բնագավառներից կարելի է պրպտել և ի մի բերել բավարար քանակությամբ (առաջին հայացքից՝ հույժ տարաբնույթ) անուղղակի տեղեկույթ, որը լրացնելով եղած ուղղակի տվյալները, կապահովի խնդրի բունական միարժեք լուծումը: Որպես տեղեկության ինքնաբերական աղբյուրներ, պիտանի են

ա) հայոց տոմարի մասին մեզ հասած աշխատությունները,

բ) աստղագիտությունը և դրա պատմությունը,

գ) հայոց պատմությունը իր գրչագիր ու վիմագիր վավերագրերով,

դ) հայ ազգագրությունը, ինչպես նաև որոշ տվյալներ հին աշխարհի պատմությունից ու հարակից բնագավառներից:

Հենց այս տարաբնույթ աղբյուրներից մատչելի տեղեկության չափաքանից համադրման և դրանց հենքի վրա հարցի լուծումը փնտրելու ճանապարհն է ընտրված ներկա հետապոտության մեջ:

Ինչ վերաբերում է այս աղբյուրների կարևորությանն ու ստուգությանը, ապա առաջնությունը հարկ է տալ տոմարագիտական և աստղագիտական 'տվյալներին, քանի որ դրանք ամենասերտ կապն ունեն քննարկվող խնդրի հետ և ամենից ավելի են ենթակա մաթեմատիկական ստուգման: Մյուս աղբյուրները կարող ենք համարել օժանդակ և դրանց դիմել այն դեպքում միայն, երբ առաջինների տվյալներն անբավարար լինեն հարցի միարժեք լուծման համար ու կարիք ունենան լրացման: Առաջադրված երկու հիմնական հարցերից առաջինի լուծումը անհնար է առանց նախապես պատասխանելու երկրորդին, քանի որ վերջինիս իմացությունը անհրաժեշտ է առաջինի համար, որպես նախնական տվյալ: Ուստի, հարկ է սկսել երկրորդից:

Ինչպե՞ս և ինչո՞վ են որոշվել անշարժ տոների օրերը: Հայտնի է, որ արևադարձային տարվա մեջ հաստատուն օրեր որոշելու ամենահուսալի միջոցը (քննարկվող ժամանակների համար) այդ օրերն աստղագիտական երևույթների հետ կապելն է: Տարբեր ժամանակներում եգիպտացիները, բաբելացիներն ու հույները այդ նպատակով դիտել են պայծառ աստղերի արեգակնային ամբարձումները⁴ ([15], էջ 41, 56), որոշ դեպ-

⁴ Արեգակի շուրջ Երկրի տարեկան պտույտի հետևանքով տարվա մեջ որոշ ժամանակ որոշ աստղեր տվյալ աշխարհագրական լայնությունների համար դառնում են չդիտվող, այսինքն՝ այդ լայնություններում դրանք հորիզոնից վեր են լինում միայն ցերեկային ժամերին, հետևաբար և չեն երևում: Չերևալու այդ ժամանակահատվածից հետո աստղն սկսում է երևալ նախ արևելքում, արևածագից առաջ: Ահա հենց առաջին այդպիսի դիտվելու դեպքը համարվում է արեգակնային ամբարձում: Այդ օրը աստղը չերևալու շրջանից հետո առաջին անգամ երևում է հորիզոնի վրա արշալույսին: Համանման ձևով էլ, արեգակնային անկումը աստղի դիտվելու շրջանի վերջին

քերում նաև անկումները: Անշուշտ, ամենաստույգը կլինեն արևադարձերի և գիշերահավասարների պահերը որոշելը: Սակայն, դա կապված է դիտողական բնույթի լուրջ դժվարությունների հետ, ուստի կարող ենք չքննարկել, հաշվի առնելով քննվող ժամանակները: Բնական է սպասել, որ Հայաստանում ևս անշարժ տոնի՝ Նավասարդի օրը որոշեին այն նույն միջոցով, որը կիրառվում էր հարևան բաբելացիոց, ավելի ուշ՝ նաև հունաց կողմից, և որն ամենահարմար ձևն էր այդ խնդիրը լուծելու: Արեգակնային անկումները տվյալ դեպքում կարող ենք չդիտարկել, քանի որ Հայաստանում դրանց կիրառման օգտին վկայող փաստեր չունենք: Իսկ ամբարձումների օգտին վկայում են ազգագրական և որոշ այլ տվյալներ (տե՛ս ծանոթ. 19): Մնում է պարզել, թե հատկապես ո՞ր աստղը կամ աստղերն են դիտվել:

Եգիպտական քրմերն այդ նույն նպատակով դիտում էին Մեծ Շուն համաստեղության գլխավոր աստղը՝ Շնաստղը (α Մեծ Շան կամ Sirius)⁶: Սրա արեգակնային ամբարձման հետ են կապվել մեծաշուք տոնակատարություններ: Ի դեպ, այս աստղի անունով էլ կոչվել է 1460-ամյա շրջանը՝ Սոթոսի շրջան կամ Սոթիական շրջան (եգիպտացիները Շնաստղը կոչել են Սոթիս՝ Լուսավայր): Սակայն Հայաստանում դրա կիրառումը տվյալ խնդրի համար կարելի է բացառել ելնելով հետևյալից: Առաջին. չունենք փաստեր հայոց համար այս աստղի նման դեր ունենալու օգտին: Երկրորդ. դրա դեմ է վկայում հայոց հնագույն ավանդությունը: Պատմելով Հայկի մասին, Սեբեոսը մեջ է բերում Բեթին Հայկի տված խիստ պատասխանը, որը մեր այսօրվա բառերով կարելի է պարզապես հայիոյանք անվանել. «Շուն ես դու և յերամակե շանց՝ դու և ժողովուրդ քո» ([16], գլ. Ա, էջ 4): Ստացվում է, որ շունը այնքան ստոր, վարկաբեկիչ անվանում է համարվել, որ Հայկը դրանով է որակել իր մահացու թշնամուն, նրան նետահարելուց առաջ: Այս դեպքում ինչպե՞ս կարելի է պատկերացնել, որ նույն անունը կրող աստղը՝ Շնաստղը, առաջնորդ դառնար այդ բառը հայիոյանք համարող ժողովրդի օրացույցի համար: Չմոռանա՞ք, որ այդ օրացույցի հիմնադրումը կապվում է Հայկի՝ և ո՛չ թե նրա կողմից Շուն հորջորջված Բեթի

հետ: Օրացույցի համար առաջնորդ, ուղենիշ ընդունել ինչ որ երկնային լուսատու, նշանակում է նաև այդ լուսատուի պաշտամունք: Խնչպե՞ս պատկերացնենք, որ պաշտողը հայիոյանք համարեր իր պաշտածը: Սա առնվազն անհեթեթ է: Դրան հակառակ, առաջին. այս նույն օրացույցային շրջանը հայ տոմարագիտության մեջ հայտնի է «Հայկայ շրջան» անվամբ: Ուստի, կարելի է սպասել, որ հայկական օրացույցի համար էլ առաջնորդ համաստեղություն լիներ Հայկը⁶: Այս համաստեղությունն այժմ հայտնի է իր հունական Orion (Օրիոն) անվամբ⁷: Ասվածի օգտին կարելի է բերել բազում վկայություններ, առաջին հերթին՝ հայ տոմարագիտների գրվածքներից: Անանիա Շիրակացին ([1], գլ. ԽԲ) հայկական օրացույցի հիմնադիր է համարում Հայկին, որի պատկանների անուններով էլ կոչվել են հայոց ամիսները: Նույնն է պնդում նաև Հովհաննես Սարկավազը ([18], էջ 223, 224): Երկրորդ. հայտնի է հայոց մոտ վաղագույն ժամանակներից սկսված Հայկի պաշտամունքը: Ստացվում է այսպիսի պատկեր. աստվածացված նախնին, որ նաև օրացույցի հիմնադիրն է, նույնացվել է երկնքի ամենագեղեցիկ ու պայծառ համաստեղության հետ: Բնական է, որ այդ նույն՝ Հայկ (կամ Հայկն) համաստեղությամբ էլ առաջնորդվեր նրան պաշտող ժողովուրդը իր կայուն տոների ժամանակը որոշելու համար: Այս համաստեղության առաջին աստղն ըստ տառային նշանակման (α Հայկի, α Orionis) այժմ հայտնի է Բետելգեյզե (Betelgeuze) անվամբ: Այս անվան ծագումը արաբական է և նշանակում է «Հսկայի անոթ»: Այս նույն աստղը հայկական աղբյուրներում կոչվել է «Հայկին ուսն արևելեան»: Հիշենք, որ ըստ ավանդության ([19], էջ 38, 39) Հայկը հսկա է եղել: Բացի այդ, հայերենում ունենք «հայկաբար» բառը, որի նշանակություններից մեկն է՝ «հսկայաբար» ([20], հ. Բ, էջ 31):

⁶ Որքան մեզ հայտնի է, Նավասարդի տոնի կապը Հայկի աստեղատան արեգակնային ամբարձման հետ առաջին անգամ ակնարկել է Ղ. Ալիշանը ([6], էջ 299, 300), առանց սակայն նշելու դրանց պատճառական կապը:

⁷ Ի տարբերություն հին հայկական դիցարանի, որտեղ Հայկը ազգի սկզբնավորող նախահայրն է, հունական դիցարանում Օրիոնի տեղը չափազանց համեստ է, այնինչ, համանուն աստեղատունը երկրեքում ամենապայծառն ու գեղեցիկն է: Թերևս իրերի այսպիսի վիճակն է առիթ տվել հայտնելու վիճարկելի այն կարծիքը, ըստ որի այդ համաստեղության հունական *Օրիոն* անվանումը ծագել է հայկական «Պսակ Հայկի» անվան հունարեն թարգմանությունից ([17], էջ 32):

երևալն է երեկոյան արևմուտքում, մայրամուտից հետո:

⁸ α -հունական այբուբենի առաջին տառն է (ալֆա), որով, սկսած ԺԷ դարից, նշանակվել են համաստեղությունների ամենապայծառ աստղերը: Մյուս աստղերը նշանակվել են հաջորդ՝ β , γ , δ ... տառերով ըստ պայծառության նվազման կարգի:

Նշենք նաև, որ արաբերեն جبار (շա-բար) — «հսկա» բառը նշանակում է նաև <այլ համաստեղությունը (الجبار)> ([21], էջ 142): Համաստեղության և դրա գլխավոր աստղի անունների ընդհանրությունը հայոց և արաբների մոտ կարող է հիմք լինել ենթադրելու դրանց միասնական ծագումը: Նկատի առնելով նաև <այլի հնագույն պաշտամունքը հայոց մոտ, ինչպես և այն, որ աստղային երկնքի մեկ հայտնի բաժանումն ըստ համաստեղությունների կատարվել է Փոքր Ասիայի և <այլական Լեռնաշխարհի տարածքում> ([22], էջ 8, 9), թերևս պետք է առաջնային համարել այս աստեղատան հայկական անվանումը:

Սա, իր հերթին, վկայում է հայերի համար <այլ համաստեղության ունեցած բացառիկ նշանակության մասին ու հիմք տալիս մտածելու, որ այդ աստեղատան գլխավոր աստղով՝ Բետելգեյզեով էլ որոշվել են հայոց անշարժ տոնարի օրերը: Այս առթիվ քննարկման է արժանի մի հետաքրքիր փաստ ևս: Բանն այն է, որ այլ համաստեղություններում α տառով նշանակվել են աստղերից ամենապայծառները, իսկ <այլի դեպքում պատկերն այլ է: α <այլի աստղն իր պայծառությամբ երկրորդն է այս աստեղատան մեջ: Ամենապայծառ աստղն այստեղ կոչվում է β <այլի (β Orionis) կամ Ռիգել (Rigel): Ի դեպ, այս անունը ևս, ինչպես Բետելգեյզեն, ունի արաբական ծագում և նշանակում է «տոն»: <այլական աղբյուրներում այն անվանված է «<այլին լուսափայլ ոտն>: Մ. թ. ա. Բ դարի հույն մեծագույն աստղագետ Հիպարքոսի կազմած աստղացուցակում ևս [23], Ռիգելը ավելի պայծառ է համարված Բետելգեյզեից: Սակայն 1603 թ. Իոհան Բայերի ստեղծած տառային նշանակումներով, պայծառությամբ երկրորդը՝ Բետելգեյզեն, նշանակվել է α -ով, իսկ ամենապայծառը՝ Ռիգելը՝ β -ով: Այսինքն, կատարվել է շեղում նշանակման ընդհանուր սկզբունքից: Չի բացառվում, որ այս շեղման պատճառը կապ ունենա <այլի հնագույն պաշտամունքից բխած հանգամանքների հետ: Սակայն, ինչպիսին էլ լինի պատճառը, ամեն դեպքում ակնհայտ է մի բան. որ <այլ համաստեղության մեջ հենց այդ աստղն է առանձնացվել մյուսներից որպես գլխավոր և դրա համար եղել են պայծառությունից վատ այլ, ավելի փոքր հանգամանքներ:

Մեր խնդրում աստղի ընտրության մեջ կարևոր է նաև դիտման վայրի հարցը, քանի որ աստղերի դիտումներով տարվա տևողության որոշելը կապված է հետևյալ երևույթի հետ: Ի հետևանք Երկրի դարավոր գալարապտույտին (Praecessio), որով, Երկրի

բևեռը դանդաղ պտտվելով խավարածրի բևեռի շուրջը, իր նախնական դիրքին է մոտենում շուրջ 26000 տարում, զարնանային գիշերահավասարի կետի դիրքը երկնքում փոխվում է՝ շարժվելով Արեգակին ընդառաջ: Սրա հետևանքով դարերի ընթացքում երկնքում փոխվում են նաև աստղերի դիրքերը բևեռի և հորիզոնի կողմերի նկատմամբ: Հենց այս բանի շնորհիվ էլ որոշ վայրերից համապատասխան աստղերով որոշված տարին տարբերվում է այսպես կոչված «աստղային տարուց» (365.2564 միջին արեգակնային օր տևողությամբ) և մոտ է արևադարձային տարվան (365.2422 օր տևողությամբ): Օրինակ՝ Եգիպտոսի մայրաքաղաք Մեմֆիսի լայնության վրա (հյուսիսային լայնության 30°) Ընաստղով որոշված տարին ունի <ուլյան տարվա տևողությունը> 365.25 օր ([24], էջ 64): Սակայն այլ լայնությունների վրա այդ նույն աստղով որոշված տարին կունենար այլ տևողություն: <այլց միջնաշխարհի համար այս առումով հարմար է α <այլի աստղը: Հարկ է իմանալ նաև, թե որտեղ են կատարվել այդ դիտումները: Սա էական է, քանի որ տվյալ աստղի հարմար կամ անհարմար լինելը նշված խնդրի համար կախված է ոչ միայն աստղից, այլ նաև դիտման վայրի աշխարհագրական լայնությունից: Բնական է սպասել, որ այդ դիտումներն արվեին այնտեղ, ուր տոնվում էին դրանցով որոշվող տոները (ամեն դեպքում՝ այդ վայրից ոչ հեռու): Պատմությունից գիտենք, որ Նավասարդի տոնակատարությունը մեծ շուքով արվել է Մեծ <այլի համարյա կենտրոնում գտնվող Շահապիվան ավանում, Արածանու ակունքի մոտ [25]: Ի դեպ, Շահապիվանից փոքր ինչ հյուսիս է գտնվում հին պաշտամունքի խոշոր կենտրոն, նշանավոր մեհյաններով հռչակված Բագավանը: Հիշենք, որ <այլց աշխարհի հենց այս (հնուց ի վեր սրբացված) վայրում 301 թ. Նավասարդի տոնակատարության ժամանակ տեղի ունեցավ հայոց արքունիքի և փոքրի մկրտությունը, որով քրիստոնեությունը լսեցականորեն ընդունվեց <այաստանում [26]: <ամաճայն առկա աշխարհագրական քարտեզների, Շահապիվանը գտնվում է հյուսիսային լայնության 39°5-ի վրա (իսկ Բագավանի լայնությունը մի փոքր ավելի է դրանից): Բացի այդ, պատմական <այաստանի միջին աշխարհագրական լայնությունն էլ 40° է: Այսինքն՝ դիտման վայրի աշխարհագրական լայնությունը կարող ենք համարել հյուսիսային լայնության 39°5-ը (առավելագույնը 0°5 սխալով): α <այլի աստղը հարմար է այս լայնության վրա դիտումներով անշարժ օրեր որոշելու համար:

Ի մի բերելով շարադրված փաստերը, կարող ենք եզրակացնել, որ Հայկական Բուն օրացույցի առաջնորդ լուսատուն եղել է *Հայկի աստղը՝ «Հայկին ուն արևելյան»*, որի արեգակնային ամբարձումը դիտելով էլ որոշվել են անշարժ տոների օրերը⁸:

Ե՛րբ է սկսվում փոփոխվել Հայոց Բուն օրացույցը: Նախքան այս հարցը քննելը հարկ է պարզել, թե որքանով իրավունք ունենք հայոց ամսակարգով դեպի ետ հաշվարկելու: Այսինքն, պարզենք, արդյոք Չ դարից առաջ այդ ամսակարգի մեջ ինչ որ փոփոխություն մտցվել է, թե՛ ոչ: Հայկական օրացույցի հնում փոփոխությունների ենթարկված լինելու մասին մեզ հայտնի միակ վկայությունը Մովսես Խորենացու Պատմության մեջ է ([19], գիրք Բ, գլ. ԾԹ): Ըստ Խորենացու Պատմության, Հայոց Արտաշես թագավորը, ի թիվս այլ բարեփոխումների, կարգավորել է նաև օրացույցը: Ինչպիսի՞ն է եղել այս կարգավորումը, այժմ չենք կարող ստույգ իմանալ, բայց բարեբախտաբար, ունենք այլ տվյալներ ևս, որոնց միջոցով կարող ենք պարզել, արդյո՞ք այդ փոփոխությունը վերաբերել է ամսակարգին, թե՛ ոչ: Խորենացուց շուրջ երկու դար հետո ապրած Անանիա Շիրակացին, պատմելով հայոց օրացույցի սկսվելու մասին և կրած որոշ փոփոխությունների մասին ([1], գլ. ԽԲ), չի հիշատակում իրենից առաջ եղած որևէ փոփոխություն, որը վերաբերեր ամսակարգին կամ ամսահաշվին: Միակը, որ նա նշում է, կապված է ամսանունների հետ. «Իսկ մարգաց և հարաւանց, զոր այժմ ահկի կոչեն, այս ի գործոց անուանեցան...»⁹:

Այս կարգի մի այլ փոփոխություն էլ Հ. Ղ. Ալիշանը հիշում է վկայակոչելով Հովհաննես Երզնկացուն. «Այր ոմն վՄատրան ասին՝ ի Հոռի փոխարկեաց, որդւոյն իւրոյ Խոռէն կոչելով...» ([27], էջ 140): Քանի որ ոչ առաջնային կարևորության այս փոփոխությունները նշվել են, ուրեմն, առավել ևս պիտի նշվեին ամսակարգի բնույթի և ընթացքի հետ կապված շատ ավելի էական

փոփոխությունները (եթե անշուշտ լինեին): Սակայն, նշվածներից զատ այլ փոփոխություններ հայտնի չեն: Ուստի, կարելի է եզրակացնել, որ այդպիսիք չեն եղել: Որպես մի անկախ փաստ ամսածի օգտին, նայենք, թե ինչպիսին են եղել հայկական օրացույցի կրած փոփոխությունները մեզ համեմատաբար մոտ ժամանակներում (Չ—ԺԲ դարեր): Գիտենք, որ 553 թվից սկսվող Հայոց Մեծ թվականը և դրա հետ կապված օրացույցի նորոգումը անփոփոխ են թողնում և՛ ամսակարգը, և՛ օրերի հաշվման ընթացքը, որ շարունակվում է առանց որևէ խզման: 1084 թվից սկսվում է Հայոց Փոքր թվականի հաշվումը: Համաձայն Հովհաննես Սարկավագի բարեփոխման, այստեղ ամսակարգը փոքր ինչ փոխվում է նահանջի օրվա մոծմամբ: Բայց այս նորամուծությունը չի կարողանում կիրառությունից դուրս մղել հին ավանդական ամսահաշիվն ու տարեհաշիվը: Թեպետ հին նկատմամբ Սարկավագի կարգն ուներ էական առավելություն (ամիսներն անշարժ կապված են տարվա եղանակներին), այդուհանդերձ դրա հետ մեկտեղ, թերևս նույնիսկ ավելի մեծ կենսունակությամբ, մինչև մեր օրերը հարատևել է ժամանակի հաշվման հնավանդ կարգը, որպես Հայոց Մեծ թվական: Ելնելով այս ամենից, կարող ենք վստահ լինել, որ նշվածներին նախորդած բարեփոխումները ևս (եթե եղել են) ի պորտ չպիտի լինեին ամսակարգն ու ամսահաշիվը փոփոխելու: Այսինքն՝ հիմք չունենք կասկածելու այն բանին, որ հայոց ամսահաշիվը Ե—Չ դարերն է հասել իր վաղնջական տեսքով, չենթարկվելով խզումների, թռչքների և էական փոփոխությունների: Այս առթիվ հիշարժան է հետևյալը: Հայոց եկեղեցին, որ հեթանոսական շրջանից իր ժառանգած ողջ մշակույթը ձևել, հարմարեցրել էր քրիստոնեության պահանջներին, և որը նաև ձեռնարկել ու վավերացրել էր օրացույցի հետագա բարեկարգումները, անփոփոխ էր թողել ամսակարգն ու ամսահաշիվն ընթացքը և նույնիսկ՝ ամսանունները, որոնք որոշակիորեն կապված էին հեթանոսական պաշտամունքի հետ և կրում էին որոշ հին աստվածների անունները ևս: Սա նշանակում է, որ իր ակունքներով հեթանոս պաշտամունքի հետ կապված ամսանունները, ամսակարգը և ամսահաշիվն ընթացքը Ղ—Չ դարերում արդեն գիտակցվում էին որպես իրենց ակունքից անկախ, անփոփոխելի հասկացություններ: Այսինքն՝ դրանք պետք է մինչ այդ տևականորեն մնացած լինեին անխաթար, անփոփոխ:

Արդ օանք հիմնական հարցին. ե՛րբ է սկսվում փոփոխվել հայոց բուն օրացույցը: Ասկիպը գտնելու համար կհիմնվենք հե-

⁸ Անշուշտ մի աստղի արեգակնային ամբարձման դիտումով կարելի է որոշել միայն մեկ օր: Մյուս տոների օրերը կարելի էր որոշել դրան հաստատուն թվով օրեր գումարելով:

⁹ «Հարաւանց» ամսանվան փոխարեն Ղ. Ալիշանը ([27], էջ 141), նրան հետևելով՝ նաև Հր. Աճառյանը ([28], հ. Գ, էջ 61), տալիս են «հարուանց» ձևը, մեկնելով «երկրագործական բան մի, ինչպես խոտ հարել»: Սա ավելի է համապատասխանում «ի գործոց» անվանված լինելուն: Ըստ այդմ «հարաւանց»-ի փոխարեն պետք է ձիջտ համարել «հարուանց» ձևը:

տեղյալ դատողությունների վրա: Օրացույցի կիրառումը (քննարկվող ժամանակներում) կարող էր սկսվել միմիայն ամսակարգի սկզբով, այսինքն՝ նավասարդի մեկով: Բացի այդ, նշված սկիզբը չէր կարող կամայական լինել: Այն պետք է հիմնվեր օրացույցի (հետևաբար նաև դիցարանի) համար նշանակալից իրադարձության վրա: Այս առումով ամենահարմարը այդ օրացույցի առաջնորդ աստղի (որ նաև պաշտվում էր որպես աստվածացված նախնի) արեգակնային ամբարձումն է: Ուստի, հարցի լուծման համար հարկ է գտնել, թե երբ է տեղի ունեցել հայոց ամսակարգի սկզբի՝ նավասարդի մեկի համընկումը α Հայկի աստղի արեգակնային ամբարձման հետ:

Դրա համար նախ հարկ է իմանալ, թե երբ է տեղի ունենում Հայկի գլխավոր աստղի արեգակնային ամբարձումը հյուսիսային լայնության $39^{\circ}5$ -ի վրա: Հաշվարկի մանրամասներով գրվածքը չծանրաբեռնելու համար նշենք միայն, որ այն արվել է հետևյալ երեք մաթեմատիկական եղանակներով:

ա) Վերլուծական եղանակով. այստեղ օգտագործվել են ոլորտային եռանկյունաչափության հայտնի բանաձևերը (տե՛ս օրինակ [29], էջ 62—64):

բ) Գծագրական եղանակով (տե՛ս օրինակ [30]):

գ) Օգտագործելով Ֆ. Գինգելի տված աղյուսակները ([7], հ. Բ, էջ 517—522):


Առաջին երկու դեպքերում ընդունվել է, որ արեգակնային ամբարձումը դիտելու համար պետք է աստղի ծագման պահին Արեգակը հորիզոնից 15° վար լինի ([30], էջ 7): Այս երկու եղանակներով ստացված արդյունքները լավ համաձայնվում են իրար: Ըստ Ֆ. Գինգելի աղյուսակների հաշվարկելու դեպքում արդյունքը փոքր ինչ տարբեր է եղել առաջին երկու եղանակներով ստացվածից:

Սակայն, նկատի առնելով այն, որ այդ աղյուսակների կիրառելիության ժամանակահատվածը սահմանափակ է և չի ընդգրկում մեկ հետաքրքրող դարերը, կարելի է դրան վերաբերվել որպես որակական արդյունքի, որը հավաստում է վերլուծական և գծագրական եղանակներով ստացված արդյունքի ճշտությունը:

Պարզվում է, որ նավասարդի մեկը α Հայկի աստղի արեգակնային ամբարձման հետ զուգահեռվել է մ. թ. 560 թ. հուլիսի իննին: Սրան նախորդած հանդիպումները գտնելու համար պարզապես 1460-ական տարի ետ գնալը բավարար չէ: Հարկ է հիշել, որ այդ ընթացքում փոխվում է նաև աստղի արեգակնային ամբարձման օրը: Ուստի դրանց թվականները գտնելու համար նա կատարվել է հաշվարկ վերոհիշյալ եղանակներով: Քննարկվող դարերում աստղի ունեցած դիրքի մասին տվյալները վերցվել են [31]-ից: Համաձայն մեր հաշվումների, նախորդ զուգահեռումները եղել են մ. թ. ա. 2341 թ. հուլիսի չորսին և մ. թ. ա. 893 թ. հուլիսի յոթին¹⁰: Այս թվականները որոշված են չորս տարվա ճշտությամբ, որ պայմանավորված է նահանջ տարիների պարբերությամբ: Այսինքն՝ նշված զուգահեռումը եղել է մ. թ. ա. 2341—2338, մ. թ. ա. 893—890 և մ. թ. 560—563 թվականներին: Անկասկած, 560 թվականը մեր որոնածը չէ, ուստի, սկիզբը գտնելու համար պետք է քննել մյուս երկու թվականները:

(Շարունակելի)

¹⁰ Նույն հաշվարկը β Հայկի և ζ Նաստղի համար անելու դեպքում համապատասխանաբար ստացվում են մ. թ. ա. 2393, մ. թ. ա. 925, 544 և մ. թ. ա. 2481, մ. թ. ա. 1013, 448 թվականները: Ստորև կտեսնենք, որ այս թվականները չեն բավարարում մեր խնդրին (տե՛ս ծանոթ. 18):



ПРОПОВЕДЬ ЕГО СВЯТЕЙШЕСТВО КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН
ВАЗГЕНА I, ПО СЛУЧАЮ СЯГО РОЖДЕСТВА ХРИСТОВА В
КАФЕДРАЛЬНОМ СОБОРЕ 6 ЯНВАРЯ 1985 г.

По случаю сЯго Рождества Христова в кафедральном соборе Эчмнадзина была отслужена торжественная св. литургия. Службу совершил и прочитал проповедь Его СЯтейшество Католикос Всех Армян Вазген I. Ниже приводим краткое содержание проповеди Его СЯтейшества.

«Возлюбленные верующие дети наши!

Проходят годы, века, смятенные поколения следуют друг за другом, человеческая жизнь в постоянном волнении, в вечном движении катится по течению времени, события, вечно сменяясь, нанизываются на горизонте истории, ищущая и творческая мысль человека без конца стремится к вершинам смелых свершений, и над всем этим властно сияет свет Христа, как вечное излучение духа любви, справедливости и мира, придавая духовный смысл и нравственную цель человеческой жизни и истории.

Каждое благовестие сЯго Рождества—это духовное возрождение для верующего, когда он встречается Рождество с мечтой о духовном обновлении, отряхнув человеческие свои слабости и несовершенства.

Итак, возлюбленный верующий наш народ—на земле армянской и рассеянный по всему миру,—с молитвой и духовным песнопением откройте врата ваших сердец и примите с любовью великое благовестие чудесного Рождества Христова.

Дорогие верующие, в свете евангельских заветов подведите итог вашей прошлой жизни, и с облегченной совестью встречайте радостную вест сЯго Рождества как возрожденные души, как «дети света», всегда готовые посвятить себя совершенному добрым и справедливым делам на вашем новом жизненном пути, в вашей личной и общественной жизни.

Для нашей Матери-церкви и для сыновей нашего народа добрым и справедливым делом является также наша заветная молитва за упокой души жертв геноцида 1915 года, великой общенациональной тра-

гедии, 70-летие которой с особой торжественностью должно быть отмечено в этом году 24 апреля, как у нас на Родине, так и по всей армянской диаспоре, в общенациональном единении.


День обращения к святой памяти наших жертв—это день траура, это также день молитв и обета, день укрепления национального единства, с ясным сознанием того, что народ армянский, поправ смертную смерть, за последние десятилетия сотворил новую эру возрождения и расцвета на своей родной земле, у подножия Арарата, даруя жизнь, свет и надежду также своим сыновьям, скитающимся по дорогам мира.


Наша церковь и весь наш народ—в особенности те, кто живет на земле армянской, отмечают 70-летие геноцида в условиях мира и безопасности, с самоутверждающимся национальным сознанием, с новыми достижениями во имя процветания родины, с новым светом созидательного труда, с новыми песнями и новыми надеждами на более ясное и справедливое будущее.

Предать забвению трагедии прошлого значило бы ослабить, затуманить память человечества, значило бы исказить историю, загубить правду, задушить голос справедливости, значило бы проложить дорогу для будущих новых бедствий и преступлений геноцида.

Справедливый суд над преступлениями прошлого, раскрытие истины печальных событий истории, громкое и свободное разглашение слова справедливости—вот крепкий фундамент для построения нового мира, в котором все народы без исключения должны прийти к тому спасительному сознанию, что они дети одного Бога, граждане одной и той же земли людей—под одним небосводом и с единой судьбой. Судьбы людей, судьбы народов, судьбы мира отныне составляют еще более сплоченную сущность, единую необходимость, единое будущее.

В великой семье братских народов пусть свободно и жизнерадостно живут и развиваются наш возрожденный народ и его цветущая родина, пусть идут по пути постоянного созидания и расцвета, с песнями и светом, мирно и счастливо».





THE HOLY CHRISTMASS SERMON OF HIS HOLINESS VASKEN I,
SUPREME PATRIARCH AND CATHOLICOS OF ALL ARMENIANS,
DELIVERED AT ST. ECHMIADZIN CATHEDRAL, 6 JANUARY, 1985.

In the name of the Father, Son and Holy Spirit, amen.

Dear Believers,

Years and centuries go by, generations succeed one another, life, ever agitated, eternally rolls on in the course of time, constantly changing events file past over the horizon of history, man's searching and creative mind endlessly soars towards the summits of courageous achievements, and over all of that there masterfully shines Christ's light as an eternal radiation of love, of a spirit of justice and peace, conveying a spiritual meaning and moral purpose to man's life and history.

Every Holy Christmas tidings is a spiritual rebirth for every believer when he accepts it with yearning for spiritual reform, ridding himself of human weaknesses and imperfections.

So, dear believing people, both in Armenia and the world over, open the gates of your hearts with prayer and carol and tenderly receive the great tidings of Christ's miraculous birth.

You, the beloved faithful, under the light of these evangelical messages make an account of your past life and, as reborn beings, meet the Nativity tidings with a relieved conscience, and as „sons of light“ be always ready to be devoted to the realization of kind and righteous deeds on the path of a new life individually as well as socially.

On the part of our Mother Church and all of the nation's offspring, our sacred prayer is also a kind and righteous act for the spiritual peace of the victims of 1915 Genocide, a national disaster whose seventieth anniversary will especially be solemnly observed this year on the 24th of April with an all-Armenian unity both in our motherland and over the entire expanse of the Armenian Diaspora.


The spiritual invocation of our martyrs' sacred memory is a day of both mourning and prayer and as well as of vow and strengthening of national unity, with shining consciousness that the Armenian people, dealing a mortal blow to death has ushered in a new era of rebirth and prosperity during recent decades on its native land, at the foot of Mount Ararat, inspiring life and hope to its sons and daughters dispersed on the strange roads of foreign lands.


Our church and the entire Armenian people, particularly those residing in Armenia, will observe the seventieth anniversary of the Genocide in conditions of peace and security with a firm national consciousness, with new achievements of national construction, new lights of creative work, new songs and ever new hopes in our bright and just future.

To throw into oblivion the tragedy of the past would mean to weaken and dim the memory of mankind, it would mean to distort history, it would mean to frustrate the truth and choke the voice of justice, it would mean to clear the way for new calamities and genocidal crimes.

The impartial judgment of the tragedies of the past, the exposition of the truth of historical sad events and the loud announcement of the voice of justice constitute the firm foundations for the building of a new world, where the sons and daughters of all nations will, without discrimination, reach salutary consciousness that they are the children of the same God, that they are the citizens of the same human world under the same vault of heaven and all of them have the same fate: the fate of man, the fate of nationality and the fate of the world, especially from now on, constitute one single solidary reality, one single imperative and one single future.


In the great family of fraternal nationalities, let our reborn Armenian people and our vigorous fatherland develop and prosper freely and cheerfully along the road of perpetual construction and flourish with song and sunlight, peace and happiness.






«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(ЯНВАРЬ 1985 г.)

1. Патриаршая проповедь по случаю праздника Святого Рождества Христова, произнесенная в Кафедральном соборе, 6 января 1985 г. (стр. 3—5).
2. Редакционная—Новогодние размышления (стр. 6—7).
3. Постановление Верховного Духовного Совета о назначении кандидата филологических наук, лектора Духовной Академии Ерванда Мелконян ответственным редактором журнала «Эчмиадзин», 11 января 1985 г. (стр. 8).
4. Обмен приветственными телеграммами и посланиями между Католикосом всех армян Вазгеном I и главами братских церквей по случаю праздников Нового года и Святого Рождества Христова (стр. 9—11).
5. Приветственное послание Католикоса всех армян Вазгена I, адресованное трём иерархическим престолом Армянской церкви, епархиальным предстоятелям и церковным общинам по случаю праздников Нового года и Святого Рождества Христова (стр. 12—13).
6. Обмен новогодними приветственными телеграммами между Католикосом всех армян Вазгеном I и высокопоставленными государственными деятелями (стр. 14—17).
7. Визит Его Святейшества Католикоса всех армян Вазгена I председателю Совета Министров Арм. ССР Ф. Саркисян, 14 января 1985 г. (стр. 18).
8. Рождественские торжества в первопрестольном Эчмиадзине, 5—6 января 1985 г. (стр. 19—20).
9. Священник Вартан Мкртчян—Новый год в первопрестольном Эчмиадзине. Патриаршее слово на новогодней вечерней трапезе, 31 декабря 1984 г. (стр. 21—23).
10. Праздник св. Стефана и дпаконское рукоположение в первопрестольном Эчмиадзине, 25 декабря 1984 г. (стр. 24—27).
11. Церковная хроника в первопрестольном Эчмиадзине за январь месяц (стр. 28—29).
12. Вачаган Оганесян—На пороге Нового года (стихотворение)—(стр. 30).
13. Интервью корреспондента журнала «Эчмиадзин» с исследователями армянской архитектуры супругами Жан-Мишель и Никол Тьерри (Франция) (стр. 31—33).
14. Священническое рукоположение в церкви св. Вартана г. Окленда (западная епархия в США), 13—14 октября 1984 г. (стр. 34—36).
15. Новогодние и Рождественские торжества в армянской епархии Ширака (стр. 36).
16. О лекциях, проведенных в армянской школе и в Клубе Армянской Культуры города Монтевидео по программе армянские курсы, история Армянской Церкви и христианства предпринятый наместником предстоятеля армянской общины Уругвая архимандритом Акопом Глинджян (стр. 36).
17. Собрание представителей Западной и Восточной церквей в гор. Карловы Вары Чехословакии, 10—13 декабря 1984 г. (стр. 37—38).
18. А. Ахназарян—Храм первомученика св. Стефана в Атрпатакане (Иран) (исследование)—(стр. 39—41).
19. А. Кёшкерян—«Гандзы» и «тахн» (песнопения) Нерсеса Благодатного (исследование)—(стр. 42—50).
20. Григор Брутян—О некоторых вопросах армянского календаря (исследование) (стр. 51—57).
21. Проповедь Его Святейшества Католикоса всех армян Вазгена I, по случаю Святого Рождества Христова в Кафедральном соборе, 6 января 1985 г. (на русском языке) (стр. 58—59).



"ETCHMIADZIN"
OFFICIAL JOURNAL OF HOLY ETCHMIADZIN
(JANUARY 1985)

1. Patriarchal sermon in the Holy Cathedral, on the occasion of the feast of Holy Christmas, 6th January 1985 (pages 3—5).
2. Editorial—Reflections about New Year (pages 6—7).
3. Information about the decision of the Supreme Spiritual Council concerning the nomination of Mr. Yervand Melkonian, professor of the Spiritual Seminary, as responsible editor of the journal „Etchmiadzin“, 11th January 1985 (page 8).
4. The congratulatory cables and letters exchanged between His Holiness Vasken I and the spiritual heads of the Sister Churches, on the occasion of the New Year and Holy Christmas (pages 9—11).
5. The congratulatory letter of His Holiness written to the three hierarchical Sees of the Armenian Church, all diocesan prelates and church communities, on the occasion of the feasts of New Year and Holy Christmas (pages 12—13).
6. Cables exchanged between His Holiness and statesmen of highrank on the occasion of New Year (pages 14—17).
7. The visit of His Holiness Vasken I, Catholicos of all Armenians, to Mr. Fadey Sarkissian, the president of Ministers' council of the Armenian SSR, 14th January 1985 (page 18).
8. The festivities of Holy Christmas in the Mother See, 5—6th January 1985 (pages 19—20).
9. Father Vardan Mkertchian—The New Year in the Mother See. The speech of His Holiness given on the occasion of the feast of New Year, 31st December 1984 (pages 21—23).
10. The celebration of the feast of St. Stephen and ordination of deacons in the Holy See, 25th December 1984 (pages 24—27).
11. Description of the Divine liturgy services, sermons delivered in the the Holy Cathedral and feasts taken place in the Mother See during the month of January 1985 (pages 28—29).
12. Vachagan Hovhanissian—On the threshold of the New Year (poetry)—(page 30).
13. The interview of the „Etchmiadzin“ journal's correspondent with Mr. & Mrs. Jean-Michel Thierry (from France), eminent specialists in the study of the Armenian architecture (pages 31—33).
14. Ordination of priest in the Holy Vardan church at Oakland (Western diocese of U. S. A.), 13—14th October 1984 (pages 34—36).
15. The festivities of the New Year and Holy Christmas in the Armenian diocese of Shirac (page 36).
16. Information about the lectures of Armenian studies, Christian religion and history of the Armenian school at Montevideo, with the initiative of Rev. Hagop Kelendjian, the Spiritual Pastor of the Armenian diocese of Uruguay (page 36).
17. The consultative meeting of the church representatives of socialist countries and those of Western Europe in Karlovy Vary (Czechoslovakia), 10—13th December 1984 (pages 37—38).
18. A. Haknazarian—The monastery of St. Stephen in Aterpatakan (study)—(pages 39—41).
19. A. Keushkerian—The canticles and the hymns of St. Nerses Shenorhaly (study)—(pages 42—50).
20. Grigor Brootian—About certain questions of the Armenian calendar (study)—(pages 51—57).
21. The Holy Christmas sermon of His Holiness Vasken I, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, delivered at Holy Etchmiadzin Cathedral, 6th January 1985 (pages 60—61).



„ETCHMIADZINE“
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(JANVIER 1985)

1. Homélie de Sa Sainteté Vasken Ier prononcée le 6 janvier 1985 dans la cathédrale de Saint-Etchmiadzine à l'occasion de la fête de la naissance de notre Seigneur Jésus-Christ (pages 3—5).

2. Editorial: Réflexions sur le Nouvel An (pages 6—7).

3. Information sur la décision du Conseil Suprême Spirituel concernant la nomination de M. Yervande Melkonian, professeur au Séminaire de théologie du Saint-Siège d'Etchmiadzine, comme rédacteur en chef de la revue mensuelle „Etchmiadzine“ (page 8).

4. Echange de télégrammes et de lettres de félicitation entre Sa Sainteté Vasken Ier et les chefs spirituels des Eglises soeurs à l'occasion des fêtes de Noël et du Nouvel An (pages 9—11).

5. Lettres de félicitation de Sa Sainteté adressées aux chefs des trois sièges hiérarchiques, aux prélats diocésains et aux communautés religieuses de l'Eglise apostolique arménienne à l'occasion des fêtes de Noël et du Nouvel An (pages 12—13).

6. Echange de télégrammes entre Sa Sainteté et les hautes personnalités d'Etat de la R. S. S. d'Arménie à l'occasion de la fête du Nouvel An (pages 14—17).

7. Visite de Sa Sainteté à M. Fadey Sarkisian, président du Conseil des Ministres de la R. S. S. d'Arménie, le 14 janvier 1985 (page 18).

8. Solennités au Saint-Siège d'Etchmiadzine consacrées à la fête de la sainte Nativité (5—6 Janvier 1985)—(pages 19—20).

9. Père Vartan Mekertchian—Le Nouvel An au Saint-Siège. Discours de Sa Sainteté prononcé le 31 décembre 1984 lors des festivités organisées par les séminaristes à l'occasion du Nouvel An (pages 21—23).

10. Célébration de la fête de saint Etienne et ordination de diacres dans la cathédrale de

Saint-Etchmiadzine (25 décembre 1984)—(pages 24—27).

11. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours du mois de janvier 1985 (pages 28—29).

12. Vatchagan Hovhannissian—„Au seuil du Nouvel An“ (poème)—(page 30).

13. L'interview du correspondant de la revue „Etchmiadzine“ avec M. et Mme Jean-Michel Thierry (de France), chercheurs éminents dans le domaine de l'architecture arménienne (pages 31—33).

14. Ordination de prêtres à Oakland (diocèse des Arméniens de l'U. S. A.—région occidentale) dans l'église arménienne de St. Vartan (13—14 octobre 1984)—(pages 34—35).

15. Festivités dans le diocèse de Chirak à l'occasion des fêtes de Noël et du Nouvel An (page 36).

16. Information concernant l'adoption de l'enseignement de la langue arménienne et de l'histoire de l'Eglise chrétienne à l'école arménienne de Montevideo, sur l'initiative du Père Hakob Kelendjian, pasteur des Arméniens d'Uruguay (page 36).


17. Réunion consultative des représentants des Eglises des pays socialistes et des pays occidentaux tenue à Karlovy Vary (Tchécoslovaquie) du 10 au 13 décembre 1984 (pages 37—38).

18. A. Hakhnazarian—„Le monastère de Saint-Etienne à Aterpatakan“ (étude)—(pages 39—41).

19. A. Keuchkérlian—„Les cantiques et les hymnes de saint Nersès Chenorhalli“ (étude)—(pages 42—50).

20. Grigor Broutian—„Certains problèmes relatifs au calendrier arménien“ (étude)—(pages 51—57).





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայրապետական քարոզ Փրկչի հրաշափառ Սուրբ Ծննդյան տոնի առթիվ Մայր տաճարում	3
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Ամանորյա մտորումներ	6
Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշումը	8
Ամանորի և Փրկչի հրաշափառ Սուրբ Ծննդյան տոնների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր Եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները	9
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Ամանորի և Սուրբ Ծննդյան տոնների առթիվ՝ ուղղված Հայաստանյայց Եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմակալ բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին	12
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական բարձրաստիճան անձնավորությունների միջև փոխանակված հեռագրեր Նոր տարվա առթիվ	14
Ընդունելություն ՀՍՍՀ Մինիստրների խորհրդում	18
Սուրբ Ծննդյան հանդիսությունները Մայր Աթոռում	19
ՎԱՐԴԱՆ ՔՀՆ, ՄԿՐՏՉՅԱՆ—Ամանորը Մայր Աթոռում	21
Սուրբ Ստեփանոսի տունը և սարկավագական ձեռնադրություն Մայր Աթոռում	24
ՄԱՅՐ ԱԹՈՒՌՈՒՄ—Եկեղեցական բեմ, լուրեր	28
ՎԱԶՍԳԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ—Նոր տարվա շնմին	30
«Էջմիածին» ամսագրի թղթակցի հարցալույցը հայ ճարտարապետության ուսումնասիրության երախտավորներ Ժան-Միշել և Նիկոլ Թիերի ամուսինների հետ	31
Լուրեր ԱՄՆ-ի արևմտյան թեմից	34
Նոր տարվա և Ս. Ծննդյան հանդիսություններ Երևանի հայոց թեմում	36
Ողջունելի նախաձեռնություն Ուրուգվայի հայոց թեմում	36
Արևմտյան և Արևելյան Եկեղեցիների ներկայացուցիչների՝ ժողով Կարովի Վարի քաղաքում	37
Ա. ՀԱՆՆԱԶԱՐՅԱՆ—Անդրապատկանի Ս. Ստեփանոս Նախավկայի վանքը	39
Ա. ՔՅՈՇԿԵՐՅԱՆ—Ներսես Շնորհալու գանձերն ու տաղերը	42
ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏՅԱՆ—Հայոց տոմարի որոշ հարցերի մասին	51
Проповедь Его Святейшества Католикоса Всех Армян Вазгена I, по случаю Святого Рождества Христова в Кафедральном соборе 6 января 1985 г.	58
The Holy Christmass Sermon of His Holiness Vasken I, Supreme Patriarch and Catholicos of all Armenians, delivered at St. Etchmiadzin Cathedral, 6 January 1985	60
„Эчмиадзин“ официальный журнал Эчмиадзинского Католикосата	62
„Etchmiadzin“ official journal of Holy Etchmiadzin	63
„Etchmiadzine“ organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine	64

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 24.01.1985 թ.: Ստորագրված է տպագրության 22.02.1985 թ.:

Տպագրական 4 մամուլ, թուղթ՝ 60×84¹/₈, պատվեր 71:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1985 թ.